

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 10
OCTOBRE
1929
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ“

Յարատև կռիւ — յամայն եւ երկար ժամանակ գուցէ անյարգո՛ղ չնայած երբեմն նոյնիսկ լայն ծաւալին — անաթ է ուր է մեր փրկութեան բանալին: Պակպոսեմէ, շարունակե՛ց կոխը, որպէս լայնամայն, ինդարակի և ընդարակելով՝ յարատևի, — սես դէպի մեր նպատակը տամոզ միակ հանապարհը:

ԳՐ. ՄԻՒԿԱՅԷԼԵԱՆ, 1900.

Ահա հինգերորդ շրջանը մեր տօնին, «Դաշնակցութեան Օրը», որ պիտի տօնուի ամէն տեղ, ինչպէս չորս տարի անընդհատ, եւ տարէ է տարի աւելի հասունցած:

Վերջին Ընդհ. Ժողովը հպարտութեամբ արձանագրեց որ, հակառակ բոլոր խոչընդոտներուն, «Դաշնակցութեան Օրը»-ը, լայն արմատներ ձգած է բոլոր գաղութներուն մէջ: 1925-էն ի վեր, ամէն հայաշատ վայրի մէջ կը կատարեն հանդէսներ, մասնակցութեամբ ընկերներու եւ քաղաքացիներու, որոնք պատիւ կը սեպեն տարին գոնէ մէկ անգամ լսել ու վերլուծել յեղափոխութեան փառքը, մեր ազատագրական պայքարին զարհուրելի ելուէջները:

Չարակամներ կան, ի հարկէ, ծաղրելու համար այս տօնն ալ, ինչպէս ամէն գեղեցիկ երեւոյթ, որ կապ ունի մեր հարածական Ժողովուրդի մտքին ու սրտին հետ: Անոնք շա՛տ գոհ են, որ Մուրճն ու Մանգաղը թոյլ չեն տար մեր հայրենիքի մէջ իսկ տօնելու «Դաշնակցութեան Օրը», ինչպէս Ապրիլ 24ը, Մայիս 28ը, կամ Փետրուար 18ը: Բայց անոնք անգոր կատարութեան մը կը մատուցին, միեւնոյն ատեն, տանելով անհամար բազմութիւնները այդ բոլոր տարեդարձներուն առթիւ, օտար արեւորու վրա, Փարիզէն մինչեւ Արժանթին: Անգոր կատարութիւն մանաւանդ անոր համար որ, ոչ միայն բազմազան արպելքներ, այլ եւ կախար-

դական հրապոյրներ չեն պակտեր այս օտար արեւորուն վրա, Փարիզէն մինչեւ Արժանթին, ճամբէն չեղեցնելու համար այդ նոյն բազմութիւնները: Հայրենիքի մէջ կը միա՛ն սիրտերը. այստեղ կը դաւարին ու կը պոռթկան: Այս տօնակատարութեանց առթիւ ալ, մէկուն համար տառապանքը եւ միւսին պատ ճիշդ իրար կը լրացնեն...

Ինչպէս հայրենի գով աղբիւրը երկար եւ տաժանելի ուղեորութեան մը ընթացքին, Դաշնակցութեան Օրն ալ կը կազմէ, մանաւանդ մեզի, տարագիրներու համար, շրջան մը սփոփանքի եւ կազդուրի: Այն քանի մը ժամերը, որ միասին կանցնենք մենք, ամէն տարի այս ամսուն, ընկերներով եւ խանդավառ բազմութիւններով, չեն մոռցներ մեր իրական տագնապն ու տառապանքը, չեն կրճատեր ճամբուն տեւողութիւնը: Բայց, պուտ թը թարմութիւն կը կաթեցնեն մեր սրտին մէջ, շարունակելու ճամբան մոռնոյն յարատեւութեամբ եւ վճռականութեամբ, յուսով տանելու մեր գործը միեւնոյն հետողականութեամբ:

Մնաց որ, սնամէջ ինքնագոյութեան եւ ճամարտակութեան առիթ մը չէ «Դաշնակցութեան Օրը»: Ընդհակառակն, կարելի է նկատել

զայն քննութեան օր մը, անպաշտօն, հանդիսաւոր, ժողովրդական, այլ նոյնքան պատասխանատու: Այստեղ մենք բազմութիւններուն կը ներկայանանք հրապարակաւ պատմելու համար մեր կեանքն ու գործը, ներշնչելու եւ ներշնչելու անոնց բովանդակութեամբ, եւ պարզելու գիծը անցեալէն դէպի ապագան: Մինչեւ անգամ լուսաւորելու ներկան:

Տեսա կամ շարմախ մարդիկ ի զօր կուզեն քարացած ոգի գտնել Դաշնակցութեան մէջ: Եթէ մեր կուսակցութիւնն արատաւորւած ըլլար այդպիսի թերութեամբ, վաղուց մաս պիտի կազմէր պատմութեան: Քարացածներ, կանգ առած իրողեր կը գտնին ամէն հոսանքի մէջ ալ: Դաշնակցութեան բացառիկ արժանիքն այն է որ, ամուր եւ անխարդախ պահելով հիմնական ոգին, յեղափոխական միտքն ու անոր պարտադրած առաքինութիւնները, կը քալէ կեանքի եւ ժամանակի պահանջներուն հետ համընթաց: Եթէ, մինչեւ այսօր ալ, քիչ մը չափազանց խանգաւառութեամբ կը տանւի, օրինակ, իմաստորի արչաւանքը, այդ չի նշանակեր թէ Դաշնակցութիւնը տակաւին անտեղեակ է անոր իսկական տարողութեան, կամ կորսնցողացած է չափի եւ իրականութեան դաղափարը: Յետին դաշնացականն ալ գիտէ որ, Սանատրի պատմութիւնը կը ներկայացնէ մէկ հիմնական իրողութիւն, — առաջին անգամ ըլլաւով, կը կազմէր զինուորական խոշոր խումբ մը, գործ տալու դէպի Երկիր, եւ թափւած արեան վրէժը որոտալու: Ելքը չէ որ երգեր երգել եւ ճառեր խօսել կուտայ, այլ երեւոյթը, իրողութիւնը, — ամէն տեսակէտով բացառիկ՝ ա՛յն օրւան պայմաններուն մէջ (1897): Եւ քանի որ, այսօր իսկ, կռիւ է Դաշնակցութեան ուղեգիծը — կռիւ՝ գաղափարական գործունէութեամբ եւ ի հարկին զէնքով — բնականաբար, Սանատրները պիտի գտնեն ուժգին արձագանգ՝ երիտասարդութեան սրտին մէջ:

Արդարեւ, — «Յարատեւ կռիւ — յաճախ եւ երկար ժամանակ գուցէ անյաջող՝ չնայած երբեմն նոյն իսկ իր լայն ծաւալին — ահա թէ ո՛ր է մեր փրկութեան բանալին»:

Եւ ահա թէ ո՛ր է իմաստը մեր բոլոր շարժումներուն, օրւան հոգերէն մինչեւ տօնակատարութիւնները:

Մենք հրաշքներ չենք խոստացած, եւ չպիտի խոստանանք, մանաւանդ, հանդիսաւոր առիթներու մէջ, տարւելով արբող ոգեւորութենէն: Մեր գործերն են որ պիտի խօսին մեզի համար, եւ գիտակցօրէն մեզի հետ կապելով

բազմութիւնները, ոյժ պիտի տան շարունակելու ճամբան, մինչեւ վերջնական ազատագրումը այս հալածական ժողովուրդին: Մենք պիտի չծածկենք ինչ որ ուղիւր ու կրցիւր ենք իրականացնել, կամ ինչ որ վեր է եղիւր մեր ուժերէն: Եւ եթէ յաճախ մեր կուրծքերը կուրին արդար հպարտութեամբ, այդ պատիւը նորէն կիշայ այս միևնույն ժողովուրդին, որ ծնունդ տւաւ Հ. Յ. Դաշնակցութեան եւ կը հաւատայ անոր ուժին:

Գործի թէ ուրախութեան մէջ, մեր գիծը պիտի ըլլայ շեշտակի նայիլ բուն իրականութեան, եւ մեր անասան ինքնապատահութեամբ եւ վճռակալութեամբ վարակել չըջապատը:

Ա՛յս կը սպասեն մեզէ՛ ե՛ւ Երկիրը, որ կը հեւայ մթութեան եւ գերութեան մէջ, ե՛ւ տարապէր բազմութիւնները, որոնք արմատէն կտրւած եւ թաղարներու մէջ նետւած, անձկութեամբ կը համրեն օտարութեան ժամերը:

Ծրագիր ունինք եւ որոշումներ: Գործելու կամք եւ ճամբայ: Անոնք որ պիտի գան Դաշնակցութեան Օրը տօնելու մեզի հետ, յարգելու ազատագրութեան բոլոր ռազմիկներն անխտիր, եւ արբենալու պայքարի եւ յողթանակի յուզումներով, թող աւելի եւ աւելի ճանչնան մեզ:

Դաշնակցութեան Օրը՝ ազատութեան եւ աշխատանքի կարօտի ճիշն է, որ կը հնչէ երկրէ երկիր, յեղափոխութեան սարսուռը կաթեցնելով սիրտներու մէջ:

Ու միանգամայն գնահատման օրը կատարւած Գործին, որ կը մնայ կիսաւարտ:

Այսօր ալ — ինչպէս երէկ եւ ինչպէս վաղը — մեր ձգտումներու հիմքը կը մնայ՝ Միացեալ եւ Անկախ Հայաստանը:

Հայաստանի ստեղծմանը ընդարձակումը. հայ ժողովուրդէն բռնի կերպով խլւած Ախալքալաքի, Ղարաբաղի, Եսարու-Նախիջեւանի վերադարձը Հայաստանին:

Բանալ Հայաստանի դուռները եւ ամէն կարելի դիրքերը ցոյց տալ պանդուխտ բազմութիւնները մաս-մաս Հայաստան փոխադրելու: Աջակցութիւն Երկրի վերաշինութեան եւ զարգացման:

Աջակցութիւն տարագիր բազմութիւններու տեղաւորման, անոնց տնտեսական եւ մտաւոր պահանջներու գոհացման:

Վե՛րջ խորակած քաղաքականութեան Հայաստանի հանդէպ. Հայաստանը պէտք է ունենայ հաւասար դիրք Անդրկովկասի միւս հանրապետութիւններու մէջ:



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

(1859 — 1905)

Այս տարի լրացաւ Քրիստափորի ծննդեան եօթանասնամեակը :

Հ. Յ. Դաշնակցութեան Հիմնադրի, ինչպէս և, առհասարակ, հայ յեղափոխականների կեանքը շատ քիչ է ծանօթ մեր հասարակութեան: Հայ յեղափոխականի առաջինութիւնը միշտ եղել է համեստութիւնը. գործել անաղմուկ և զոհել ժողովրդի համար. նրա ետը, անձնական կեանքը մնացել է ծածկւած դրսի աչքերից: Գործի ընթացքում ո՛վ կարող էր մտածել նրա յիշատակի յաւերժացման մասին:

Ի՞նչ դիտենք մենք մեր կուսակցութեան Հիմնադիրների կեանքից: Քրիստափորի, Զաւարեանի և, մանաւանդ, Ռոստոմի կեանքն ու գործունէութիւնը զբերթէ անյայտ են մեր ընկերների լայն շարքերին, այն ինչ որքան իրատական, ի՞նչ ուսանելի օրինակներ կան նրանց մէջ. նոր սերնդի դաստիարակութեան ի՞նչ հօգ միջոց է այդ կեանքը: Մանաւանդ, Քրիստափորի կեանքը:

Քրիստափորը ծնւել էր Վերին Ազուլխում, 1859 թ.ին: Զբաւոր ծնողների գաւակ էր և փոքր հասակից՝ որբ: Մանկութիւնից արդէն ճաշակել էր կանգրի դառնութիւնները:

Գիւղական դպրոցն աւարտելուց յետոյ, նրան յաշտուեց մտնել Թիֆլիսի Ուսուցչական Ճեմարանը, ուր և ստացաւ առաջին յեղափոխական մկրտութիւնը: Թիֆլիսում այդ ժամանակ կային հռչակաւոր «Նարոդնայա Վոլեա»-ի միջազգային խմբերը. Քրիստափորը դարձաւ նրանց գործնականում: Պարապում էր ինքնագրագացումով, կարդում էր յեղափոխական գրականութիւն, ուսումնասիրում էր ընկերվարական պատմութիւնն ու տեսական հարցերը:

Աւարտելուց յետոյ, 1880-ին, գնում է Հայրենի գիւղը ուսուցչութան պաշտօնով: Այստեղ պայմանները ուրիշ էին. Թիֆլիսի «միջազգայնական»-ը Հայկական միջկալարում համակուծ է ազգային դադափարներով, և երբ 1881-ի ամառը, գալիս է Թիֆլիս, իր հայ ու վրացի ընկերներին առաջարկում է ստեղծել «ազգային կազմակերպութիւններ»: Առաջարկը չի ընդունում, բայց մի տարի յետոյ, 1882-ին, Թիֆլիսում արդէն առաջ են գալիս ազգային խմբեր ճանախատ հայ ժողովրդի ազգային շահերին ներկելու համար: 1883 թ.ին Թիֆլիսում զոյութիւն ունէր բաւական գործունէայ մի խումբ, որ ա) պարապում էր ինքնագրագացումով, բ) հրատարակում էր թուրքիկ թերթեր, գ)

ընկերներ էր ուղարկում Թիւրքիա ուսումնասիրութեան նպատակով: 1884-ին այս խմբի անդամները «Միութիւն Հայրենասիրաց» կազմակերպութեան անունով սկսում են հրատարակել «Ազատութեան Աւետարեք» զազանի շաբաթաթերթը՝ ներած Թիւրքահայաստանի ազատագրութեան գործին:

Երբ 1884-ի աշնան Քրիստափորը նորից գալիս է Թիֆլիս, այս կազմակերպութիւնն արդէն սկսել էր քայքայուել: Կա հասարակ է նրա բեկորները՝ մշեցի բանւորների մի խմբակ և մի ամբողջ տարի պարագում է նրանց հետ, սովորեցնում է տարբական դրագիտութիւն և դիւնավարութիւն: Այս խմբից դուրս եկան Նոյակատր Արարոն, Մարգար վարժապետը և ուրիշ յեղափոխականներ:

1885-ի սկզբին ուսուկառավարութիւնը փակեց հայկական դպրոցները — 400 դպրոցի դռներ բացեցին, 20,000 աշակերտ և 2000 ուսուցիչ փողոց նետուցին: Քրիստափորը և ընկերները այս առթիւ բողոքի թուուցիկ հրատարակեցին, բայց հայ հասարակութիւնը մնաց անշարժ: Զայրոյթի օրը դեռ չէր հասել:

1885 թ. աշնանից մինչև 1887 թ. ամառը Քրիստափորը Մոսկուայում է, ապա ունկնդիր համալսարանում: Այստեղ ամբողջապէս ներկուում է գիտութեան, տեսական ինչպիսիքների ուսումնասիրութեան: Միաժամանակ գործած մասնակցութիւն ունի հայ ուսանողական կեանքում: Մոսկուայի ու Պետրոգրադի այն ժամանակայն ուսանողութիւնը բաժանւած էր երկու հոսանքի՝ ազատամտիկների կամ «կոստոպոլիտներ» և ազգայիններ կամ «չոլիներ»-ը: Քրիստափորը պատկանում էր առաջին հոսանքին, ինչպէս և յետոյ Սիմօն Զաւարեանն ու Ռոստոմը:

1887-ին Քրիստափորը վերադառնում է Թիֆլիս և ոտքով-գլխով նետուում է յեղափոխական-կազմակերպական աշխատանքի մէջ: «Միութիւն Հայրենասիրաց»ը այլևս չկար: Հարկաւոր էր ամէն բան նորից սկսել: Այստեղ էր և Ռոստոմը, որի հետ փորձում են հիմնել գաղտնի տպարան, բայց դրամ չեն կարողանում ձարել: Իրենք էլ հազիւ գոյութիւն էին պահում կոպէկանոց դասերով: Կովկասի հայութիւնը պարում էր գաղափարական խմորումների օրեր. ամէն տեղ ծնւում էին բազմաթիւ խմբեր — Թիֆլիս, Երևան, Բագու, Շուշի և այլուր: Ամենքի աչքերը յառած են որդւոր սահմանի միւս կողմը: Թիւրքահայկական հարցին էր ամենքի գրադումի առարկան: 1889-ի ձմեռը սկսւում է զգացւել այս խմբերի միութեան և ընդհանուր ծրագրի ու կանոնադրի անհրաժեշտութիւնը: Առաջ է գալիս «Ներքուստար»ը Հայաստան» կազմակերպութիւնը, որ յետոյ ստանում է «Նւթիներբայի խմբակ» անունը: Սրա պահանջների հիմքն էր Թիւրքահայաստանի քաղաքական ու տնտեսական ազատութիւնը: 1890-ին այս կազմակերպութեան կողմից Թիւրքահայաստան են գնում Մ. Մարգարեանը և Յ. Արղւութեանը: Նոյն թիւականներ տեղի է ունենում և իզրոյթի ցոյցը, որ անկարագրելի խանդավառութիւն է առաջ բերում Կովկասում. «Ձայնը հնչեց իզրոյթի հայոց լեռներից»... Առաջին անգամն էր, որ հայը կազմակերպւած դիմադրում էր Թիւրք համալսարանին. առաջին անգամ էր ազատութեան համար արիւն հոսում: Երրորդական մասունքն ու

դիւանագիտութիւնը ուղարկութիւն դարձրին այս դէպքին: Կովկասը ցնծութեան մէջ էր. Հայաստանի ազատութիւնը համարում էր մտաւարտ:

Այս դէպքերի տպաւորութեան տակ 1890-ին Թիֆլիսում գումարում է «Ներքուստար»ը Հայաստան»-ի դանազան խմբերի և Հայաստանից վերադարձած ընկերների մի ընդհանուր ժողով, որի ոգին Քրիստափորն էր: Մոտեցն է առնուել Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը: 1891-ից սկսւում է հրատարակել «Իրօչակ»-ը, իսկ 1892-ին լոյս է տեսնում Հ. Յ. Դաշնակցութեան անդամիկ ծրագիրը, որի հեղինակներն էին, գլխաւորապէս, Քրիստափորն ու Զաւարեանը և որը հաստատել էր Հ. Յ. Դ. Առաջին Ընդհ. ժողովում, նոյն թիւականին:

Դաշնակցութեան առաջին ձեռնարկներից մէկն էր Կուրուքանի խմբի արշաւանքը, որը զոհ զնաց ուսուկառավարութեան վայրագութեան: Այնքանոր երրորդի խաւար առեկցիկի օրեր էին. յեղափոխական շարժումները ուղեւած էին ոչ միայն Ռուսաստանում, այլ և սահմանի միւս կողմը: Հայ մտաւորականութիւնն էլ յայտարարում է անբարեյոյս: Հետզհետ սկսւում են ձերբակալութիւններ. 1893-ին ձերբակալւում է և Քրիստափորը և աջորւում «Բիշինե», ուր մնաց ամբողջ մի տարի և կազմակերպեց «Իրօչակ»-ի հրատարակութեան տեղափոխութիւնը Ռուսաստան:

Մի տարի յետոյ վերադառնում է Թիֆլիս և 1893թ. ապրիլից սկսած ստանձնում է «Նովոյէ Օբզորենիյէ» ազատական թերթի սրբագրիչի պաշտօնը: Իր ամբողջ ազատ ժամանակը ներկում է Դաշնակցութեան. Զաւարեանի հետ միասին վարում է Արևելեան Բիւրօի գործերը, մինչ Ռոստոմը Արևմտեան Բիւրօի մէջ էր և խմբագրում էր նաև «Իրօչակ»-ը Ժընևում:

1895-ին, Թիւրքայում տեղի ունեցող դէպքերի վրա, ուսուկառավարութիւնը Կովկասում դիմեց նոր խտրութիւնների: Հոկտ. 24-ին, շատերի հետ, նորից ձերբակալեց և Քրիստափորը ու հինգ ամիս Բագու բանտում պահելուց յետոյ, 1896թ. մարտ 23-ին ազատ թողնեց 2000ր. զրուսկանով և Թիֆլիսից չհեռանալու պայմանով:

1895-96-ի կոտորածներին յաջորդեցին յուսալքման ու ծանր ոճակցիայի օրեր. հայկական շրջանները ընկճւած՝ զննադատում էին յեղափոխականներին: Եւրոպայան անտարբեր էր դէպի Թիւրքահայոց հառաչանքները: Խնամադրի արշաւանքը որոշ չափով բարձրացրեց հայերի տրամադրութիւնը, բայց վհատութիւնը շատ մեծ էր: Քրիստափորը ծրագրեց անցնել Եւրոպա՝ կազմակերպելու համար արտասահմանեան պրոպագանդը: Հ. Յ. Դ. Երկրորդ Ընդհանուր ժողովը 1898-ին հասանութիւն տեց նրա ծրագրին, և 1898 թ.ի վերջերին նա այլևս ժընևում էր, ուր նրա առաջ բացւում էր գործունէութեան մի նոր ու լայն ասպարէզ:

Ժընևում Քրիստափորը իր ձեռքն է առնում Արևմտեան Բիւրօի գլխավարութիւնը, ինչպէս նաև «Իրօչակ»-ի խմբագրութիւնը: Մինչև 1899թ. նոյնիսկի կէսը նրա անմիջական օգնականն է Ա. Վուսանը: Քրիստափորը հիմքից վերափոխում է եւրոպական պրոպագանդը. նա ահապէս նշանակութիւն էր տալիս դիւանագիտութեան. հայկական հարցի լուծումը համա-

րում էր նրանից կախած: Յեկափոխական գործունէութիւնը, երկրի ներքին կազմակերպութիւնն ու շարժումները նպատակ պէտք է ունենան պետութիւնների միջամտութիւնը ստաջ բերել — այս էր Քրիստափորի հիմնական միտքը, և այս մտքի շուրջն էին պտտում նրա զպացած ձեւնարկները: «Ամբոխային Տրամարանութեան» մէջ նա հետեւեալ ձևով էր բնորոշում հայկական շարժման նպատակը. «Կարգապահութեան ու բնի ուժով կուել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դէմ, մինչև որ վեց պետութիւնների երաշխաւորած միջամտութեամբ այդ կարգերը զէպի լաւը կը փոխեն»:

Այդ նպատակով էր, որ նա զլուս բերեց կաթուղիկապական պատմիկականութեան աստուծը՝ Լաճէի իրապարտութեան վեհամարմինը 1899-ին: Այն նպատակով էր, որ Եւրոպայի գանազան կենտրոններում ստեղծուած էին հայասիրական կոմիտէներ, ժողովներ էին գումարուած, բանաձևեր քէպարելուած, դասախօսութիւններ կազմակերպուած, խորհրդարաններում հարցապարտումներ պարուած, մամուլի մէջ հայանպատա յղուածներ Երևան գլխիս, զբեր էին լոյս տեսնուած: Եւրոպական պրոպագանդի գործը վարուած էր Թ. Լոբին-Միլեքիանը Քրիստափորի անմիջական հսկողութեան տակ: Այդ նպատակով էր, որ 1900թ. նոյեմբերին, Պրիտ Քիլիստի իմրազրուութեան և Անաթոլի Ծրանսի, Պրէսանսէի, Կլեմանսոյի և ուրիշների աշխատակցութեամբ սկսեց լոյս տեսնել Ֆրանսերէն «Պրո Արմենիան»: Անկարելի է նկարագրել Քրիստափորի ուրախութիւնը, երբ նա ստացաւ «Պրո Արմենիա»-յի առաջին համարը: Նա շտապեց յայտնել «Պրո Արմենիա»-յի իմրազրուութեան իր անասհման ուրախութիւնը. «Մենք համարեաւ հարբած էինք թերթը ստանալու առաջին օրերը, զրում է նա Արեւմ. Բիւրօի կողմից: Մեր ուրախութիւնն այնքան մեծ է եղել, որ թերթը ձեռքներս առնելով առաջին անգամ՝ համբուրել ենք համարը»:

1900-ին «Դրօշակ»-ում սկսան լոյս տեսնել Քրիստափորի «Ամբոխային Տրամարանութիւնը» յօլածանը, որոնք յետոյ ամփոփւեցին առանձին զբոյ մէջ: Հրատարակախօսական ո՛չ մի երկ մեզ մօտ այնպիսի ուժեղ տպաւորութիւն չի գործել հասարակական մտքերի վրա, որքան այս գրուածքը: Հայ երիտասարդութիւնը յայնչտակած էր նրանով, կարողու էր աղահուլութեամբ: Եւ, իրօք, հայոց հրապարակաւորութեան մէջ գլուար է ցոյց տալ ուրիշ նոյնարթէք մի գրուածք, թերեւ միայն Մ. Նալբանդեանի «Երկրազորութիւնը Որպէս Ուղիղ Ճանապարհ»: Բայց Նալբանդեանի աշխատութիւնը «Ամբոխային Տրամարանութիւնը» թողած ազդեցութեան մի հարիւրերորդ մասն իսկ չունցաւ շնորհիւ այն ժամանակաւ հայ հասարակութեան մտաւոր յետամնացութեան և, մանաւնդ, գրաքննական պայմանների:

Նոյն 1900-ին լրացաւ Հ. Յ. Դաւանկցութեան տասնամեակը: Աճէի կողմից առաջարկուած էին սօսել այդ տարեդարձը, մի տեսակ յօբեխանի վերածել: Քրիստափորը վճռական կերպով հակառակեց: Այդ առթիւ նա գրում էր Ռոստոմին. «Հայկական կեանքի տասնամեակ այնցեալը այնքան տխուր է, որ մեր անելիքները չպէտք է հակասեն այն ընդհանուր սուզին,

որի մէջ պէտք է գգան իրենց՝ համայն հայ ժողովրդի հետ, նաև յեկափոխական մարմինները»:

Ի՞նչ հանդէս, ի՞նչ յօբեխան. ի՞նչ իրաւունք ունի հայ գործիչը ուրախանալու, յօբեխաններ կատարելու, երբ համայն աղբը սուղի մէջ է:

1901-ին «Դրօշակ»-ում լոյս տեսան նրա «Պատմական Չարիք»-ը և «Հայ-Քրդական Յարաբերութիւնները» յօլածանները, 1903-ին՝ «Կովկասահայ Տագնապը»: Այդ յօլածանները «Ամբոխային Տրամարանութեան» հետ կազմում են մեր յեկափոխական դրակախութեան ամենաչեղ էջերը:

1904-ին, Հ. Յ. Դ. Երրորդ Ընդհանուր ժողովը Սոֆիայում գծեց ցուցական գործունէութեան մի մեծ ծրագիր. որոշեց նաև սպանել Երզրդիի Տիւաղին: Այդ գործի ղեկավարութիւնը, իր իսկ պնդումով, ժողովը յանձնեց Քրիստափորին: Եղան մարտիկ, որոնք բուռն կերպով բողոքեցին այդ որոշման դէմ. յանցանք էին համարում կուսակցութեան ղեկավարին նման վտանգաւոր գործի ղեկը: Ընդհանուր ժողովը, ինչպէս և Քրիստափորը ինքը, մնացին անդպուելի իրենց որոշման վրա:

Իրեն յատուկ թափով ու կազմակերպական տաղանդով Քրիստափորը ձեռնարկեց գործի: Աւալ, սակայն, նրան վիճակուած չէր այդ գործը հասցնելու իր վախճանին. 1905թ. մարտ 20-ին, Սոֆիայի մօտ, Վլիթոյի լանջին, ուսմբի փորձ կատարելու ժամանակ, նա զոհ գնաց պայթիւնի: Նրա հետ ընկաւ և իր գործակից երիտասարդ Վուստ Բենդերեանը...

Քրիստափորի մահը մի անփոխարինելի կորուստ էր Հ. Յ. Դաւանկցութեան համար: Նրա տեղը մինչև վերջ էլ մնաց բաց:

Քրիստափորի մահով ծանր կորուստ ունեցաւ և, առհասարակ, հայ կեանքն ու մտաւորականութիւնը: Հայկական մտքի զարդացման պատմութեան մէջ Քրիստափորը ամենախոշոր գէմբերից մէկն է Նալբանդեանից և Արծրունուց յետոյ:

Քրիստափորի թողած զրական ժառանգութիւնը մեծ չէ բանակով, բայց որակով թանկարժէք: Ինչպէս ստացինք, նրա «Ամբոխային Տրամարանութիւնը» եղակի երևոյթ է հայ իրակախութեան մէջ: Անհրաժեշտ է անպայման, որ իւրաքանչիւր դաշնակցական, աւելին՝ ամէն հայ մտաւորական կարգաւ այդ կուս տրամարանութեամբ շաղախուած և զարմանալի լաւատեսութեամբ ու հաստուղ ներշնչուած լինըրը: Հոյակապ է, մանաւնդ, նրա վերջաւորութիւնը:

«Այո՛, զրում է Քրիստափորը, անցեալի կորուստները ճնշում, ճմլում են մեր սրտերն ու մտքերը, բայց չմանենք թողութիւնիստի ախի հերոսին, որը կուի միջոցին փոխանակի իր հակառակորդի հարածներին դիմադրելու, փոխանակ աշխատելու նրա մարմնի ամենազգալուն կէտերին հարածներ տեղալու, ձեռքերը սեղմում էր մարմնի այն տեղերին, ուր ընկնում էին հակառակորդի հարածները: Կասուած չկայ, որ այդպիսի մի ընթացք մեզ կը տանէր միայն դէպի անպայման կորուստ, այն ինչ՝ յարատեւ կուրը դեռ շատ բան կարող է խոտառնալ մեզ: Եւ ո՞վ զիտէ, թէ ինչ գոյնով պիտի լուսարանեն աշտուրայ մեր կորուսանները 50-100 տարուց յետոյ, երբ դրանք կը կապեն հետևողական

նութեամբ՝ մեր կեանքում տեղի ունենալիք յետագայ երևոյթիներէ հետ: Ո՛ր ազգը արդեօք — երբեմն ստորուկ, իսկ այժմ ազատ — չէ մտռացել իր կրած գարհուրելի կորուստները: Ո՛րը արդեօք զրանցից կը փոխէր այսօրւայ իր ազատութիւնը նախկին վիճակի հետ և անցեալ կեանքի այնպիսի մի ընթացքի հետ, ուր ոչ մի գոհողութիւն, ոչ մի աւերում չլինէր կատարւած: «Չկայ մարդկութեան համար աւելի գեղեցիկ յոյս, քան մի ճնշւած ազգի յարութիւն առնելը» — ստիպւած է եղել խոստովանել նոյնիսկ այնպիսի մի հրէշ, որպէսին էր Դիզրայէլի:

Յարատև կռիւ — յաճախ և երկար ժամանակ

զուցէ անաջող՝ շնայած երբեմն նոյնիսկ իր լայն ծաւալին, — ահա թէ ուր է մեր փրկութեան բանալին: Պահպանենք, շարունակենք կռիւը, որպէսզի լայնանայ, ընդարձակուի և ընդարձակելով՝ յարատևի — ահա դէպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը: Չլեղենք այդ ճանապարհից, որ պատճառների և հետևանքների կապակցութեամբ ունի պատմութեան մէջ հաստատւած օրէնքի ուժ. չլեղենք այդ միակ ճանապարհից, որ սփռւած է յուսատու ապագայի դրաւիչ ծաղիկներով...:

Ս. Վ.

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԱՏՔԵՐԻՑ

(Քաղւած իր գրածքներից)

Պատելով թիւքական կոտորածների պատճառների մասին՝ Քրիստոսփորը իր «Ամբոխային Տրամաբանութեան» մէջ հարցնում է. «Ի՞նչ մաս ունէին այդ պատճառների մէջ հայ յեղափոխականները, որոնց մեղադրում է այսօր ամբոխային տրամաբանութիւնը»:

Եւ պատասխանում է. «Հայ յեղափոխականները ոչ միայն մաս չունին կոտորածների այդ իսկական պատճառներում, այլ և — խորին համոզմունքով պնդում ենք — նրանք իրենք, սմբողջ հայ յեղափոխական շարժումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյնպէս մի անհրաժեշտ քնական հետևանք միևնոյն տնտեսական ու պատմական-քաղաքական պատճառների»:

«Այն բոլոր դանգատները, որոնք այսօր ծանրանում են յեղափոխական շարժման կամ ձեռնարկների վրա, իբրև կոտորածների պատճառ կամ առիթ — իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբանութեանը յատուկ խառնիճազանճ ճիշեր, որոնք անխուսափելի են դառնում, երբ մարդիկ կամ անընդունակ են ըմբռնելու այդ շարժման ամբողջ նպատակայարմարութիւնը և կամ դադարիար շունին նրա զարգացման համար անհրաժեշտ պայմանների մասին»:

«Հայկական շարժումը ոչ միայն անխուսափելի էր, որովհետև այդ էր սահանջում «իբրերի կացութիւնը», ոչ միայն իրաւացի էր, որովհետև ունէր ազգ սպարաաւոր չէ անպատճառ հաշուել «ամենադատան ստրկութեան» հետ կամ մնալ «անարդէ կացութեան» մէջ, ոչ միայն շատ ևսակամայի էր, որովհետև «սարքորնակ» կը լինէր դրա փոխարէն տեսնել ուրիշ երևոյթ. ոչ միայն նպատակայարմար էր, որովհետև հարցը «առանց ապատմութիւն» չէր կարող իր դրութիւնը բարւոքել, — այլ և միանգամայն պատուաբեր երևոյթ էր, որովհետև

միմիայն «հարկերի բաժանումը բաւական էր հայերին ապտամբեցնելու համար», այլ և միանգամայն պատուաբեր երևոյթ էր, որովհետև նա ապացուցանում է, թէ հայերի մէջ դեռ չեն մարել ճարտարապետականութեան» քնազդները, վերջապէս, այսօր նա սրբագրւած մի դատ է, որովհետև ունի իր բազմաթիւ ճշահատակները. — դժբախտ ժողովրդի բարօրութեան զաղափարի համար գոհւած նահատակները»: (Չակերտի մէջ առնւածը նշանաւոր եւրոպացիների ասած խօսքերն են հայերի մասին):

«Ընդհանուր ազգային դժբախտութեան ժամանակ մարդկային կորուստների, մարդկային կոտորածների հետ անմիջապէս կապւում են նաև մտքերի անխնայ կոտորածները»:

«Հազարաւոր նիւթապէս ապահով հայեր շնդկատան, Անգլիա, Ամերիկա, Աֆրիկա, Չինաստան են գնում ու գիտէ ինչ դժոխային միջոցներով՝ իրենց ունեցածը աւելացնելու համար, բայց ոչ մէկը չպտանց, որ այսպիսի մի անսովոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժւէր հասարակագոյուս ունէ ձեռնարկի համար: Եւ այս ոչ միայն հին սերնդի ներկայացուցիչներն էին, այլ և երիտասարդ դարձաւորների շրջանում, որոնք ունին և՛ ուսում, և՛ գարգացում ու երբ սկսում են խօսել հասարակական դրոժունութեան և ժողովրդի շահերին ծառայելու անհրաժեշտութեան վրա, Գլախտոններ ու Լասալներ պէտք է գերեզմաններից կանչան նրանց հետ մրցելու համար...»

Քաղաքակիրթ աշխարհում է՛լ ժողովուրդ չմնաց, որ այս կամ այն չափով արձագանք չտար հայկական թշւառ վիճակին... Անդլիացիք, Փրանսիացիք, հռչանդացիք, ամերիկացիք, գերմանացիք, նոյնիսկ գերմանացիք հայերին օգնութեան ձեռք մեկնեցին — երկրի մէջ հայ ժողովուրդին դրամ, հաց և երկրագործական անասուններ բաժանելու կամ որբացած մանուկներին խնամելու և կրթութիւն տալու համար: Իսկ ի՞նչ արին իրենք հայերը: Մենք ունենք հաղարարու հայեր, որոնցից իւրաքանչիւրը կարող էր նոյնքան մարդ կերակրել, նոյնքան որբանոցներ հիմնել, որքան այդ արեց մի քանի՛ ազգերից ժողովւած դրամներով, բայց դուրս եկա՞ւ այդպիսի մէկը»:

«Ներկայիս ժողովրդական մի երգ այս խօսքերն է պարունակում. «Բորենին խնայում է կեանքը և միայն դիակներ է հանում գերեզմաններից, իսկ փաշան երիտասարդներն արեւն է խմում... Անիծիւհ հօգորը, որ դու՞ չունի»:

Ովքե՞ր են քրդերի համար այդ զգու՞թ չունեցող հօգորները» — Թիւրքե՞րը, Ռուսե՞րը, Թէ՛ հայերը... Անկարելի է, որ քրդերի մէջ չգտնեն իրենց դրութիւնը բաւականաչափ գիտակցող պետեր, որոնք չկարողանան այս հարցին պատասխանել այն ձևով, որը համապատասխանում է իրենց և մեր փոխադարձ շահերին:

Բայց և մենք՝ հայերս պէտք է շանանք այդ գիտակցութիւնը նրանց ներշնչել: Միայն դրա համար մենք չունենք ուրիշ միջոց, քան մեր սեփական ուժերը հարստացնելու և կեանքի օրինակներով ապացուցանելու, որ մենք ընդունակ ենք պաշտպանել մեր և շատ անգամ նաև մեր հարևանների շահերը: Կունենանք այդ ուժը, կունենանք և ջերդ դաշնակիցներ: Հակառակ դէպքում հայերը աւելի ձեռնտու պիտի մնան քրդերի համար իրրև հարստահարութիւնների և թալանի

ատարկայ, քան իրրև դինակիցներ ընդհանուր թշնամիների դէմ»:

«Եթէ իրաւունքը իր պաշտպանութեան համար կուի է պահանջում, հապա կուիւր իր յաղթանակի համար նեցուկ պիտի ունենայ ուժը: Ուժն է, որ կտաւ վարում է աշխարհս, և մենք ձեռք կը բերենք՝ մեր ուղածները, երբ ոյժ կունենանք»:

«Ժամանակ է, վերջապէս, որ ներկայ մահաշունչ կացութեան դիմաց, երբ տանկահայկական կոտորածներից յետոյ, դուք է, դստնում ենք կովկասահայկական կոտորածների նախորակին, կուելու անդրդելի վճռականութիւնը և իրար խառնելու, իրար հետ միանալու, իրօք մի ամբողջութիւն կազմելու միահամուռ, միահողի պահանջը մեր ընդհանուր ճշմարտամը դառնայ: Պատուել է հարկաւոր քարտէզների վրա այս կամ այն աւազակապետի կամ ըով դժւած սահմանները, ջնջել է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տողորւած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաև կուելու անասան վճռադակամութիւն և կապւած, միացած է դարերով սնւած ու պահպանւած ընդհանուր բնադրների ու զգացմունքների ատողը զարկերակով:

Համարձակութիւն դահակալ խրտուրակների և նրանց չրջապատող, նրանց գործակից բոլոր դահիճների ու անբան ստրուկների դիմաց»...



ԳՐԻՍՏԱՓՈՐԸ «ԴՐՕՇԱԿ»-Ի ԽՄԻԱԳՐԱՏԱՆԸ. ԿԱՆՌԱՍԸ ԱԿՏՈՒՆՆԵ Ե:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆԻ ՄԱՅՐ

Յեղափոխական կուսակցութիւնները յանուն սխալ, միակողմանի հասկացած յեղափոխականութեան յաճախ գոհեր են տալիս՝ գործի տեսակէտից ոչ միայն անօգուտ, այլ և վնասակար:

Դաշնակցութեան մէջ բոլոր ընկերները, շատ քիչ բացառութեամբ, աւելի կամ պակաս չափով, վարակւած էին այդ մտայնութեամբ, մասնաւոր գործունէութեան սկզբի տարիներին աւելի սուր կերպարանք էր ստացել այդ հիւանդոտ հոգեբանութիւնը: Քրիստափորը գոհ գնաց մասամբ այդ հոգեբանութեան՝ ներշնչելով նաև «Նարողնայա Վոլեա» ուսումնական կազմակերպութիւնից, ուր դիւթող էր այդ հոգեբանութիւնը: Իսկական յեղափոխական համարում էր ամենից առաջ այն ընկերը, որը դաշտնը, ատրճանակը, հրացանը կամ ուսմբը ձեռքին կուէի էր դուրս եկել տիրող կարգերի դէմ և ապա նա «ով անցել էր «երկիր», Տաճկահայաստան»: Իսկ մնացած կուսակցականները, բոլորը համարում էին կիսով չափ յեղափոխական, աւելի շուտ սիրողներ: Առաջրութիւն քիչ էր դարձում, թէ այդ բմբոսը լաւ գէնք գործածել գիտէ՞, կամ գէնքը տեղին ու ժամանակին է գործածել և կամ որքա՞ն ժամանակ է եղել երկրում և ի՞նչ կարեւոր գործ է կատարել: Կը բաւեր, որ եղել է երկրում և կուէի է բռնել այնպէս:

Յեղափոխական գաղափարներ քարոզելը, շրջաններ կազմակերպելը, դրամ հաւաքելը գործի համար, կամ յեղաշրջող հայեացքներ և դէպքեր երթող բանաստեղծներ և վիպասանը — սրանք բոլորը երկրորդական, երրորդական աշխատանքներ էին և «բուն», «բոկական» յեղափոխական չէին համարում այդ տիրող հոգեբանութեան աչքին:

Շարքային հայրուկները, մեծ մասամբ, գնահատում էին ոչ գէնք ընկերներին և ոչ երկրի ներքը աշխատողներին, սակայն, մասուորական հայրուկները, մասնաւոր երկիր մտնողները, գեր-հերոսի հովեր էին առնում և միւս ընկերներին վերէն վար նայում: Ի հարկէ, գոհարելութեան աստիճանն էր կլիւրի գրուում, և դրանց գոհարելութիւնը իսկապէս անգնահատելի էր և գեր-մարդկային: Մտաւորականները կուսակցութեան մէջ, պէտք է խոստովանել, համարեա առանց բացառութեան խոնարհւում էին հայրուկների առաջ, խունկ ծխում, չափազանցութեան էին տանում իրենց հիացմամբ և չէին նկատում, թէ վարակում են այդ մեծ մասամբ պարզ, համեստ ընկերներին գերգնահատութեան մանրէով և վնասում ընդհանուր գործին: Այս տեսակ մտաւորական ընկերներէն տեղաբար կարելի է համարել Սիմոն Զաւարեանին, որ 1898 թւի երկրորդ էնդհանուր ժողովի աստեղ պահանջում էր իւրօրի ան-

գամ ընտրել Շատախից եկած մի ընկերով: Ով որ գալիս էր երկրից, ինչ որ գալիս էր երկրից, համարում էր սրբութիւն սրբոց:

Քրիստափորը բախտ չունէր գէնքը ձեռքին երկիր մտնող լինելու, թէև երկրից դուրս կատարել և կատարում էր հոյակապ գործեր, որոնք եղել են շատ աւելի պատասխանատու, պահանջել են անհամեմատ աւելի մեծ և յանդուգն գոհարելութիւն, քան երկիր մտնողներն են արել: Երբեք չեմ մոռանայ Քրիստափորի այն խօսքերը, որ արտասանեց 98 թւի էնդհանուր ժողովի մի աղմկալից նիստից յետոյ, երբ անցնում էինք Թիֆլիսի Միքայէլեան փողոցով: Դառնութեամբ լի նա ասաց ինձ. «Եթէ Սիմոնը այս տեսակ վճռականութեամբ հակառակ տեսկէտն է պաշտպանում, ի՞նչ կարելի է անել. հօ՛ չի՞ կարելի բաժանել այդպիսի ընկերաշէջ. եղաւ պէտք է տանել»:

Քրիստափորը խոշոր նշանակութիւն էր տալիս «ցուցական» գործունէութեան Պոլսում, Եդիբրում, որ թէ կարող էր ազդել շահագրուած մեծ պետութիւնների վրա և թէ՛ կարող էր ստիպել, որ թիւրքական բարձր պաշտօնեաների շրջանակը ընդառաջ գնայ հայրական հարցի լուծման: Նա մտածում էր ձեռնարկել մի խոշոր գործի և տարիներ ժամանակից յետոյ 1902-ին, Չ. Յ. Դաշնակցութեան Յրդ. էնդհանուր ժողովում, Սոփիայում, դրեց իր թեկնածութիւնը Վիշապի Պատասխանատու Մարմնի անդամութեան, կատարելու համար սուլթանի հահարեկումը: Նրան թւում էր, թէ իր պատասխանութիւնը լրիւ կատարած չի լինի կուսակցութեան առաջ, եթէ անձամբ չմտնի երկիր ուսմբը ձեռքին աշխատելու համար: Թէև շատ ընկերներ գրտնում էին, որ Քրիստափորի կողմից այդ մի սխալ քայլ է, աշխատում էին հանդգնել նրան, սակայն, չկարողացան. նա մնաց անդրաւելի: Ինձ թւում է, որ այն ժամանակ կուսակցութեան մէջ տիրող հիւանդոտ հոգեբանութիւնը նրա վրա ևս ազդած էր. իբրև կուսակցութեան ղեկավար նա ինքը պէտք է մասնակցէր որոշած ձեռնարկին, թէկուզ այդ ձեռնարկին համապատասխանող յատկութիւններ չունենար, թէկուզ կուսակցութեան ուրիշ, ոչ պակաս կարեւոր և պատասխանատու ապարէզներում լինէր անփոխարինելի. յանուն յեղափոխականութեան նա ինքը պէտք է մասնակցէր ահարեկման, ի՞ր ձեռքով պիտի նետէր ուսմբը:

Սա խորը համոզում ունեւ, որ կուսակցութեան (թէև Քրիստափորի մասնակցութիւնը առանձին հմայք տեւց նրան) և հայ դատի ու պատասգրութեան հանդէպ Քրիստափորը ոչ թէ՛ պատասխանութիւն կատարեց, այլ անուղղելի կերպով խոշոր սխալ գործեց՝ գրկելով կուսակցութիւնը իրենից յետազայ օրհասական և ծանր

պատմական օրերին: Այդ օրերին Քրիստափորը, չնորհիւ իր լայն հայեացքի, խոր մտածողութեան և ուժեղ ղեկավարի անմահ բնորոշում, ի վիճակի կը լինէր Դաշնակցութեան գործունէութեանը տալ աւելի նպաստաւոր և յաջող ընթացք:

Նրա մահան լուրը ստացելց թիֆլիսում 1905 թւի մարտին մի հեռագրով, որ կազմած էր այն պայմանական ոճով (շիֆրով), որով պիտի հաղորդէր ուրիշ լուր — Սուլթանի մահը: Համատարած և խորունկ կսկիծ տիրեց թէ կուսակցութեան և թէ համակիրները

չարքերում: Որոշեց կատարել հոգեհանգիստ, և մի քանի օր վերջը Մոզնու Ս. Գէորգ եկեղեցում խուռն բաղմունքին էր հաւաքել: Եկեղեցու բակում սաւեցին փայլուն ջարդաբան ճառեր (Համադասոյ Նոհրատեանը առանձնապէս լաւ խօսեց): Այդ օրը Դաշնակցութեան մարմինները Քրիստափորի յիշատակին ներբաժ պատկները վրա պաշտօնապէս մակադրել էին «Հ.Յ.Դ.» տառերը: Եւ թիֆլիսում կուսակցութիւնը առաջին անգամ լոյս աշխարհ ելաւ գետնի սակից:

Յ. ՏԻՐ-ԴԱԻԹԵԱՆ

Թուուցիկ յուշեր Քրիստափորի կեանքից

1898 թւին էր, երբ առաջին անգամ հանդիպեցի Քրիստափորին Բագրի նաւահանքերում, մեր հասարակական կեանքի շափազանց մտայն և յուսալքման օրերին:

Անցեալ դարու իննսական թւականները երկրորդ կէսին կովկասահայ հասարակական կեանքում կատարեալ յուսախաբուցութիւն և մեռելութիւն էր տիրում: Յարի և նրա արբանակները հրամանով բռնի կերպով փակել էին հայկական բոլոր դպրոցները և հայ մանուկներին ոստիկանական մտրակներով տակ դպրոցական նստարանները փողոց էին նետել: Վտանգի տակ էին և շուտով փակուցին նաև «Կովկասեան Բարեգործական Ընկերութիւնը» իր բարձրագոյն մասնաճիւղերով, Բագրի հարուստ «Մարդասիրական Ընկերութիւնը», Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը... Թէ դպրոցների և թէ բոլոր այդ հիմնարկութիւնների շարժական և անշարժ կայքերը խլեցին և յարժուին գրաւեցին... Ձանազան պատրասկներով խլում էին հայ գիւղացու արևան քրտնքով մշակած հողերը և յատկացնում ուսուկամ ուսադաւան գաղթականութեան: Չկար ոչ մի կազմակերպութիւն, որ աշակցէր գիւղացուն իր այս ծանր օրերին և, բնդհակառակը, հասուներում գտնւած փոքր ի շատ և աքի ընկնող հայ մտաւորականներին գնահատան պատրասկներով հալածում, բանտարկում կամ աքսորում էին: Հայ գիւղացու այդ ունճարակութիւնը լաւ էին գիտակցում կառավարական գնահատան գործակալներ, որոնք ընկած հայկական դաւաճները՝ քարոզում էին, թէ հող ստանալու միակ միջոցը ուսուցողականութիւն ընդունելն է, իսկ ուսադաւանութիւն ընդունելը այն ժամանակայն պայմաններում, միևնոյն էր, թէ ուսու դառնալ, որովհետև Թուսաստանում այդ ժամանակ աղքատութեան որոշիւնը կրօնն էր:

Գանակցին թուլամորթ գիւղացիներ, որոնք ընդու-

նեցին ուսադաւանութիւն, և ահա կառավարութեան կարգադրութեամբ խլեցին լուսաւորչականները լաւագոյն հողերը և յատկացեցին նրանց. ի՞նչ փոյթ, թէ քաղցից կը մեռնէին մնացած լուսաւորչական հայերը... Օրինակը վարակիչ էր և վտանգաւոր: Ծերակի սակաւահող գիւղացիներից, մինչև իսկ Արարատեան դաշտի, էջմիածնի դաւաճի հայերից ուսադաւանութիւն ընդունելու փորձեր եղան հողեր ստանալու կամ իրենց հողերը խլելուց աղատելու նպատակով: Հայ մամուլը, որն այդ ժամանակ արտայայտում էր «Մշակ» և «Նոր-Դար» թերթերով, դարձել էլ բոլորովին անարժէք և յունենալով հասարակական ու աղքատների իրէջանք՝ այլ ևս անկարող էր նոր խօսք, սթափեցուցիչ մի միտք յայտնել յուսալքած հայութեան, որը կարծես «օրէնքից դուրս էր» համարում իրեն և, ինքնապաշտպանութեան միջոց, ընտրել էր որքան կարելի է աւելի ևս կուշ գալ իր պատեանի մէջ, մասնակց մեռելութեան և կենդանութեան ոչ մի նշան չցուցադրել, որպէսզի աւելի ևս չզբոզի ցարի գործակալներին, որոնք հայ իրականութեան մէջ նորանոր որսեր էին փնտրում:

Յուսալքման վիճակ էր տիրում և հայ յեղափոխական մտքի մէջ: Տանկահայկական հարցը, որ այն ժամանակ զբաղեցնում էր հայ մտաւորականութեան և երիտասարդութեան, կրել էր շափազանց ծանր հարուածներ. Վանի և միւս վայրերի ջարդերը, հազարաւոր գաղթականների մուտքը Կովկաս, նոցա կրած զրկանքները և թշուառ վիճակը կատարեալ յուսալքման և անգործութեան էին մատնել բոլոր նրանց, ովքեր մեծ սկնկալութիւններ ունէին շուտափոյթ իրականացած սեանելու տանկահայ ժողովրդի ազատագրութիւնը: Չնայելով, որ այդ ժամանակները տեղի ունեցաւ մինչև այդ իր նմանը չտեսնւած «Սնանորի արշաւանքը»,

երբ մի քանի հարիւր հայ յեղափոխականներ կարողացան ի մի խմբել և հայ արդար ու անմեղ արեան վրէժը լուծել, չնայելով որ քիչ առաջ տեղի էր ունեցել Բանկ-Օթօմանի խիզախ գրաւումը, որը մի բողոքի ցոյց էր եւրոպական դիւանագիտութեան, չնայելով այդ ինքն ըստ ինքեան խոշոր երևութիւններին, երբ պատմականորէն իրաւագործի «վախիտ» հայի տեղ ասպարէզ էր գալիս «մարտնչող հայ ֆիդայիներ», երբ «անպաշտպան» և «անգործ» հայի տեղ տեղեցուում էր «էթնոգրափոխական», «քաջ», «անձնագրէ» մի նոր ժողովուրդ, այնուամենայնիւ յուսալքումը համատարած էր և հուսաւոր կորցրած հայութիւնը հանգիստ էր ուշուում: Դեռ աւելին, այդ յուսալքումը աստիճանաբար անդրադառնում էր և թուով քիչ և դեռ ևս լաւ չկազմակերպւած յեղափոխականների վրայ, որոնցից շատերը, բնականաբար, պիտի ենթարկէին ընդհանուր բարոյալքման:

Նոյն այդ հողերանութիւնը վարակել էր և նախախարհի շրջանը, ուր թափւել և անդադար թափուում էին գաւառի անգործ ու հալածական մտաւորականները, երիտասարդ աշխատատերեր, տանկահայ գաղթականների մի խոշոր մասը, յեղափոխական գործիչներ, Տանկատանից և Պարսկաստանից հալածական հայուկներ, որոնք ենթարկւելով մի կողմից զբոսի բարոյալքող աղբեցութեան և միւս կողմից Բազի ուրոյն պայմաններին՝ մոռանում էին իրենց լաւագոյն իդէալները և անձնատուր լինում ուղու աստծոյ պաշտամունքին: Այս ընդհանուր կաշկանդող մթնոլորտի մէջ ցամաքում էին բացառութիւն կազմել մի խումբ աշխատատեր երիտասարդներ, որոնք համախմբւած էին գլխատարայէն «Եղբայրք Թումայեի» նախահանգերում և նրա շրջակայքում, ուր Խանասորի արշաւանքից և Երկրորդ Ընդհանուր Ժողովից յետոյ բնակութիւն էր հաստատել Նիկոլը (Դումանը): Անշուշտ, Դումանի մեծ հմայքն էր պատճառը, որ այդ երիտասարդները համախմբւել էին և փորձոււմ էին մի քան անկ նախախարհի աշխատատիրութեան մէջ: Կարելի էր ասել, որ այդ ժամանակայ ամբողջ նախախարհում Դանակցութեան արտայայտիչները զբոսն էին, որոնց հետ կապել էր ինձ մի քանի ամիս առաջ Սարգիս Օհանջանեանը: Այդ ընկերներից էր, որ ես առաջին անգամ տեղեկացայ Դանակցութեան Ընդհանուր Ժողովի մասին, երբ գործին աւելի մօտ կանգնած ամձինք փոփախուով պատմում էին, որ Ընդհ. Ժողովը չափազանց կարևոր որոշումներ էր տւել. ամենքի յոյսերը այժմ կապւել էին Քրիստափորի հետ, որը ժողովի որոշումով պիտի անցնէր արտասահման Հ. Յ. Դանակցութեան գործերը վարելու և «Իրօշակ»-ը խմբագրելու համար: Իսկ նրանք, որոնք Քրիստափորին ճանաչում էին կամ լսել էին նրա մասին, կրկնում էին մեծ ոգևորութեամբ, թէ այժմ իրաւամբ կարգարանան Ընդհ. Ժողովի բոլոր որոշումները: Այդպիսով այդ փոքրիկ խմբակի մէջ տեղեցում էր մի անասման և հետաքրքրութիւն դէպի այդ անձն ու նրա գործերը...

Այդ օրերից մէկն էր, երբ զարմացմամբ նկատեցի, թէ ինչպէս Թումայեի նախահանգի մեր ընկերների մէջ մի անսովոր եռ ու դեռ էր սկսւել: Ամենքը մեծ ոգևորութեամբ խօսում, վիճում էին և անհամբերու-

թեամբ ժամերն էին հաշուում, թէ Քրիստափորը արդէն Բագու է եկել և խոստացել է մեզ ևս այցելել:

Վերապէս, հասաւ այդ բազմալի ըրպէն: Մի խումբ աշխատատերներ, թուով մօտ 30-35 հոգի, դէռեւ-երբ հաւաքած էինք ձմեռնային նախահանգում, երբ երկայ Քրիստափորը՝ ուղեկցութեամբ Նիկոլի և Ս. Օհանջանեանի: Ոմանց Քրիստափորը ճանաչում էր, ոմանց ներկայացրին, սակայն, բորբոն էլ, կարծես մի մեծ վայելքի մէջ էին և սրբազան երկիւղածութեամբ ունկնդրում էին նրա ամէն մի խօսքին, ամենաչնչին զրոյցին: Մօտ մի ժամ մնալով մեր շրջանում, գրուցելով մեզ հետ զանազան հարցերի մասին՝ հեռացաւ մեզանից, սակայն, դեռ երկար ժամանակ խօսուում էր այդ այցելութեան մասին, իրել մի արտաքոյ կարգի երևութի: Շատերը գոհ ու ընչանիկ էին գգում իրենց, որ ոչ միայն տեսել են Քրիստափորին այլ և խօսել նրա հետ: Ես, որ անձանթ էի այդ միջավայրին, չէի կարողանում ըմբռնել այդ պարագան և շատ անգամ ինձ հարց էի տալիս, թէ ինչով է արդեօք այս յեղափոխական ոգևորութիւն և հմայք առաջ բերում իր անւան շուրջ և ի՞նչն է արդեօք, որ այդ աշխատատերները, ծանօթ անձանթ, կարօտ էին նրա տեսքին, նրա խօսքին: Այդ հանելուկը պարզեց ինձ համար, երբ ես առիթ ունեցայ երկրորդ անգամ հանդիպելու նրան և տեսնելու ոչ մէկ անգամ, այլ երկար ամիսներ...

Այդ մի այցելութիւն էր, որ նա տեղ նախախարհի զաշնակցական աշխատատիրութեան և շուտով մեկնեց Թիֆլիս՝ փոխադրելու համար արտասահման: Զիշտ է, այդ այցելութիւնը ոչնչով չփոխեց տիրող խաւաքը, բայց ունեցաւ այն աղբեցութիւնը, որ այդ խմբակ աւելի ևս սեղմեց իր շարքերը, կրկնապատկեց եռանդը և, որ դիւատւորն էր, ոչ միայն շենթարկեց շրջապատի տիրող յուսալքման, այլ և ապաշայտւում, կարելի էր ասել, կորցրեց հանդիսացաւ այն հակայական կազմակերպութեան, որը ներկայացնում էր իրենից Ոսկանապատի Կենտրոնական Կոմիտէութիւնը:

Երկրորդ անգամ աւելի երկար ժամանակով հանդիպեցի Քրիստափորին, մօտ երկու տարի յետոյ, բոլորովին այլ պայմաններում, երբ կուսակցութիւնը այլ ևս յաղթանակել էր տիրող յուսալքման, թեւակոխել էր նոր և մեծ աշխատանքների շրջան, և այդ բոլորի մէջ խոշոր դեր ունէր Քրիստափորը:

Երկրորդ Ընդհ. Ժողովի որոշումը Քրիստափորի վերաբերմամբ եղաւ չափազանց յարմար ժամանակին, և, կարելի էր ասել, նա կարողացաւ ամբողջապէս արգարացնել իր հետ կապւած անկկալութիւններն ու յոյսերը: Քրիստափորը ժընձ հաստատուելուց յետոյ, կարծես թէ կուսակցութեան կենտրոնը փոխադրեց արտասահման և ամենքն հայեացքը ուղղեց դէպի այնտեղ: Եւ, յիշաւի, Քրիստափորը շուտով կարողացաւ կենդանացնել «Իրօշակ»-ը և ոչ միայն ինքն էր գրում, այլ և իր շուրջը համախմբեց մեր երիտասարդ գրողներին՝ Մ. Վարանդեանին, Ղարիբին, Խ. Մարումեանին, Միամանթօին և ուրիշներին, որոնց շնորհիւ «Իրօշակ»-ը զարմաւ իրաւամբ կուսակցութեան ղեկավար օրգանը: Այդ լքման օրերին, երբ յեղափոխական երիտասարդութիւնը և հայ հասարակութիւնը

սրտասլոյիչ խօսք էին փնտրում, Քրիստափորի «Ամբոխային Տրամարանութիւն» յղեածաշարքն էր, որ իր երկաթէ տրամարանութեամբ, հատու մտքերով յուսահատածին սիրտ տուց, տատանողներին՝ կորով ու ուղեորութիւն ներշնչեց և նորմոր ուղիներ ցոյց տուց: Քրիստափորի պակասը լրացնում էին միւս զորոյնները, որոնցից, մասնաւոր, Ղարբիի պատկերները կլանւում էին աշահարար երիտասարդ և վառվռուն սերնդի կողմից: Ժրնեից հասնող զանազան լուրերը հեռոզհեռոզ փայտում էին սրտասլոյիչ: Մենք գիտէինք արդէն, որ Քրիստափորին յաջողւել է համախմբել Ժրնեի և Զւիցերիայի հայ ուսանողներին, որոնք իրենց մասնաւոր նամակների մէջ մեծ ուղեորութեամբ և ակնածանքով էին խօսում Քրիստափորի և նրա աշխատանքների մասին: Լաւ դիտակցելով ուսանողութեան ազդեցութիւնը երիտասարդ սերնդի վրա՝ Քրիստափորը Ժրնեի ուսանողներից երբեմն երբեմն կազմակերպում էր առաքելութիւններ դէպի Կովկաս, մասնաւոր, դէպի Բազու, ուր անհամբերութեամբ սպասում էին այդպիսի ընկերներին: Այդ երիտասարդ ընկերների երեւալը Բազու շրջանում ստեղծում էր անասհաման ուղեորութեան մի նոր աղբիւր:

Այն ժամանակները թէ դաշնակցականները և թէ Դաշնակցութիւնից դուրս գտնւած հայ մտաւորականները չափազանց մեծ նշանակութիւն էին իր տալիս եւրոպական հասարակական կարծիքին, և մեծ եղաւ մեր բոլորի գարմանքն ու ուղեորութիւնը, երբ Քրիստափորին յաջողւեց ոչ միայն ստեղծել «Պրօ Արմենիա» թերթը, այլ և համախմբել այն ժամանակայ Փրանսիայի ականաւոր և լուրջ ուժերը այդ թերթի շուրջը — Պրեսանտէ, Կլեմանսօ, Պիէր Բիլյար, Փան Ժորէս, Անատոլ-Փրանս և ուրիշներ: Ինչպիսի՞ յոյսեր էին կապւած այդ թերթի և այդ անունների հետ. և շնորհիւ այդ բոլորի ստեղծում էր մի ուրոյն պատկեր Քրիստափորի և նրա զործերի մասին:

1901 թւականի վերջերին, մեր վերագործնումի օրերին, երբ մեր նախկին փոքրիկ խմբակը արդէն մեծացել էր, համակիրների և գաղափարակիցների շրջանը լայնացել, կրկին երևաց մեր շրջանում Քրիստափորը:

Ամիսներ առաջ արդէն փսփսուկով խօսւում էր, որ նա շուտով գալու է և այս անգամ երկար պիտի մնայ մեր շրջանում: Չնայելով նրա երկար բացակայութեան և հեռաւոր տարածութեան, որը բաժանում էր մեզ Քրիստափորից, նրա և մեր մէջ ստեղծւել էր մի անսովոր մտերմութիւն. բոլորս էլ անհամբերութեամբ սպասում էինք նրա գալուս, ձիւշտ այնպէս, ինչպէս մեզից ամէն մէկը կը սպասէր իր հարազատին:

Այս անգամ Քրիստափորին ընդունեցին ակելի մեծ թւով և ակելի գիտակից տարրեր, ջան առաջին անգամին: Նաւթաշրջանի ծանօթ սրահներից մէկում, ուր համախմբւել էին հարիւրից ակելի մտաւորականներ, Քրիստափորը տեց իր առաջին ընդարձակ զեկուցումը կուսակցութեան արտասահմանի զործունեութեան մասին: Նա ծանօթագրեց մեզ այն աշխատանքներին, որոնք տարւում էին արտասահմանի քաղաքական զործիչների շրջանում, բացարեց, թէ մենք ինչպիսի՞ յոյսեր կարող ենք կապել արտասահմանի պրոպագանդ-

դին: Ի հարկէ, զեկուցման դիտարար առանցքը այն էր, որ արտասահմանի աշխատանքները կարող են արժէք ունենալ միայն այն ժամանակ, երբ երկրում կը տարւեն ուժեղ կուսակցական աշխատանքներ...

Առաջին անգամն էր, որ մենք հիմնաւոր կերպով լսում էինք այդպիսի մի բովանդակալից զեկուցում թէ արտասահմանի զործունեութեան և թէ մեր սպասելիքների վերաբերմամբ. մինչև այդ մինչք ունէինք միմիայն հարևանցի և պատահական ու կցկուտը հասկացողութիւններ և տեղեկութիւններ, լսած այս ու այն ընկերոջից և արտասահմանից եկած զանազան անձնաւորութիւններից:

Այն ժամանակայ այրող հարցերից մէկն էլ «դաշնակցականներին» և «նշակականներին» միաջաման խնդրն էր: Նաւթաշրջանում կային հինգ զործիչներ և բազմաթիւ մտաւորականներ, որոնք հեռու էին մտում ամէն տեսակ աշխատանքից՝ պատճառաբանելով, թէ ինչո՞ւ այդ երկու յիշգիտական կուսակցութիւնները չեն միանում, քանի որ երկուսի նպատակն էլ նոյնն է: Քրիստափորը ստիպւած էր կանգ առնել և՛ այդ ցատտ խնդրի վրա. նա պարզաբանեց այդ բանակցութիւնների մանրամասնութիւնները, լուսաբանեց, թէ ինչպի՞սի վանքեր են թափուել մեր կողմից, որ այդ միութիւնը տեղի ունենայ, բայց և այնպէս հեռաւորութիւն չի եղել: Ժողովականներից շատերը գտնուում էին, որ անելու է ձգտել միութեան, քանի որ շնչակեան կուսակցութիւնը մեռնում է արդէն: Կարելի է ասել, որ այդ ժողովն էր, որ շատերի միջից վանեց անորոշութիւնն ու տատանումները, պարզեց մեր հարցի լուծման ճանապարհները և շատերին ընդմիջտ կապեց Դաշնակցութեան հետ: Նաւթաշրջանում աշխատող մեր մի շարք աչքի ընկնող ընկերները այդ օր են կապել իրենց կեանքը Դաշնակցութեան հետ:

Քրիստափորը մեր շրջանում մնաց մօտ մէկ ու կէս տարի և չափազանց շատ նպաստեց մեր կուսակցութեան մեծանալուն և զարգանալուն: Առանց նրա խորհրդի և համաձայնութեան, այդ մէկ և կէս տարւայ ընթացքին, ո՛չ մի աչքի ընկնող գործ չի կատարւել մեր շրջանում: Ինչպիսի՞ մի զորով ընդառնւում էր նա մեր բոլոր ցանկութիւններին ու բաղձանքներին: Նրա փոքրիկ, անպաճոճ սենեակը, գիշեր թէ ցերեկ, բաց էր մեզ համար և նրան հանդիպելը, մասնաւոր, մի երկու ընկերների համար դարձել էր հոգեկան պահանջ. մենք անկարող էինք օրական գործի մի անգամ չհանդիպել նրան, չիօսել հետը, մտքերի փոխանակութիւն չունենալ... Տեսել էս «մեր Քրիստափորին», ի՞նչ է ասում այսինչ հարցի մասին «Մեր Քրիստափորը», «Մեր Քրիստափորը» այստեղ է թէ գնաց, — այս էր քաղաքի կամ նաւթաշրջանի առաջին հանգիպած դաշնակցականի խօսքը: Ի՞նչ որ «Մեր Քրիստափոր» — նա մեր բոլորի մտերմն էր, մենք բոլորս նրա հետ խօսում էինք եզակի-դժուով, կանչում էինք նրան Քրիստափոր անունը որևէ յաւելումի և այդ կատարւում էր այնպիսի մտերմութեամբ և բնականօրէն, որ կարծես, այլ կերպ չէր էլ կարող լինել: Այդ մտերմութեան շնորհիւ էր, որ մենք առանց քաշելու ամէն ժամանակ դիմում էինք նրա խորհուրդներին, որոնք կարևոր էին, մասնաւոր, մի այնպիսի ժամանակ, երբ Դաշնակցութիւնը

դառնում էր Անդրկովկասում քաղաքական մեծ կուսակցութիւն, երբ նրա հմաքը օր աւուր մեծանում էր, երբ ամենայն օր հարիւրուոր աշխատակորներ և մտաւորականներ ջանկութիւն էին յայտնում մտնելու նրա շարքերը: Ընդ այդ ժամանակներն Ռուսաստանում սկսւում էին յեղափոխական շարժումները, որոնց գրելաւոր բոյներից մէկը Բազումն էր, ուր Ռուս Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը տեղագրին աշխատանքներ էր սկսել և բազմաթիւ ու բազմապիսի գրաւոր թողուցիկներով ողորդում էր բանւորական աշխարհը: Բնականաբար, այդ հետաքրքրութիւնը պիտի վարակէր և հայ աշխատաւորներին, իսկ մէր կուսակցութիւնը այդ ժամանակները չունէր և ոչ մի տեսական գրականութիւն. ոչ մի խնդիր տեսականօրէն լուսաբանւած չէր ոչ միայն լայն զանգւածներէ, այլև մեզ համար. մեզ, որ մեծ պայքարի էինք բռնել սոցիալ-դեմոկրատներէ հետ և թոյլ չէինք տալիս, որ հայ բանւորութիւնը հետաքրքրութիւն ցոյց տայ դէպի սոցիալ-դեմոկրատները: Ահա այդ ժամանակ մեր քաղաքական գիտութեան գլխաւոր աղբիւրներից մէկը Քրիստափորն էր, որի հեղինակութիւնը մեծ էր ոչ միայն մեր շրջանում, այլ և հայ և օտար կուսակցութիւնների և յեղափոխական գործիչների շրջանում:

Նախ քան Քրիստափորի Բազու ժամանելը, որպէս զի կանխեց սոցիալ-դեմոկրատներին անհիշտ և աննպաստ պրոպագանդը Հ. Յ. Դաշնակցութեան վերաբերմամբ և թոյլ չտաւ, որ հայ աշխատաւորութիւնը դո՛ւ զնայ զանազան թիւրիմացութիւնների, մենք՝ Բազում աշխատող դաշնակցական երիտասարդներս սոցիալ-դեմոկրատներին մի քանի վարկէնրի հետ կազմել էինք պարբերական հասցրթիւն լուսարանելու համար մի շարք ծրագրային խնդիրներ: Այդ ժողովները մեծ հետաքրքրութիւն էին առաջ բերել Բազուի, գլխաւորապէս, համայնաբանական երիտասարդութեան և մտաւորականութեան մէջ, և աստիճանաբար յաճախողների թիւը մեծանում և ժողովների բնոյթը ակտիւ էր լրջանում: Այդ ժողովների վիճարանութեան գլխաւոր նիւթը կազմում էին «ազգային խնդիր»-ը, «Ռուսաստանի դաշնակցականները պէ՞տք է զբաղւեն տաճկահայ գաղտով թէ ոչ», «արժէ՞ արդեօք պայքարել լեզուի համար», «բանւորների զեբը այդ հարցերում» և այլն: Այդ խնդիրների վերաբերմամբ իրենք սոցիալ-դեմոկրատները թէպէտ վերջնականապէս ձեռնարկւած տեսակէտներ չունէին, բայց ընդհանրապէս նրանց դիրքը բազմապէս էր. նրանք դռնուտ էին, որ հայ ազատագրական շարժումը, ինչպէս և, առհասարակ, բոլոր ազգային շարժումները յետադիմական երևոյթներ են, որ փոքր ազգերը բնական օրէնքով պիտի ձուլւեն մեծ ազգերի մէջ, պայքարել լեզուի, ինչպէս և ազգային անկախութեան համար, կը նշանակէ ծառայել բուրժուազային շահերին, չեսակարար դարտա ազատամիրտ հասնմանը և դէ՛ս գնալ չորրորդ դասակարգի շահերին, մի դասակարգ, որի ձեռքն է անցնելու բոլոր երկրների զեկավարութիւնը: Մեզ համար ևս այդ խնդիրները լուսաբանւած էին տեսանկյունօրէն: Սկզբնական շրջանում, երբ դեռ նոր էինք սկսել աշխատել, մեզ համար այդ խնդիրները անվիճելի արխիւայական բնոյթ ունէին, և երբեք չէինք ենթադրում, թէ մի օր պիտի

վիճարանութեան նիւթ դառնան, մասնաւոր, որ այդ ժամանակները զիպէն լուսաբանող գրքեր և մեր կենտրոնական օրգանում էլ լոյս չէին տեսնում այդպիսի տեսական յօդւածներ: Բացի այդ, մեր զեկավարող շրջաններում ևս առիթ չէր կղկ այդպիսի խնդիրները զբաղւելու, և մենք պարզօրէն չդիտէինք Դաշնակցութեան տեսակէտը: Մեր դիմումները մեծ ընկերներին մնում էին մեզ համար անբաւար և հրապարակում մնացած մի քանի երիտասարդ ընկերներ, ամբողջ օրեր համախմբւած՝ աշխատում էինք լուսաբանել և պատճառաբանել մեր տեսակէտները: Մեր դրօշիւները թիւթեացաւ, երբ մեր շրջանում երեսը Քրիստափորը, որը հանդիսացաւ մեր վերջնական աղբիւրը և որին դիմում էինք ամէն անգամ, երբ անհրաժեշտ էր լինում մի որեւէ խնդիր լուսաբանել:

Ընդհանրապէս այդ խառն ժողովները մեզ համար ունեցան գրական հետեւանքներ. մեր ընկերները սկսեցին ակտիւ գիտակցօրէն կապել մեզ հետ: Մեր կուսակցութիւնը քաղաքացիութիւն էր ստանում Բազուի շրջանում, ո՛չ միայն հայերի, այլ և օտարների մէջ, որոնք ոչ մի հասկացողութիւն չունէին Հ. Յ. Դաշնակցութեան մասին:

Մեր այդ ժողովները վերջացան մի մեծ և կարևոր ժողովով, որին մասնակցում էին այն ժամանակայ, կարելի է ասել, Բազուի յեղափոխական և ոչ յեղափոխական բոլոր կարևոր մտաւոր ուժերը՝ հայ, հրեա, ռուս. այս ժողովը, և թէ՛ կարելի է այսպէս ասել, պիտի լինէր համադրութիւնը մեր նախորդ ժողովների: Գրաւոր գեկուցում պատրաստել էին սոց. -դեմոկրատները, իսկ պատասխանողը պիտի լինէինք մենք՝ դաշնակցականներս: Մեզ հետ այս անգամ եկել էր և Քրիստափորը: Այդ ժողովը, որ կարելի է ասել, եղաւ մեր յաղթանակի օրը, այնպէս է տպաւորւել մտքիս մէջ, որ չնայած այս 25-26 անցած տարիներին, շատ բաներ յիշում եմ դարմանալի մանրամասնութեամբ: Զեկուցման գլխաւոր նիւթն էր «Մասնական կարծիքով առաջադրւում են միմիայն բուրժուազային կողմից, որովհետև չնորհու ազգպիսի շարժումների բուրժուազիան կարողանում է շահագործել և իրեն ձեռքից դարձնել աշխատաւորութիւնը: Նախ, այդ բուրժուազիան է, որ յարուցանում է «եզուի» ինդիւիդ, և դրանով ցանկանում է երկպառակութիւն սերմանել զանազան լեզուներով խօսող բանուորների միջև. մի խօսքով, «ազգամազաչ» էին բերւած բոլոր այն «զեկները», որոնք ահա 25-30 տարի է, բուրժակի պէս, կրկնում են սոցիալ-դեմոկրատները ինչպէս և իրենց յարող բաշակիկները, որոնք դեռ այսօր էլ հուլովում են, որ Հայաստանի Հանրապետութեան ստեղծւելը ձեռնառու էր հայ բուրժուազային: Սակայն, մի տարբերութիւն ունէր այդ զեկուցումը, ուր բերւած օրինակները ոչ թէ հայկական կենսաբան էին ասուած, ինչպէս լատիօրէն խեղաթիւրելով ամէն մի պատմական փաստ, կրկնում են այժմ, այլ եւրոպական կենսաբան, գլխաւորապէս, նկատի էին ասուած չեխական շարժումները Աւստրո-չեռնգարիայում և դատաւիտում էր, թէ ինչպէս չեխական և գերմանական բուրժուազիան Պրագայում բանուորներին կուեցնում է միմեանց դէ՛մ՝ մինչև իսկ

քաղաքի փողոցները անուճները ցոյց տուող տախտակները համար չեն բերէն կամ գերմաններէն չզբւած լինելու պատճառով, և այս բոլորը արուստ է նրա համար, որ մթազնն բանուորի դասակարգային գիտակցութիւնը և ծառայեցնեն իրենց շահերին: Հետևապէս, ով աշակերտ խնդիրներով զբաղեցնի բանուորներին, կատարում է «յեղափոխական շարժումներ» ինչ վերաբերում է տաճկահայ հարցին, այդ հարցով չլիտի գրազեն ուսանաչարը, մանաւանդ, բանուորութիւնը, այլ պիտի թողնեն, որ իրենք քիւրք բանուորները աշակերտ գիտակցութեան գան, որ ստեղծեն այնպիսի կարգեր, որ հնարաւորութիւն ունենան ապրելու բոլոր ժողովուրդները, ինչպէս և հայերը: Եւ իբրև երակացութիւն. չպէտք է գրազեն ընդհանուրութիւնը այնպիսի անարժէք խնդրով, ինչպիսին է հայկական հարցը և բոլոր հայերը, իրև անդամներ փոքր ազգի, որին վիճակած է յանձնառ, լինն իրենց ազգային կուսակցութիւնները և մտնեն համախարհային սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան մէջ:

Քրիստափորը մեծ աւելում է բազմաթիւ փաստերով պայքարեցեց զեկեղում կարծողների անտեղեկութիւնը Տանկաստանի և տաճկահայ փողովորի վիճակի մասին, ինչպէս և թիւրք փողովորի և հոգեբանութեան ու բնագիտական վերաբերմամբ. հերքեց այն սխալ ըմբռնումը, որ քրիստափորը կերպով աշխատում են տարածել սոց-դեմոկրատները, որ մեր շարժումը ոչ մի նմանութիւն չունի արեւմտեան եւրոպայում տեղի ունեցող շարժումների հետ և որ նա ոչ թէ մի չովէն շարժում է, այլ անհրաժեշտ շարժում փրկելու մի ամ-

բողջ ժողովուրդը բնաջնջելու վտանգից: Այստեղ էր, որ Քրիստափորը արտասանեց իր նշանաւոր խօսքը, որը այնուհետև ստացաւ քաղաքացիութեան և կրկնել է շատերի կողմից բազմաթիւ անգամներ. «Դուք խօսում էք յաւելեալ աշխատանքի մասին, որ շահագործում է բուրժուազիան յօգուտ իր շահերի, իսկ մենք գործունենք յաւելեալ արեւմտ հետ, որ թափում է ամենայն օր շնորհի տաճիկ կառավարութեան բարբարոս կարգերի»: Փողովականները, մանաւանդ, հրեաները մեծ ոգևորութեամբ ու ցոյցերով ողջունեցին Քրիստափորին և եզրակացութիւնը եղաւ այն, որ Դաշնակցութեան վարած շարժումը անհրաժեշտ պայքար է բռնակալութեան և բարբարոսութեան դէմ. որը ոչ մի նմանութիւն չունի այն աշխարհակալ, ազգայնական շարժումների հետ, որոնք մղում են եւրոպական դանազան պետութիւնների կողմից և, հետևապէս, ամէն կերպ պիտի բաշխելու դաշնակցական շարժումը:

Այդ ժողովի յաջողութիւնը այնպէս էր ոգևորել հայ մտաւորականներից և երիտասարդներից շատերին, որ նրանք ընդմիջում մոտացան իրենց տատանումները և ամուր փարեցին Դաշնակցութեան: Կարելի է ասել, որ այդ ժողովն էր, որ քաղաքացիական իրաւունք տեց Դաշնակցութեան և աշուհետև նա աստիճանաբար աւելի ևս զօրացաւ և հաստատուն կանգնեց կովկասում գոյութիւն ունեցող միջազգային սոցիալիստական կուսակցութիւնների շարքին:

Ռ. ՍԵՒՆԱՆ

(Շարունակելի)

Առաջին համադիպումս Քրիստափորի հետ

Առաջ ենք բերում մի հասում հանգուցեալ ընկեր Սարգիս Օհանջանեանի «Իմ Յիշատակարան»-ը ընդարձակ յուշերից, արմնք ի մտայ տրեխու են հրատարակութեան:

ԽՄԲ.

... Մեր մեծ-ընկեր՝ անմոռանալի Քրիստափոր Միքայէլեանի բնակարանի հասցէն ձեռքիս մտայ նրա մօտ: Անունը լսել էի, բայց իրան դուռ չէի տեսել: Առաւօտեան ժամը 7 էր: Քրիստափորը տակաւին անկողնում պարկած էր: Ինձ առաջնորդեցին ուղղակի նրա ննջարանը և իմ աչքին պատկերացաւ հետեւեալ տեսարանը:

Երկու փոքրիկ սենեակներ, անշուք, աղքատիկ կարասիներով, մի հասարակ մահճակալ, ծռած ոտքերով, նրա վրա կուշ եկած մի լղարիկ, նիհար, դեղնած դէմքով, միջին տարիքով մարդ: Մահճակալի կէտը հազու էր բռնել նրա փոքրիկ մարմինը. թուում էր, թէ

պտուկող մի պատանի է: Սակայն, ակնոցների տակից փայլող մի գորշ թափանցող աչքերը, խիտ, յետ սանրած մազերով ծածկած, լայն ճակատով նրա դուռը, փոքրիկ, ցանցաւ մօրուքը վկայում էին, որ մահճակալի վրա երեխայի մարմնով կուշ եկած մարդը «մեր» ամենքիս պարտելի, կուսակցութեան հրամանատար Քրիստափորն է:

Դպրոցական աշակերտին յատուկ ամօթխածութեամբ մօտեցայ նրան բարեկեցի և առաջարկեցի «յանձնարարական»:

Յանձնարարական նամակն արագ աչքի անցնելուց յետոյ դարձաւ ինձ.

— Ա՛... Պարկաստանից, այդ լաւ է...»

Նրա հրեշտակային, մտերմ ժպիտն ինձ վստահութեան ներշնչեց. առաջին իսկ րոպէից զգացի, որ մօտիկ ընկերի հետ գործ ունեմ և որ դադարակարական վեհ դործը ընդունակ է արագ մտեւմացնելու մեծին ու

փոքրին, հինին ու նորին, անցեալ ու դիրք ունեցողին և նոր, սկսնակ ուժերին:

— Ոնդրեմ անցէք միւս սենեակը, ես այս ընդէիս կը դամ, ասաց ինձ և յետոյ դարձաւ իր ամուսնուն ուսուերէն:

— Ժենեա, կարգադրիր ինքնաեւր բերեն...

Հաղիկ նստել և չորս կողմիս համեստ կահ-կարասիներն էի դիտում, երբ ներս մտան երկու անծանօթ պարոններ:

— Ծանօթացէ՛ք, ձայն տւեց Քրիստափորը իր ննջարանի բաց դռնից, — Պարսկաստանի ընկերներէից է, աւելացրեց նա:

Մենք ծանօթացանք: Մէկը Կարսից, միւսը Ալեքսանդրապոլից էր գալիս: Մինչ այս, մինչ այն, դուրս եկաւ և Քրիստափորը:

Կարճահասակ, մի ոտքը կաղին տալով մօտեցաւ սեղանին, ուր փոքրիկ, բայց մաքուր ինքնաեւր կարծես բարկացած մի բանի վրա, աղմկում էր և հաճելի գոլջի արձակում:

Կարճ և կրունկների կողմից բաւական աչքի ընկնող չափով մաշւած անդրավարտիք, հնամաշ, գոյնը տւած

վիզիտկա, չէշունչայի վիղը յետ ծալած շաղիկ և վզկապի փոխարէն սպիտակ փող — ահա նրա ամբողջ պճրանքը: Ոտում էր մեղմ, հանգիստ ձայնով: Յոգունած-վաստակած և կեսնքից ձանձրացած մարդու տպաւորութիւն էր թողնում առաջին հայեացքից: յոստովանում եմ, առաջին տպաւորութիւնս շատ աննպաստ էր:— Միթէ այս իպճուկ մարմնով, ընկճած, յուսահատ դէմքով մարդիկ են, որ պիտի ղեկավարեն կազմակերպութիւնը — մտածում էի ես: Բայց երբ ձայնը բարձրացնում էր և ակնոցների տակ փայլող մի գոյգ աշիկներին՝ մինչև հոգուէ խորքը թափանցող հայեացքն ուղղում էր քեզ, զգում էիք, որ այդ վտիտ մարմնի մէջ մեծ հոգի է պարունակում: Հետագայում, իբր յաճախ, շատ յաճախ առիթներ ունեցայ այդ «կաղիկ-հսկային» տեսնելու և լաւ ճանաչելու իր ամբողջ ոյժի մէջ, իր բարոյական խոշոր կերպարանքով, այն ժամանակ միայն պարզեց, որ այդ մարդը յիբաւի արժանի է կազմակերպութեան հոգին, իրիզը, հրամանատար-ղեկավարը լինելու:

ՅԱՐ ՀԱՍ
(Ս. Օհանջանեան)

„ՅԱԻԵԼԱ ԱՐԻԻՆՆ՝ Ը...

«Քրիստափոր Միքայէլեանը «Դաշնակցութեան» անձնաւորումն էր, նրա մէջ, կարելի է ասել, կենտրոնանում էր մեր կազմակերպութեան ամբողջ պատմութիւնը իր բոլոր յուզիչ մանրամասնելով:

«Ամէն անգամ, երբ ազատութեան գործը կաղում էր, երբ ընկնիան լաց ու վհատութիւն էր տարածում ամէն տեղ հայրենի երկրում, երիտասարդութիւնը նրան էր միշտ դարձնում իր վշտոտ հայեացքը, նրանից սպասում էր նոր խրախուսանք, նոր մարտահրաւէր: Եւ նա իր կարող ու ազդու խօսքով, տոկոսն, յարասն քարոզներով սեղմում էր ցրտող շարքերը, մղում էր ուժերը դէպի կռիւ ու գոհողութիւն:

«Անուրբական իր կազմակերպչական տաղանդով՝ նա վարպետութեամբ կարողանում էր շահագործել իրեն հանդիպած բոլոր ուժերն ու գործօնները, կարողանում էր ուղղել նրանց դէպի իղէկալը — հայկական ազատութեան գործը:

«Նրա բարոյական հմայքն էր, որ տիրանում էր բոլորին ու զինաթափ անում ամենանպաստաւ հակառակորդին անգամ:

«Ամբողջապէս գաղափար դարձած մի առաքեալ էր նա»... («Դրօշակ»ի խմբագրականը. 1905. ապրիլ):

«Այս դաժաղի մէջ ամփոփւած է հայ յեղափոխութեան սիրտը և հայկական մարտնչող երիտասարդու-

թեան փայտախանքը: Գրչի վարպետ չէր մեր աննման ընկերը կամ շահիթահարող ճառասաց և ոչ էլ հայդուկների ղեկավար՝ Արեան Երկրի փշոտ ձորբում: Ո՛չ: Նրա ուժն ու առջնորդը ընտրչելու համար՝ պէտք է հնարել մի նոր բառ, որ գոյութիւն չունի մեր լեզուի մէջ.— մարդագործ էր նա, մի հմայիչ, դիւթող ոյժ, որ հրաշակերտում էր գաղափարական մարդը խոսան, անմշակ սրտերի և ուղեղների մէջ, շաղկապում նրանց և ուղղում դէպի մտքի պայքար, դէպի յեղափոխական վերանորոգիչ կռիւը» (Ակնունի):

«Թէև անծանօթ՝ իր առաջին խօսքերից և առաջին հայեացքից՝ նա տիրաբար իշխեց իր խօսակցին: Այդ փոքրիկ, թուլակազմ մարդը, չինթ քայլաձեռով, որ՝ հակառակ իր աշխատանքի մագրերին՝ դեռ տարիքաւոր չէր և պահպանել էր մանկական աչքերի յստակութիւնը, խօսում էր մի ձայնով՝ միութամանակ մեղմ ու խոպուտ, համողիչ ու հրամայական: Նրա դոգմայն կերպարանքը, հիւժուած՝ երկար, աննձնական տառապանքից, ցաւազնօրէն յայտնում էր, որ նա զգացել ու կրել է իր Հայածական ու մարտիրոսացած բոլոր ևղբայրների տանջանքները և որ նա արիւն էր թոթոլ բոլոր նրանց վէճերով և լացել նրանց արցունքով: Սակայն, այդ դէմքն ասում էր և այն, որ ինքը նրանցից չէ, որունք ընկճում են տանջանքի առջև և իրախիներին դէմ

գործւած ամէն մի ոճեր արծարծում էր նրա մէջ հաստատուն վճիռ՝ բնա չնեթարկելու դառն ճակատագրին և պատարածել աւելի լաւ օրեր՝ տրամադրելի բոլոր միջոցներով, սկսած ամենախաղաղիտ և խորթափանց բանականութիւնից, մինչև անխուսափելի բռնադատումը, երբ այլ ևս չկայ ուրիշ միջոց» (Պիեթ Բիլյար) :

Ահա թէ ո՛վ և ի՛նչ էր Քրիստափոր Միլթայէլեանը : Նա վետերանն է ոչ միայն Հ. Յ. Դաշնակցութեան, այլ և հայ յեղափոխութեան : Նա մէկն է նրանցից, որի անուն հետ սերտօրէն կապած է մեր կուսակցութեան ծագումը, անձուն ու սկզբնական շրջանի դժուարին գործունէութիւնը : Որպէս յեղափոխական, նա մարմնացումն է հայ ժողովրդի ազատագրական պայքարի մտքը և ու գործելակերպի՝ որպէս մարդ՝ կախարդական ու խորհրդաւոր մէկ անձնաւորութիւն, որը կարողացել է իր մէջ միացնել զգալուն ու բոցավառ սիրտ և քաղաքական սառն դատողութիւն, հոգեկան հմայիչ փափկութիւն և մարտնչողի կուռ կամք ու դաժան պաշարիւնութիւն :

Կենանքի նշանաբան ընտրելով Գեօթէի այն միտքը, թէ՛ «նա է միայն արժանի ապստոյթեան և կենքի, ով ամէն օր կուով նաճում է նրանց», մինչև վերջ հաստատարիմ մնաց այդ սկզբունքին՝ ղէպի պայքար մղելով բոլոր նրանց, ում սիրտը որ ընդունակ էր բարիսէրի Հայ ժողովրդի գարաւոր ցաներով ու յեղափոխական զգացմունքներով : Սակայն, ըստ Քրիստափորի, միայն նա համարձակութիւն և բարոյական իրաւունք ունի անձնելութեան հրաւեր ուղղել ուրիշներին, ով ինքը ատելիքը կը նետուի արեան դաշտ : Գուցէ, գործի շարժ էր էլ մէկ պահանջով, որ ընդհանուր հրամանատար կուի առկայի դիրքերում գտնի : Բայց Քրիստափորը իր բարոյական բարձրունքից չէր կարող միայն ղեկավարողի ու առաջ մղողի դերում մնալ : Եւ անձամբ նետուց «արեան դաշտ»...

Գժուար է համաձայնել Ակնունու այն տեսակէտին, թէ Քրիստափորը զրչի վարպետ էր : Ճիշտ է, ամբողջապէս կլանուած յեղափոխական գործնական պայքարով ու իր ծրագրերին հնոցուս ետևող, Քրիստափորը, համեմատաբար, զիչ անգամներ է շարժել զիրէ : Սակայն, այն, ինչ որ արտադրել է, եզակի տեղ է դրաւում մեր դրականութեան մէջ : Հայ հրապարակագիրներից և ոչ մէկը չունի Քրիստափորի կուռ տրամաբանութիւնը, սուր միտքը և ազդու ոճը : Մեր իրականութեան մէջ դժուար է մասնանշել մէկ ուրիշ գրածք, որը հասարակական մտքերի վրա աւելի ազդած լինի, քան նրա «Ամբոխային Տրամաբանութիւնը» :

Քրիստափորի գրական ժառանգութիւնը կազմում են ընդամենը մի քանի յօդուածներ : Սակայն, ինչ որ աւել է Քրիստափորը, արդիւն է ոչ թէ առանձնասենեակի աշխատանքի, այլ բիռում է երկար տարիների գործնական կենանքից : Տեսական մարդասէներ չէ, որ կատարում է նա. այլ խօսում է այն պայքարի փնտռելիք, որն ամբողջ մէկ տասնամեակ դարդեցրել անուշիկ Ասիայի բարձրաւանդակն ու արար աշխարհ : Եւ այդ շարժումն արդարացնելու համար Քրիստափորը, ըստ

պաշտօնի, չի հաղնում փաստաբանի սլատուճան : Վարպետ վրձինով նա նկարագրում է բոլոր այն դրութիւնները, որոնք առաջգրին հայ յեղափոխական թրժումը, և է՛լ աւելի վարպետօրէն ապացուցանում է, որ այլևս անհնար էր խոնարհել պատմութեան կոյր ընթացքի առաջ : «Կան ըրպէնեք ժողովուրդներ կեանքում, բացառաչում է նա, երբ կարելի է հաշտուել ամէն բանի հետ, բայց ոչ լուութեան» :

Ո՞րն է այն հիմնական հարցը, որ հարկադրում է Քրիստափորին «չհաշտուել լուութեան հետ» և ըմբոստութեան դրօշ ծածանել հայկական աշխարհում :

«Յաւելիալ արեան» հարցն է այդ, այսինքն՝ հայ ժողովրդի Ֆիդէլիական և ազգային-հաւաքական գոյութեան հարցը :

«Յաւելիալ արեան» — այս երկու բառերն արտայայտում են հայ ժողովրդի բովանդակ ողբերգութիւնը, այդ բառերի իմաստով է պայմանաւորում մեր ազատագրական պայքարի մօտաւոր նպատակը : Երեսուն տարի է, ինչ մեր հակառակորդները, առանց նուումնասիրելու, խորանալու և ըմբռնելու այդ բառերի նշանակութիւնը, անզուսպ ու անխմաստ քննադատութեան են ենթարկում Քրիստափորին և նրա ստեղծած գործը : Դրանցից շատերը, որոնք թւում և հայ աւաւջին մարքսիստները, Քրիստափորին դատում են ամբոխավարների շարքը, ոճանք համարում են հայկական կոտորածների պատճառ, իսկ ոճանք էլ, ինչպէս բուլեիները, հեղանքով են արտայայտում :

Սակայն, ինչպէս եղաւ, որ Քրիստափորը հրապարակ նետեց «յաւելիալ արեան» տեսութիւնը :

Պատմական ղէպերի բերումով, հայ ժողովրդի սուրբ մեծամասնութիւնն ապրում էր մի միջավայրում, ուր տիրում էր միջնադարեան աւատական կաւածատիրութիւն, ոստիկանական — բելլոքրատական վարչաձև, գինւորական գերիշխանութիւն, կրօնական մոլորեանդութիւն և ցեղային նեհակութիւն. այսպիսի միջավայրում, ուր մէկ կողմից հայ չինականի հարեւանն էր «բարբարոսական սպանողի ժողովուրդ քերդը», որը դարգացման շարունակ հագիւ է բարձրացել մինչև նահապետական ցեղական սկզբունքը և որը դեռ չունի ազգային գաղափարի ու ժողովրդական մի ամբողջականութեան հասկացողութիւնը, և միւս կողմից երկրի աէր ու տիրական տանիլը, որը իր մտքում ունէր «գիտակցօրէն ընդունած վճիռը՝ նազգեցնել հայերի թիւը Հայաստանում» : մի երկրում, ուր թագաւորում է անասման քմահաճօրքը և բացակայում է կենանքի, ինչի ու պատուի սպառնալուցութիւնը :

Քրիստափորը, սկզբութեան բերելով Պատրիարքարանի վաւերաթղթերն ու բազմաթիւ ուրիշ փաստեր և Ֆրանսացի, անգլիացի, բելգիացի, գերմանացի, ամերիկացի ու ուսու ճանապարհորդների, միտինարների ու պատմագէտների ուսումնասիրութիւնները, ամենահամոզեցուցիչ կերպով ապացուցանում է, որ «հայկական դատը» յարուցանելուց էլ առաջ հայ ժողովուրդը ենթակայ է եղել աննկարագրելի կեղեքման ու հարածանքի և դամոկլեան սուրբ միւռ էլ կախած է եղել նրա զլիխի՝ սպառնալով հայ ազգի վերջնական բնաջնջումը : Ես յայտն փաստերով հաստատում է, որ, դեռ ևս յեղափոխական կուսակցութիւնների կազմա-

կերպուելուց առաջ, վերոյիշեալ կացութիւնը ժողովրդի մէջ առաջացրել է ինքնարուխ բողոքի ցոյցեր և լուրսուտուկներ փորձեր :

19րդ դարում սկսած հայիական հոգեւոր-մշակութային վերածնունդը յղանում է ազատագրական-յրգափոխական գաղափարներ, որոնք բխում են հայ ժողովրդի կացութիւնից ու շահերից : Հ. Յ. Գալանկցութիւնը այդ գաղափարներն ինքնցնում է դէպի գանգուածները, որովհետև շոյժ ինչ նասարակական շարժում չէ կարող յարտել և, մտնանալ, յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգի մէջ, նրա ընդարձակ խաւերում : Գալանկցութիւնը, որպէս պայքարի միջոցներ, գործադրում է կազմակերպական աշխատանք, ցոյցեր, արշաւանքներ, Նրոսակային կամեր, դէմքերի փոխադրութիւն, տեւորական գործողութիւն և ժողովրդային շարժում : Բացի ինքնապաշտպանութեան միջոցներից, ելնելով ազգերի ինքնորոշման իրաւունքի սկզբունքից, Գալանկցութիւնը բարենորոգումներ է տեղական ինքնավարութեան պահանջ է դնում :

Այս ամենը, ի հարկէ, Գալանկցութեան ծրագրի, այսպէս ասած, իրաւական մասն է կազմում : Հայի համար քաղաքացու իրաւունք և ազատ ու սպանով աշխատանքի հնարաւորութիւն ձեռք բերելուց յետոյ միայն Գալանկցութիւնը կը կարողանայ իր ուշադրութիւնը կենտրոնացնել ծրագրի երկրորդ մասի՝ անտեսական անհասարակութեան վրա : Նախ՝ հայ ժողովրդի լինելը չլինելու՝ հարցը և սպա ընկերավարութիւն :

Ահա այս կէտի շուրջ է, որ զլուխ են բարձրացնում հայ մարքսիստները :

Վերը յիշած միջավայրն ու պայմաններն ի նկատի առնելով, Գալանկցութիւնը իր գործունէութեանը պէտք է տար համազգային բովանդակութիւն : Այնտեղ, ուր ժողովրդի բոլոր խաւերն ու դասակարգերը՝ քաղաքի բնակիչ ու կղերական, հարուստ ու շքեւոր, գիւղացի ու մշակ համահասարակ ենթակայ են նոյն՝ բնաջնջման վտանգին, բնական է, որ, այդ վտանգից դեմը պահելու համար գործող մի կուսակցութիւն, չէր կարող նրանց մէջ խտրութիւն դնել, այլ ընդհանրապէր, պէտք է աշխատէր բոլորին համախմբել նոյն դադափարի շուրջ՝ մէկ կուռ բանակ կազմել՝ դիմագրաւելու համար թշնամու անդապար յարձակումներին : Ինչպէս որ Վ. Չեքոնով է Գալանկցութեան մասին գրելիս ասում, «դասակարգային հակասութիւնները կարող են համբերել, նրանց կարելի է յետաձգել մինչև աւելի բախտաւոր ժամանակներ» :

Մարքսիստները գտնում էին, թէ Գալանկցութիւնը ազգային ընդհանուր գաղափարներ առաջադրելով՝ ոտնահարում է բանուր դասակարգի շահերը, մթազնում նրա դասակարգային ինքնազփոխութիւնը, վերացնում է դասակարգային հակամարտութեան օգտակարութիւնը և միմեանց դէմ թշնամացնում տարբեր պոպուլիստների աշխատաւորներին :

Գիտական ընկերավարութեան հիմնադիր Կ. Մարքսի տեսութեան համաձայն, գրամալուխը մարդկային աշխատանքի կուտակումն է : Դրամալուխը գոյանում է ի հաշիւ բանուրական աշխատանքի յաւելեալ ժամերի, որի արդիւնքն ամբողջպէս մտնում է՝ շահագոր-

ծող սեփականատիրոջ գրպանը : Այդ «յաւելեալ աշխատանք» դասն է, որ պէտք է պաշտպանել, փոխանակ տարելու « բուրձնաբերում - դեմոկրատիկ » ազգային ինքնորոշման հարցերով ու ինչ որ « երեսակայական » սահմանայ դատով . . .

Ահա նման տեսակետի դէմ էր, որ Գրիտտափորը ծառայաւ իր ամբողջ հասակով՝ թոթովախօս մարքսիստներին ուղղելով հետեւալ սպանիչ խօսքերը : «Նա մարդիկ, որոնք ուզում են հասարակել թէ իրենք «ուրիշ համոզմունքներ են դաւանում» այն ժամանակ, երբ կամ ոչինչ չեն անում ոչ մի տեսակ համոզմունքների համաձայն, կամ «յանուն դերագոյն շահերի» միայն թունաւորում են հասարակական կարծիքը և կամ օր ու գիշեր օղբ թնդացնում յանուն բանուրական «յաւելեալ աշխատանքի», բայց մնում են ստոյիկական սառնասիրտներ մի ամբողջ ժողովրդի «յաւելեալ արեան » դիմաց :

«Յաւելեալ աշխատանք» դատի արդարութիւնն ու իմաստը Գրիտտափորը շատ լաւ էր գիտակցում : Յեղափոխական այն դպրոցը, որը անցել էր նա իր երիտասարդական հասակում, մինչև ուղի ու ծուծը համակած էր ընկերավարութեան գաղափարով : Մինչև վերջ էլ իր մտանքակերպով ու անձնական կենսով Գրիտտափորը մնաց ջինջ ընկերավարական : Այդ ոգով էլ կազմեց Հ. Յ. Գալանկցութեան ծրագրի նախաբանը՝ «յաւելեալ աշխատանք» անունից խօսողների երևան դալուց դուռ շատ առաջ : Սակայն, ընկերավարութեան հասնելու համար անհրաժեշտ է մի շարք տարրական նախադրեալների իրականացում :

Նախ և առաջ պէտք է աշխատել, որ միևնոյն երկրում ապրող բոլոր ազգութիւններն ունենան հասարակ քաղաքացիական իրաւունքներ, որ հաւասար չափով կարողանան օգտուլ այդ երկրի կենսի խաղաղ պայմաններից ու սպանովին իրենց աշխատանքն ու ստացածքի տէր լինեն, որ իրենց հոգեւոր-մշակութային զարգացման հնարաւորութիւններն ունենան : Առանց այդ պայմանների, առանց ազգային ինքնորոշման սկզբունքի կիրառման, մի երկրում, ուր երաշխաւորւած չէ նոյնիսկ մարդ անհատի ֆիզիքական գոյութիւնը և աշխատանքի ապատութիւնը, անհնար է դասակարգային յաջող պայքար մղել : Ազգերի ինքնորոշման խնդրում հայ սոցիալ-դեմոկրատներն ըստած բացասական դիրքի անհիթեթութիւնն ապացուցանելու համար է, որ Գրիտտափորը իր յոգանձններից մէկում առաջ է բերում Կառուցուց քաղաք հետեւեալ կտորը . «Աշխատաւոր դասակարգերը իրենց բնական ու բարձրագոյն մասնակալութեան համար կարիք ունեն իրենց ազգերի անկախութեան ոչ պակաս, քան ընդհանուր ճանաչուցութեան, կապակցութիւններն և մամուլը ձայնութեան : Միջազգայնութիւնը չի հերքում ազգայնութիւնը, այլ նշանակում է միայն ազգերի ազատութիւն և հասարակութիւն : Ազգերի ինքնորոշման բացարձակ իրաւունքի տեսակէտը յետագային ընդունեց և Լենինը : Միայն Հ. Յ. Գալանկցութիւնն է, որ, իր դատախազների վճռով, զրկում է այդ սկզբունքը պաշտպանելու իրաւունքից . . .

Սակայն, հայ կեանքի դասն իրականութիւնը շատ

աւելի պերճախօս էր, քան բոլոր տեսակի քննադատ-
 ների սովորութիւնները: Հայ ժողովուրդը «յաւելիալ
 աշխատանքի» դասից նոսրաց ունէր «յաւելիալ արեան»
 դաս, որը լուծելու համար Հ. Յ. Գաշնակցութիւնն իր
 առաջին ծրագրի մէջ յայտարարում էր. «Մեր նպա-
 տանն է ապստամբութեան միջոցով Թիւրքաց Հայաս-
 տանի մէջ ձեռք բերել քաղաքական և տնտեսական
 ազատութիւն»:

Ժողովրդական զանգուածների մէջ դժգոհութիւնը
 իրենց վիճակից շատ խորն էր և բաւականին դրսևոր-
 ւած: Ազատութեան գաղափարն էլ բխում էր նոյն
 զանգուածների շահերից: Սակայն, այդ գաղափարը
 պէտք էր արմատացնել ժողովրդի մէջ և նրա խուլ ու
 եռացող դժգոհութեանը տալ կայմակերպւած արտա-
 յայտութեան ձև: Պէտք էր յեղափոխական ոգով դաս-
 տիարակել ժողովրդի միտքն ու պատրաստել ազատու-
 թեան պայքարի համար: Եւ այս աշխատանքն անհնար
 էր կատարել միայն խօսքի ու գրչի զարդով: Անհրա-
 ժեշտ էին նաև ուրիշ միջոցներ: Եւ ահա այստեղ է, որ
 երևան է գալիս Քրիստափորի իսկական հանձնարը:

Հայ ժողովուրդը պէտք է ունենայ ուժի պաշտա-
 մունք, պէտք է կայմակերպի ուժ և ուժով ձեռք բերի
 իր պահանջները: Առանց ուժի, մենք չենք կարող ոչ
 արժէք ներկայացնել օտարների մօտ, ոչ համաձայնու-
 թեան ու համբարչիտութեան եզր դնել հարևան քեռ-
 դերի ու ընդդիմադիր թիւրքերի հետ և ոչ էլ պաշտպա-
 նել մեր իրաւունքները: Բաւական չէ, որ գաղափարը
 յաղթանակի ժողովրդի մտքի մէջ: Գաղափարը վերը-
 նականապէս կը յաղթանակէ, երբ պատւանդան ունենայ
 ոյժը: Այս է Քրիստափորի տեսակէտը և այս ոգով է
 ընթացք տալիս Հայ ազատագրական շարժմանը: Մի
 նոր խօսք էր այս, որ մտցւում էր հայ իրականութեան
 մէջ:

Հայ յեղափոխական շարժման դործնական ընթացքի
 անհրաժեշտ տարրերն են կազմում, ըստ Քրիստափորի,
 ցոյցեր, արշաւանքներ, հրոսակային խմբեր, գէնքերի
 փոխադրութիւն, տեղորներ և ժողովրդային շարժում-
 ներ: Մի խօսքով՝ յեղափոխական կռիւր և կազմակեր-
 պութիւնը յեղափոխական կռիւր համար:

Ցոյցերը, արշաւանքները և հրոսակային խմբերը
 ճկարկակերպում են կուռղ ուժերը, ժողովրդականա-
 ցնում են բողոքի ճանաչարհը, կրթում են ժամանակա-
 կից սերունդը, վառ են պահում ժողովրդի դիմադրա-
 կան արմատները, հարաձուժում են թշնամու հե-

ղինակութիւնը թէ ներսում՝ ուսիական հպատակների
 աչքում, և թէ դրսում՝ օտարների առաջ, միատուժ են
 կոտավարչական շահերին, դրադիցնում են եւրոպական
 հասարակական կարծիքը և դիմադրողները... .

Ժողովրդային շարժումները, իրեն յեղափոխական
 աւելի խոշոր ձեռնարկներ, պարզ է, որ աւելի մեծ
 նշանակութիւն են ստանում: «Ամէն տեղ և ամէն ժա-
 մանակ ապստամբութեան գաղափարը կապւած է եղել
 այդ տեսակ շարժումների հետ և անքան վճռական դեր
 են ունեցել դրանք ժողովուրդների պատմական կեան-
 քում, որ ապստամբութեան անունով սկսած կռիւների
 դործնական նպատակն են կազմել միշտ»... .

Ձէնքերի փոխադրութեան, տեղորական գործողու-
 թիւնների և կազմակերպչական աշխատանքների ան-
 հրաժեշտութեան մասին խօսելը աւելորդ է, չորովհե-
 տե դրանք անհրաժեշտ միջոցներ են վերոյիշեալ գոր-
 ծանութիւնների համար:

Քրիստափորը ոչինչ չիմացի իր ընդգծած այս
 դրութիւնները իրականացնելու համար: Գերագոյն ճիգ
 էր թափում նա, որպէսզի ուժի գլխակցութիւնը դարձ-
 անէ իւրաքանչիւր հայի սեփականութիւն, քանի որ
 «կռիւի որոտումները, նւիրական գաղափարով սրբա-
 դործւած ուսգիի աղազակներն են, որ արտաշայտում
 են նրա կենսունակութիւնը, նրա հոգեկան արժանիքե-
 րը. դրանք են, որ ներշնչում են յարգանք դէպի մի
 ազգ և երաշխաւորում են նրա համար թէ համակրու-
 թիւն և թէ ինքնուրոյն ապրելու բարոյական իրա-
 ւունք»:

Ունէ ժողովուրդ, անվերջ հեծեծանքներով չէ, որ
 կարող է ձեռք բերել «ինքնուրոյն ապրելու իրաւուն-
 քը, այլ «յարատև կուռղ—յաճախ և երկար ժամանակ
 անյաջող՝ շնայած երբեմն նոյնիսկ իր լաջն ծաւալին»:
 Յարատև կուռ մէջ է ձեռք փրկութեան բանալին»: Ապա
 ուրեմն «պահպանե՛նք, շարունակե՛նք կռիւր, որպէսզի
 լայնանայ, ընդարձակի և ընդարձակելով՝ յարատե-
 ւի — ահա դէպի մեր նպատակը տանող ճանապարհը»:
 Միայն յարատև կուռ ճանապարհով է հնարաւոր
 պաշտպանել «յաւելեալ արեան» դասը, որպէսզի կա-
 բողանանք ընթանալ համամարդկային վեհ գաղափարի՝
 ընկերվարութեան ուղիով:

Ահա Քրիստափոր Միքայէլեանի դաւանած ուխտը:
 Եւ այդ ուխտի ճանապարհին էլ ընկաւ, կուռ առաջաւոր
 դիրքերում:

ԱՇՈՏ—ԱՐԾՐՈՒՆԻ

Մզ Էջ Բրիտապիտորի կեանքից

(Նիւթեր կեանագրութեան համար)

Մինչև 1898-ի վերջերս Գրիտապիտորը սպրում էր Կովկասում՝ մերթ ուսանող, մերթ ուսուցիչ, իսկ 1894 սպրիւնց սրբազրիչ «Новое Обозрѣніе» թերթի:

1895 թւի աշնանը Կովկասի և Ռուսաստանի դանաան վայրերում տեղի ունեցան բարձրագույն աշխր ընկնող հայերի ձերբակալութիւններ՝ թիւրքահայ ազատագրական շարժումին օգնելու ամբաստանութեամբ: Հոկտեմբեր 24-ին ձերբակալուեց նաև Գրիտապիտորը և 26-ին ուղարկուեց Բազւի բանտը: «Новое Обозрѣніе»-ի գրասենեակում ու Գրիտապիտորի բնակարանում կատարուեց խուզարկութիւն և առնուեցին մի շարք թղթեր ու նամակներ: Ի միջի այլոց ժանդարմների ձեռքը ընկաւ և «Եւնանիւրի Գրիտապիտորին» մակագրութիւնը կրող մի նամակ, որ գրել էին Բազւի դաշնակցական ընկերները, և մի ուրիշ նամակ հասցէազրուած Բազու Յովակիմեանին, որի միջոցով Գրիտապիտորը դրամ էր ինդրում բժ. Զալեանից և միտամանակ տեղեկութիւններ հաղորդում հայկական խնդրի մասին: Այս նամակները բաւարար հիմք էին, որպէսզի Գրիտապիտորը նետուի բանտ և ենթարկուի խիստ առանձնացման, և նրա դէմ սկսուի դատական հետապնդում:

Այս գործի մասին մեզ հասել են մի քանի թղթեր՝ պատճէնները Գրիտապիտորի ձեռքով գրւած 1895 թ. նոյեմբ. 7 և 1896 թ. փետր. 3 ընդարձակ դիմումնագրերի Բազւի ժանդարմական վարչութեան պետին, մէկ գրութիւն Քիֆլիսի դատաստանական պալատի դատախազին, տիկին Միբայէլեանի մի բողոքադիրը Բազւի նահանգապետին և Բազւի ժանդարմական վարչութեան ներկայացուցչի ու դատախազի օգնականի 1896 թ. մարտ 23 որոշմանգիրը Գրիտապիտորին 2000 ռուբլի գրաւականով ազատ արձակումը մասին: Փորձենք, այդ նիւթերի հիման վրա, ծանօթանալ Գրիտապիտորի կեանքի այդ հետաքրքրական էջին:

Պէտք է իմանալ, թէ ի՞նչ օրեր էին այն օրերը: Թիւրքահայկական կոտորածները խոռվել էին ռուսահայրութեան միտքը: Գաղթականները թափուում էին Կովկաս: Ամէն կողմ հանգանակութիւններ էին արւում՝ օգնելու համար Համալրի զոհերին: Տենդալին գործունէութեան մէջ էր և Հ. Յ. Դաշնակցութիւնը, որի ոգին Գրիտապիտորն էր: Գերազոյն ճիւղ էր թափում նա, բախում էր ամէն դուռ՝ նիւթական միջոցներ ճարելու համար: Անհասանական չէ, որ Դաշնակցութեան գիմումներին մասին որոշ հայեր տեղեկութիւններ տւած լինէին ռուս կառավարութեան, որը թշնամական աչքով էր նայում կովկասահայերի համակրանքի արտայայտութեան դէպի սահմանի միւս կողմը տառապող եղ-

բայրները: Այս վերաբերումի արդիւնք էին 1895-ի գանգաւածային ձերբակալութիւնները:

Հոկտեմբեր 26-ին Գրիտապիտորին փոխադրում են Բազւի բանտը, իսկ 28-ին արդէն տեղի է ունենում առաջին հարցաքննութիւնը: Չորս օր նա տառապում է անյայտութեան մէջ: Նա չի ուզում հարուել այն մտքի հետ, որ Ռուսաստանը թշնամի է դուրս գալիս թիւրքահայութեան: չէ՞ որ հէնց ռուս թաղաքականութեան շահը թելադրում է հովանաւորել Քիւրքիայի քրիստոնէաներին: Չէ՞ որ նա ժողովուրդը իր բոլոր խաւերով անխտր Ռուսաստանից է սպասում իր փրկութիւնը: Ինչո՞ւ են հապա այս տմարդի հարածանքները: Ինչո՞ւ հայ ազգասէները, փոխանակ քաշալերանք գտնելու, հարիւրներով նետուում են բանտ:

Եւ յետոյ, ինչպէ՞ս վարւել, ի՞նչ պատասխան տալ դատական քննիչին: Ան՞չ, թէ՛, այո՛, ինքը զգաղտնի կազմակերպութեանն՝ Դաշնակցութեան անդամ է, պարզէ՛լ Դաշնակցութեան գոյութիւնը, նպատակները, գործունէութեան եղանակները: Անուններ տա՛լ: Արդ՝ դեօք այս բանտարկութիւնը չօգտագործէ՞լ հրապարակային դատավարութեան և կուսակցութեան դաղափարների քարոզութեան համար: Ո՛չ, Գրիտապիտորը բաւական իրատես է, որպէսզի նման միջոցի չդիմի: Նա շատ լաւ գիտէ, որ յեղափոխական կուսակցութեան ուժի աղբիւրը գաղտնապահութեան ու խորհրդաւորութեան մէջ է, և որոշում է՝ ժխտել ամէն ինչ, հրաժարւել բոլոր վերագրումներից և ամբաստանութիւններից: Աշխատել հարցաքննութեան ընթացքը դարձնել ուրիշ ուղղութեամբ, քննիչի ուշադրութիւնը հեռացնել հայ յեղափոխականներից ու Դաշնակցութիւններից: Վերջինիս անունը նոյնիսկ մէջտեղ չկայ: Խօսում է Վուկոունեանի կուսակցութեանն՝ մասին:

Առաջին հարցաքննութիւնը, հոկտ. 28-ին, տեղի է ունենում Բազւի ժանդարմական վարչութեան մէջ և տեղում է բաւական երկար: Քննում է ինքը՝ ժանդարմական վարչութեան պետը ուրիշ քննիչների հետ միասին և տալիս է բազմաթիւ հարցեր, որոնք, ըստ երևոյթին, նեղում են Գրիտապիտորին. նա թէ՛ և ստորագրում է հարցաքննութեան արձանագրութիւնը, բայց երկար չի կարողանում հանգստանալ և շարունակ վրդովւում է ժանդարմական պետի ցոյց տւած բնախնդրութեան և աշտուրեան դէմ: Վերջապէս չի դիմանում և նոյեմբ. 7-ին բանտից ուղարկում է մի ընդարձակ բացատրագիր իր մօտից առնւած թղթերի և հարցաքննութեան ժամանակ իրեն ուղղած հարցերի առթիւ: Այդ քայլն անում է այն պատճառով, որ, ինչպէս գրում է ինքը,

Հարցաքննողները ցոյց են տւել «նախապաշարեալ կամ, առնական, կասկածամիտ վերաբերում դէպի իւրաքանչիւր իմ ցուցմունքը կամ ինձանից առնած նամակներէ ամէն մէկ խօսքը, մի վերաբերում, որը, ի մեծ ցաւ իմ, ես նկատուցի միայն Հարցաքննութեան վերջը, երբ վարչութեան պետը, աչքէ անցնելով իմ ցուցմունքները, ինչպէս նաև ինձանից առնած թղթերը, սկսեց ինձ ուղղել որոշ վերապատուող, լրացուցիչ կամ բոլորովին նոր Հարցեր»:

Ժանդարմական վարչութեան պետի այս վարմունքը մտա՛հել է տայիս Քրիստափորը, որ իւր խօսքերը կարող են մեկնաբանուել սխալ և ի վնաս իրեն, կարող են սխալ եզրակացութիւններ զարնառ դառնալ, ուստի որոշում է տաւ՝ բացատրութիւններ կը կրկնէ նաև դրատոր: Այդ բացատրութիւնները բռնոււմ են 10 մեծադիր ու մանրատու չէլեր, որով Քրիստափորը մէկիկ-մէկիկ ջրում է իրեն ներկայացուած մեղադրանքները: Նա աշխատում է համոզել, որ իրենից առնած նամակները բոլորն էլ վերաբերում են անձնական-ընտանեկան խնդիրներին: Այսպէս, Մարիա Բակրաձէն իւր մի քանի նամակներում խօսում է իւր ճամբորդական տպաւորութիւններէ կամ անմէլ իրերի առաքման մասին: Կնոջ ստամակները կտրուց վերաբերում են զանազան անասին խնդիրներին, — ու մանրամասնօրէն սնոււմ է պատմութիւնը Գոլոյր ուղարկուած երկու տաշտի՝ Լրեխայի լողանքի համար: Բագու, Յովակիմեանի միջոցով Թ. Չալեանին ուղղած նամակով խնդրում է դրամ որը Լեոնիկ Ներսիսեանի համար, որի վիճակով ինքը շատ մտահոգուած է և այլն:

Քննիչը Հարցաքննութեան ժամանակ դիտել է տւել, որ նամակի մէջ աւանդ է ոչ թէ «որը», այլ «որերը», հետևաբար, Թ. Չալեանից դրամ ուղւած է ոչ թէ այս ինչ, կամ այն ինչ որքի, այլ, ընդհանրապէս, թիւրքական կոտորածների հետևանքով զոյացած որբերի համար: Քրիստափորը պարտախանում է. «Ինձ Հարց տրւեց, թէ՛ «եթէ ձեր նամակում խօսքը Լեոնիկ Ներսիսեանի մասին է, ինչու՞ համար դուք գործ էք անում որքի՞ր և ոչ որբ արտոսյախոթի՞նք»: Ես բողոքում եմ ինձ վերաբերող այս ձևի դէմ և պնդում եմ, որ, ամենայն հաւանականութեամբ, Հարցը առաջ է եկել իմ նամակի սխալ թարգմանութիւնից. ո՛չ մի «որբերի» մասին խօսք չի կարող լինել իմ նամակում, բայց «որը» Լեոնի մասին ես խօսել եմ միանգամայն յստակ ու որոշ կերպով: Թերևս իմ նամակի պարոն թարգմանչին թիւրիմացութեան մէջ է ձգել «որբիկ» ձևը, որ «որը» բառից է ծագում («որբի» փաղաքական ձևը «որբիկ» է), բայց այդ դէպքում ես պարտական չեմ պատասխանել ուրիշ մեղքերի համար»:

«Յանձնելի Քրիստափորին» նամակի մասին դրում է. «Ինձ Հարցնում են, թէ արդեօք ուրիշի հասցէով և «Քրիստափորին» մակագրութեամբ նամակներ չէի՞ր ստանում ես: Այս առթիւ սասած լրացնելու համար կաւեխացնեմ. իմ նամակաղիւններին ես տւել եմ միայն իմ անունը և բացտապէս «Նոյովէ Օրորկերնիէի» իմ բազրութեան հասցէն, իսկ եթէ որե՛ք տեղ գտնուել է «Քրիստափորին» մակագրուած իմ նամակ (ինչ որ ենթադրեցի ինձ տաւ՝ Հարցերից), նա կարող է լինել ուղղւած բոլորովին ոչ ինձ (նամակը ես չեմ տեսել,

ինձ ցոյց չտւին) . նախ՝ թիֆլիսում Քրիստափոր անունը միայն ես չունեմ — ենթադրում եմ, որ շատ մարդ կայ այդ անունով. երկրորդ ապք անունը կարող է ունենալ պայմանական և ինձ հետ առնչութիւն չունեցող նշանակութիւն. վերջապէս, երրորդ, կարող է պատասհակ, որ որե՛ք շիթութիւն է տեղի ունեցել. օրինակ, նամակի հեղինակը դրել է, ասենք, երկու նամակ բոլորովին տարբեր անձանց և շիթութիւն է ծրարները, կամ նման մի բան, այդպիսի դէպքեր յաճախ են պատահում կեանքում և ոչ միայն առանձին անձերի, այլ և բաւական պատկառելի հիմնարկութիւնների հետ: Դրան օրինակ կարող է ծառայել ինձ հետ պատահած դէպքը, որ շատ հեշտ է ստուգել. Թիֆլիսից Բագու հասնելու ժամը արմատական վարչութեան մէջ ինձ տւին ժամացոյցիս և դրամիս փոխարէն մի ստացական, որի մէջ իմ անունս նշանակուած էր Քրիստափոր Մեիքեանց և ոչ Միքայէլեանց, ինչպէս որ Հարկաւոր էր: Իմ ցուցմունքի վրա վարչութեան պարոն Համահրը ուղղեց ազատունես, բայց որովհետև ուղղումը կատարեց ուրիշ թանաքով, իմ ազգանուն այլափոխութեան հետքերը, կարծում եմ, հիմա էլ դեռ հեշտ է նկատել յիշեալ ստացականի վրա: (Այդ ստացականը, կարծեմ, յանձնուած է բանտի պարոն ստաշին): Այդ դեռ քիչ է. այժմս իմ մօտ են բանտային վարչութեան կողմից տրւած կալանաւորման վկայականը և դրամի ստացականը, որոնց մէջ ես շարունակուում եմ անալլայ կուլել Մեիքեանց: Երբ եմ վերաբերումք նման սխալմունք կարող էր տեղի ունենալ երկու լուրջ հիմնարկութիւնների կողմից, ինչու՞ նոյնը չէր կարող պատահել նամակի հեղինակի կողմից ինչ որ ծրարի կամ հասցէի վերաբերմամբ»:

Այսպէս մէկիկ-մէկիկ բոլոր կասկածներն ու մեղադրանքները հերքելուց յետոյ, Քրիստափորը Հարցնում է. «Ինչու՞նք է իմ մեղքը, ինչ բանի համար եմ մեղադրում: Ատում են. պէտք է մեծ մարդ լինել ատող բանակաւորութեան պահանջներին դիմագրուելու համար: Զգում եմ այժմ, որ այդ ճիշտ է. ատող բանակաւորութիւնն ինձ ատում է. «դու յանցաւոր չես, հանցատացի՛ր ու սպասի՛ր», մինչդեռ ես անկարող եմ հետևելու իմ ատող բանակաւորութեան այս պարզ ցուցմունքին — և տառապում եմ: Տառապում եմ շատ պատճառներով և, ի միջի այլոց, իմ ձերբակալութեան առիթ ծառայող հիմքերի անողորմութիւնից... Կրկին հարցնում եմ. ին՞չն է իմ մեղքը: Արդեօք որե՛ք մասնակցութիւն Հայկական զործերում, որոնք տեղի են ունենում թիւրքիայում, մեզանից եօթը աշխարհներով հեռու: Որե՛ք ընկերութեան պատկանող, որ ես երազումս էլ չեմ տեսել: Ի՞նչն է: Ես դեռում եմ այս հարցը, որպէսզի աւելի կամ պակաս որոշութեամբ ձեւակերպւի իմ յանցանքը: Ես խնդրում եմ այդ, որովհետև կարծում եմ, որ այդ է լաւագոյն ձևը վերջ տալու քաջընդիւն ու մանր-մունր բաներին և արագացնելու քննութեան ընթացքը»:

Այս պահանջները, սակայն, մնում են անլուսի: Ժանդարմական վարչութիւնը չի շտապում և շարունակում է նիւթեր հաւաքել: Նոյ. Գ-ի Հարցաքննութեան ժամանակ ներկայացոււմ է մեղադրականը 320րդ յօդ-

ւածով*) : Քրիստափորը մտած է փակած առանձին սենեակում, մենակ, հեռու մարդկանցից և արտաքին աշխարհից : Այս փճակը ծայր աստիճանի ջղայնացնում է նրան : Նրա կենդանի, գործօն միտքը, աշխոթով լի հոգին չի կարողանում համակերպել արգելափակման տանջանքներին, մասնաւոր որ դուրսն էլ պատմական դէպքեր էին տեղի ունենում . թիւրքահայաստանի հարցը քանդարացած էր մարդկութեան խղճի վրա, յուզում էր ամենքին :

Քրիստափորը ամէն կերպ աշխատում է արգագանել իր գործի ընթացքը : Գուրսն էլ նոյն ուղղութեամբ աշխատում են ընկերները և կինը՝ Եւգենիա Կոնստանտինովնան, որը ձերբակալութիւնից մի քանի օր յետոյ, չորսամեայ երեխան հետը առած շտապում է Բազուօզնելու համար ամուսնուն :

Ոստիկանութիւնը հակողութիւն է նշանակում և քայլ առ քայլ հետապնդում է և տիկին Միքայէլեանին՝ դժարացնելով նրա դիմումները Բազուօզնել : Թէ է՞նչ ծանր օրեր է ապրում ինքը կինը, սոյց են տալիս նև տեւակ տողերը, որ նա գրել է նահանգապետին ուղղած իր բողոքաբարի մէջ :

«Մոյն տարւայ յունւար 25-ին, գրում է նա, իմ գրածս ընակարանը, Վորոնցովսկի և Գուբերնսկի փողոցների անկիւնում, եկաւ երրորդ քաղաքամասի թաղային հսկիչ Մագուրկիւիչը, գիտով փճակում, կոտրած սրով, և ինձանից պահանջեց անցապիւր, որը ես անիջապէս յանձնեցի նրան : Բայց նա առանց որևէ ստիժի իմ կողմից, սկսեց պողաւ, ապմկել, ամէն կերպ սպառնալ ինձ . «Նա՛, ես ձեզ ցոյց կը տամ, թէ ինչպէս կարելի է ինձանից ծածկել, ես ձեզ կը ձերբակալեմ, ես ձեզ դուրս կը շարժեմ Բազուօզն . գիտե՛ք թէ ինչ պտուղ էք դուք...» Ինչ գանձնատոցով մեր շուրջը հասաքեց ասն բոլոր քանկիչներին, բայց այդ նրան չէր խոզվում ընաւ, և նա շարունակում էր անվերջ վերաւորել ինձ : Զգալով ինձ յուսահատ, անպաշտպան և անելանելի դրութեան մէջ՝ ես փախայ մտայ իմ սենեակը և յետևիցս փրակելի դուրս : Այս հանգամանքը, սակայն, ունեցեալ շատ սխուր հետևանքներ . թաղային հսկիչը ներս ընկաւ սենեակս, սկսեց աւելի բարձր գանչել, աւելի բարձր սպառնալ և ի վերջոյ սկսեց հայհոյել ամենամարդկեղէտ խօսքերով, որ շարունակեց ուղիղ կէս ժամ : Իմ և սարեկան երեխան սկսեց դողալ, լալ և շուրջս զայարւել և այնպէս վախեցաւ, որ յետոյ մի քանի օր հիւանդացաւ...»

Եւ այսպիսի դէպքեր յաճախ էին պատահում : Տիկ. Միքայէլեանը դիմում է ոստիկանապետին, բայց սա էլ ուշադրութիւն չի դարձնում . ոստիկանական հետապնդումները չեն վերջանում : Այս բանում, ըստ երևոյթի, դեր էր կատարում ո՛չ միայն այն հանգամանքը, որ տիկինը ամուսին էր մի բանասերկալի, այլ որ ինքն էլ ծանօթ էր որպէս յեղափոխական և գտնւում էր ոստիկանութեան գազանի հակողութեան տակ :

Բանասիրի առանձնորանի սովորական պայմանները մի կողմից, հայ կենքի այն ժամանակայ յուզումնա-

լից իրադարձութիւնները միւս կողմից և, վերջապէս, կնոջ ու երեխայի կրած տառապանքները ծայր աստիճանի աշխուժում են Քրիստափորին : Նա դգում է, որ բանասերկութեան երկարագումը հետեւեալ է ժանդարմական վարչութեան քաղաքականութեան . ջղայնացնել բանասերկալին և դուրս կորզել խոստովանութիւններ : Միւս կողմից նա տեսնում է, որ անկախ էր ամէն բան հերքել և բուրբուխ անմասնակից ու հեռու ձևաւալ հայկական գործկերին . Իր գերբը այնքան աննշան չէ, որ կարելի լինէր հրաժարել և անգիտանալ ամէն բան : Ուստի վճռում է մի նոր և նոյնպէս ընդարձակ գրութեամբ պարզել իր տեսակէտները հայկական ինդրի և հայ-ուսական յարաբերութիւնների մասին : Գրութիւնը յանձնում է 1896թ. փետր. 3-ին, Բազուօզնի ժանդարմական վարչութեան պետին :

Քրիստափորի կենսագրութեան համար այս թուղթը ներկայացնում է որոշ կարեւորութիւն, այդ պատճառով մենք կը տանք նրա լրիւ թարգմանութիւնը : Թուղթը կարգաւրտ ընթերցողը մոռանալու չէ, որ նա գրւած է բանտում և յատուկ նպատակով, հետևաբար որոշ արտայայտութիւններ ու մտքեր պէտք է դիտել նա՛յ լրիւ տակ : Ուրիշ պայմաններում Քրիստափորը, ի հարկէ, կարտասայուէր այլ կերպ :

Ա՜ս այդ թուղթը .

«1895թ. հոկտեմբեր 21-ին ինձ խուզարկեցին ճնովոյէ Սորոքէնիչից՝ ի դասնեակում և իմ ընակարանում, թիֆլիսում, յետոյ ձերբակալեցի, աւելեցի բանտը և այնտեղից նոյն ամսի 26-ին անդադրակեցի Բազու, ուր այդ ժամանակից ի վեր գտնւում եմ նահանգային բանտի ծանր կողպէքի ետեւը :

Նման խիստ վերաբերումը դէպի ինձ ճննչութեան կողմից (չափազանց խիստ նոյնիսկ անկախ այն միջադէպերից, որ ես այրեցի այս ժամանակամիջոցում և որոնց հետ դժարութեամբ է հաշտուել մարդկային հոգին) ուղղակի գարձանք է պատճառում ինձ և ստիպում է մտածել, որ ճննչութիւնը շարունակում է հաստատ կենալ իր մեղադրանքի վրա, որ ես «պատկանում եմ զադունի ընկերութեան, որը նպատակ է դրել ապստամբութիւն առաջ բերել թիւրքիայում» և որ, բացի այդ, կատապարտութիւնը մե՛ծ կարեւորութիւն է տալիս այդ ենթադրեալ «զադունի ընկերութեան» : Ուստի ես վճռեցի յայտնել մի քանի ընդհանուր և անձնական շարժառիթներ, որոնք հերքում են յիշեալ մե՛ծ մեղադրանքի արգարացիութիւնը :

Ա՜ս ըստըովին առաքիայական տեսչները : Թիւրքահայերի վերջին 5-6 տարւայ կենքի յայտնի մոմենտներից և ո՛չ մէկում — ինչպէս Պոլսի ցոյցը 1890 թ.ին, Մասնոյ հայերի կոտորածը 1891-ին, Պոլսի ցոյցերը անցաւ 1895թ. սեպտեմբերին — կարելի չէ ցայց տալ գէթ մի հաստիկ առաստիպատակ հայի մասնակցութիւնը, մի բան, որ չէր կարող պատահել, և թէ՛ ես այդ դէպքերի նախաձեռնութիւնը թիւր Կովկասից : Դրա հետ միասին, այն ցաւալի փաստը, որ յղացի էր Կուլենեանի կուսակցութիւնը՝ 1890-ին ներխուժելու համար թիւրքիա՝ նպատակ ունենալով պաշտպանել հայ ազգաբնակչութիւնը յարձակող ջերմերի դէմ, ապա 5-6 տարւայ ընթացքում երկու-երեք հայերի ձերբակալութիւնը թիւրքիայում և նոյնիսկ նրանց թիւրքիա

*) Օրէնքով արգելւած գազանի կազմակերպութեան անդամակցելու և թիրաքիայում պետական ռեժիմը բռնի տապալելու մարտասանութիւն :

մտնելը՝ կատարել է միայն 1890թ. ցոյցերից յետոյ, կամ 1894թ. Սասնայ կոտորածից երկար ժամանակ անցած: Նմանապէս զրամական հանգանակութիւնները յօղուտ թիւրքահայերի, որոնք տեղի ունեցան անցեալ տարի կաթուղիկներ կողմից, ինչպէս և նոյն նպատակով հայերէն թերթերի խմբագրատները հասնող նէրոները միայն հետանքներ էին հայերի տարակի կոտորածի Սասունում, ուր 10-15 ջերդերի պատճառով, որոնք մնասել էին հայերից՝ վերջններս տաւարը ջերու ժամանակ, զոհեցին նոյնքան հազար սասունցիներ: Այս հանրամասնօթ փաստերի մասնանշումով ևս ուզում եմ հաստատուի, որ հայ հասարակութեան, մտաւորականութեան և նոյնիսկ Կոնկոնեանի կուսակցութեան ծնունդ տուող դասպահմանի հետաքրքրութիւնը դէպի թիւրքահայերի վիճակը ինքն րատ ինքեան հանդիսանում է կուստրական, անանցեալ երևոյթ, որը կարեւոր է նախ և ստղծ թիւրքիայի կեանքի գարկերակից: Բայց այդ դեռ զիչ է: Այդ հետաքրքրութիւնը հայ հասարակութեան ու մտաւորականութեան կողմից պայմանաւորւած չէր միայն թիւրքիայի դէպքերով: Եւ եթէ ոչ աւելի մեծ, գէթ միևնոյն շափով կարելի է միշտ և մեր կառավարութեան ու այլ պետութիւնների վերաբերմանից դէպի թիւրքիայի դէպքերը: Այսպէս, երբ Սասնոյ կոտորածի առաջին լուրերը ստացեցին Կողկասումում ու հաղորդեցին հայկական թերթերի կողմից, որանք, ճիշտ է, շատերին չլմեցրին, շատերի սրտերում արձագանքեցին ցաւազին կերպով, բայց ընդհանուր, աւելի կամ նազ լարւած սպասուրութիւն չգործեցին, մինչև որ նոյն լուրերը շթականցեցին և մարաքողաքի մատուցի մէջ և յայտնի չդարձաւ, որ դիւանադիտութիւնը հետաքրքրել է նրանցով: Այս ընտրոչ երևոյթը, սակայն, արդեւնք չէ բացատրի թրմրածութեան և անտարբերութեան դէպի թիւրքահայ եղբայրները. դա բացատրուած է այն դիւանագրութեամբ, որ մի ուժեղ ստգրակ է հարկաւոր թիւրքահայոց վիճակը թեթեւացնելու համար. նա բացատրուած է սեփական անգորութեան դիտակցութեամբ — այն խորունկ դիտակցութեամբ, որ նոյնիսկ եթէ բոլոր կողկասահայերը մի մարդու պէս մի գեղեցիկ օր որոշին թիւրքահայ եղբայրներին տալ իրենց ամբողջ կարողութիւնը՝ և՛ դրամը, և՛ գաւակներին, դարձեալ չէին կարող յաղթել թիւրքիային, այդ պատմականօրէն կազմակերպւած և զարեի կեանք ունեցող պետութեան, որքան էլ նա խախտւած լինի վերջին զարե ընթացում: Այսպիսով, զանազով միշտ կրկնակի կախման մէջ թիւրքիայի երևոյթներին և մեր ու արտասահմանեան դիւանադիտութիւնների վերաբերմանից դէպի այդ երևոյթները, անգրկողկասեան հայ մտաւորականութիւնը ոչ միայն չէր կարող նպատակ ունենալ «թիւրքիայում ապստամբութեան բարձրացնել», այլ և, եթէ կարելի է այսպէս արտայայտել, նա ինքն էր «բարձրանում» միայն յիշեալ գործունեի ազդեցութեան տակ: Իսկ ի՞նչ էր անում նա, այդ մտաւորականութիւնը, Լրբ «բարձրանում էր»: Ի հարկէ, հեռուց չէր աշխատում առաջնացնել և ապստամբութեան մղել թիւրքահայոց կեանքը. մարդկային բնական պահանջը՝ «զոնութեան հասնել» տուապողին — ահա միակ բանը, որ բերում էին «բարձրացման» նման պահերը: Եթէ «Կարմիր Ուշի

Ընկերութիւնը» Տրայիցոնի կոտորածից անմիջապէս յետոյ, համաձայն Ռուսաստանի Հեռագրական Գործակալութեան, ուղարկեց այնտեղ թշչիով ու դեղերով մի նաւ վերաւորներին օգնութիւն հասցնելու նպատակով, եթէ բովանդակ քաղաքակիրթ աշխարհի մամուլն ու հասարակական կարծիքը կարող էին անկեղծօրէն յուզել թիւրքիայից ստացուող օսարափելի լուրերի ազդեցութեան տակ, իսկ ինչ որ ամբիկուհներ նոյնիսկ, Սասունի վկայեցողութեան մանրամասնութիւնները լսելիս, անզուտոյ հեկիսակ, ոչինչ զարմանալի բան կարելի չէ տեսնել այն բանի մէջ, որ անդրկողկասեան հայ մտաւորականութիւնը չէր կարող անտարբեր վերաբերում ցոյց տալ դէպի թիւրքահայերի տխուր ճակատագիրը. հայկական դիւանքի այդ հեկատութեան, արիւնքով ներկւած և վերաւորածներով ու սպանածներով լեցւած փողոցները, այդ անօրինակ դաժանութիւնները փոքր երեխաների և անպաշտպան կանանց վերաբերմամբ, յուսահատութեան այդ ճիգերն ու զարհուրանքի աղաղակները, որոնցով բնւած էր երկիրը, սովածները, ցրտահարները, որբերը ու անօնականները — այդ բազմութիւնները, ցնցող հաւաքանքները զարհառա բանտերից՝ իրենց կախարաններով ու հաւատաքնական տանջանքներով — այդ ամենը, ի հարկէ, աւելի մօտ էր հայերին, քան ուրիշ որեւէ մէկին: Այս այսպէս է. բնական է, ուստի և հասակնայի է:

Յետոյ: Ոչ որի համար գաղտնիք չէին այն ընկերային-պատմական հիմքերը, որոնց հիման վրա զարգանում են դէպքերը թիւրքիայում. ընդհանուր-մահմետական կրօնական մոլեռանդութիւն, թոյլ, բուրբովին այլասերւած, տգէտ, օրէնքներ չլիսացող թիւրք վարչութիւն և դժբախտ հարեանութիւն խաղաղ հողագործ, նստակեաց հայ ազգաբնակիութեան՝ կիսավայրենի, դեռ ևս վաչկատուն կեցեցողով ապրող քերթ ցեղերի հետ — ահա այն հողը, որ ստեղծել է զարեւրով և որի վրա խաղացում է թիւրքահայկական դաժան սղբերգութիւնը: Արդ՝ ի՞նչ դրոժ ունեն այստեղ առանձին անհատները «ապստամբութիւն բարձրացնելու» իրենց կամքով: Բացարձակապէս ոչ մի հիմք չկայ կարծելու, որ ինձ, ինչպէս և, ենթադրում եմ, միևնոյն գործով ձերբակալւած ուրիշներին համար, հասարակական երևոյթներին յարեականութիւն գոյութիւն չունի և որ մեր կարծիքով մի ամբողջ ժողովրդի ապստամբութեան պէս մի խոշոր երևոյթ կարելի է «բարձրացնել»: Վերջապէս, շատ կը գտնեն մեր մէջ մարդիկ, որոնք կարող են հաստատուի, թէ այդ չպիտի նախակէր մղել ժողովուրդը դէպի թիւրք-բարդական սպանդանոցը, որտեղից էլք չկայ այլ ևս: Կամայ սկսումայ ևս ստիպւած եմ սահմանափակել այս ընդհանուր նկատողութիւններով, որովհետև ահա երեք ամսից աւելի է քննութեան ընթացում ևս չեմ տեսել ոչ մի փաստ կամ վաւերացում, որոնք կարող էին խօսել յօղուտ նման նպատակի գոյութեան: Ամբողջ այս առածը վերաբերում է միջազգրական բանաձեւեր երկրորդ մասին — «թիւրքիայում ապստամբութիւն բարձրացնելու» նպատակին, և եթէ քննութիւնը մերժէ ուշադրութիւն դարձնել առաջ բերւած նկատողութիւններին, պէտք կը լինի ընդունել, որ նա բացարձակա-

պէս խորտակում է բանաձեռի ամբողջ այս երկրորդ մասը :

Գիմում եմ բանաձեռի առաջին մասին, որ ընդունում է «գաղտնի ընկերութեան» գոյութիւնը: Կը սկսեմ թերի բոլորովին յետադարձական պայմաններով: 1890 թիւ Պոլսի ցոյցից յետոյ Անդրկովկասում սկսեալ որոշ եռ ու գեղից յետոյ, 1891 թիւից մինչև 1894թ. Սասնոյ ջարդերը և Ռուսաստանի ու միւս պետութիւնների միջամտութիւնը նկատուած է կատարեալ անուշադրութիւն դէպի թիւրքահայերի կեանքը, կարծես բոլորովին մոռացըբրութիւն է տրուած նրանց գոյութիւնն անգամ: Բայց Սասնոյ կոտորածը և պետութիւնների միջամտութիւնը 1894 թիւ վերջից սկսած նորից յիշեցնում են ուսանալայերի թիւրքահայերի վիճակը: Մղումը այս անգամ, անկասկած, զորաւոր էր և դրա համեմատ և հետաքրքրութիւնը դէպի հարցը շատ էր դեմարտայնում 1890-ի տրամադրութեանը: Բայց և այնպէս, ոչ այդ մղումի ոյժը, ոչ էլ տպաւորութեան արտակարգութիւնը չէին կարող Կովկասում «գաղտնի ընկերութիւն» առաջ բերել: արևի ծագած տեղը մարդիկ մոմ չեն վառում: Եւստով, Սասնոյ կոտորածից յետոյ կեանքը հայ մտաւորականութեան առջև օր օրի վրա ահա թէ ինչ փաստեր էր գնում: Մենք տեսնում էինք մեր Պոլսի դեպպանի ետևադուն պահանջը Սասնոյ համար յանձնատողով նշանակելու, ուստ ներկայացուցել համակրելի գործունէութիւնը յանձնատողովում, Ֆրանսիայի աշակցութիւնը, որ արդիւնք էր բացառապէս Ռուսաստանի միջամտութեան, և դեպպանի գործօն մասնակցութիւնը բարեկորուցման ծրագրի մշակութեան մէջ: Մենք լսում էինք արտաքին գործից նախարար իշն: Լորանով-Ռոստովսկիի խօսքերը Պետերբուրգում կաթուղիկոսի ընդունելութեան ժամանակ, թէ՛ «նորին կայսերական մեծութեան անձնական կամքով պաշտպանութիւն ցոյց պիտի տրել թիւրքահայերին»: Մենք դիտէինք կաթուղիկոսի տրուած արտօնութիւնը՝ հանգանակութիւն անելու ի նպաստ թիւրքահայերի, նոյն նպատակով հայ թերթերի խմբագրութեանց մեջ ջոցով նշեցներ տալու հնարաւորութիւնը և թիւրքահայ պապախտ գաղթականների երևումը Կովկասում, որոնք ամէն ոք աղատ էր անմիջապէս իր օգնութեան լուման հասցնելու: Մենք հետևում էինք մամուլին և, ի հարկէ, չէինք կարող չնկատել՝ Ռուսաստանի Հեռագրական Գործակալութեան Հաղորդագրութիւնների յարատւութիւնը հայկական հարցի գաղափար մասին, դրա զանազան բարենպաստ պայմանները մամուլի լաւագոյն օրգանների մէջ, այլ և ուստ մամուլի համակրական վերաբերումը՝ դաւառական թերթերից սկսած մինչև մայրաքաղաքի տասնեակ լրագրիները: Այսպէ՛ հայ մտաւորականութեան աչքի առջև տեղի ունեցան հետևեալ գէպերը: մեր Պոլսի դեպպանի պահանջով թիւրքական բանտից անմիջապէս ազատ արձակելց Ախալքալաքի բնակիչ Օհաննիսովը, որ զրկւած հայերի դուրսն անցած, անցեալ տարի ամառը, ձերբակալուել էր թիւրքերի կողմից: (ՎՊոս. Վեդ.>ի հաղորդագրութիւն), այլ և մի քիչ առաջ գաղտուել էր Վարդպատրիկովը, ուսանալատու մի հայ, որին թիւրքական դատարանը դատապարտուել էր մահանալ պատժի (հայկ. թերթեր): ինչպէս վերև յիշուց, «կարմիր թաշի Ընկե-

րութիւնը» մի նաև ուղարկեց Տրպալիցոյ վերաւորիակներին օգնութիւն հասցնելու համար. համակրանքի արտայայտութիւնը արևմտեան մամուլի և հասարակութեան մէջ դէպի հայերը: Գլադստոնի, Արպալի գուբաի և ուրիշների ճառերը հայերի օտրին կազմակերպուած հրապարակային ժողովներում և այլն և այլն: Այս բոլոր տեսանքերի համագործութիւնը չէր կարող չհամոզել ուսանալայերին, որ քանի որ իրենց երաւոյակեցների օգտին աշխատում են այնպիսի հզօր գործօններ, որպիսին անպայման ներկայանում են մեր կառավարութիւնը, և երաւոյական դիւմապիտութիւնը, մեր և օտար մամուլը և այլն,— իրենց մնում է միայն աղօթել ամենարարձրելիին, որ այդ գրութիւնը չլիտխի:

Ուրեմն, գաղտնի ընկերութեան կարգը կա՛ր: Վերև յիշուած պայմանների առաջացած միջնորոտում կարո՞ղ էր ծագել, ապրել ու գործել «գաղտնի ընկերութիւնը»: Ի՞նչ պիտի անէր նա: Իսկ եթէ թիւրքահայերի կեանքի սուր վայրկեաններին նրանց հարցի հանդէպ ցոյց տրւած աւելի կամ պակաս կենդանի հետաքրքրութիւնը համարելու լինենք ինչ որ նպատրինական աշխատանք, այն ժամանակ անպայման պէտք է ենթադրել, որ նման վայրկեաններին առաջ են եկել շատ և շատ «գաղտնի ընկերութիւններ», որովհետև ամէն մի մարդկային կեղծարանքից չզրկւած հայ մտաւորական իր միջակայրով (աղգակցութեամբ, հայրենակցութեամբ, բարեկամութեամբ, ծանօթութիւններով) նման դէպքերում կարող է ներկայացուել ոչ-անտարբեր դէպի իր ժողովուրդի կեանքի այն երևոյթները, որոնցից ցնցուած է ամբողջ աշխարհ, բովանդակ զարգակիր թէ՛ մարդկութիւնը: Ես կասեմ նոյնիսկ աւելին. հայ մտաւորականութեան կեանքը 93 թիւ վերջերից սկսած, ամենայն հաւանականութեամբ, կարող է տալ մէկից աւելի օրինակներ, երբ, թիւրքահայում տեղի ունեցած կոտորածից յետոյ, առաջ է եկել ընդհանուր ցանկութիւն պարզելու մերկ ճմարտութիւնը, այսինքն աղէտների չափը, ազգաւորականութեան կարիքի աստիճանը և այլն, որը, ի միջի այլոց, աւելի կամ պակաս կենդանի նամակագրութիւն է առաջ բերել ոչ միայն մօտիկ մարդկանց, այլ յաճախ և բոլորովին զիջ ծանօթ մարդկանց միջև: Բայց բաւական է դէպի սեփական ժողովուրդը ցոյց տրուած միայն այսքան հետաքրքրութիւն, նրա իրական դրութիւնը հասկանալու մի հատիկ ցանկութիւն, միայն կարեկցութիւն դէպի ճնշած զանգաձեռները և օգնելու պարտատակամութիւն, որպէսզի այս կամ այն մարդկանց շրջանակի ճանաչելի գաղտնի ընկերութիւն»: Կարծում եմ՝ ո՛չ, թէ՛ կողոպ այդ ամենը շատ պերճախօս կերպով արտայայտուած էլ լինի, օրինակ, այս կամ այն անձի նամակագրութեան մէջ:

Ի հարկէ, այստեղ ես չեմ կարող չնախատեսել աւարկութեան հնարաւորութիւն. ինձ կարող են մատնանշել իմ ծածկանունը այն նամակում, որ զրել էի Յովհն (Իբրև միջնորդի իմ և ընկերոջ միջև), այլ և յիշեալ նամակի բովանդակութեան առաջին մասը: Յուցմունքների մէջ ես արդէն բացատրել եմ, որ Յովհն-ի հասցէն և ծածկանունը ես գործ եմ ածել մի անգամ միայն: Ինձ մնում է աւելանելիք քիչ բան. նման նախազրուցացումների դիմելը բացատրում է

սոսկ վայրկեանի տրամադրութեամբ, երբ ամենիի համար անպատասխան իրարմ կողմասի գանազան կէտերու սկսեցեցին ձերբակալութիւններ: Եւսմակի առաջին մասի բովանդակութիւնը, իբրև հետեանց այդ ձերբակալութիւնների, իր հերթին պայմանաւորում է թէ ծածկանունը և թէ Յով.—ի հասցէն: Այսպիսով, մենք գործ ունենք մի ժամանակուոր, երակի, պատահական երևոյթի հետ և ոչ որևէ սխտամի: Վերջապէս, ես պնդում եմ, որ այդ փաստաթուղթին էլ հերիք չէ բնա հաստատելու համար իմ մասնակցութիւնը ինչ որ զգալունի ընկերութեան» մէջ:

Թերևս քննչութիւնը ենթադրում է, որ որևէ կապ կայ անդրիկովկասեան հայ երիտասարդութեան (մտաւորականութեան) և արտասահմանի հայերէն հրատարակութիւնների միջև: Բայց նախ՝ ոչ ոք աշխարհում չէ կարող արդէիկ Արևմտեան Եւրոպայում ապրող հայերին գրել ու հրատարակել իրենց ուղածը. երկրորդ՝ յիշեալ հրատարակութիւնները գտնելով չենու հայկական կենտրոններից, չենց դրանով արդէն բոլորովին կորած են իսկական հայ հասարակութիւնից և երրորդ՝ միանգամայն հասկանալի պատճառներով (զբաքնութիւն) նրանք չափազանց քիչ ու սակաւ են հասնում Կովկաս: Ուստի և դրանց համար պատասխանատու դարձնել ուսահայտակներին կամ խօսել նրանց նշանակութեան, ևս առանկ ուսահայտակների աշխարհահայեացքի վրա արած ազդեցութեան մասին, առնազն ծիծաղելի է:

Ընդհանրացնում եմ բոլոր միջև ալթիմ սաւածը: Եթէ անդրիկովկասեան մտաւորականութիւնը իր վերաբերումով դէպի թիւրքահայ կեանքի երևոյթները միշտ գտնուել է թիւրքիայում կատարած դէպքերի և Ռուսաստանի քաղաքակրթութեան ներդրումներին տակ, եթէ, հետեանք, թիւրքական գործերում նա առանձնութեան, գործոս դերի յաւակնութիւն չի ունեցել, եթէ անդրիկովկասեան մտաւորականութեան հետաքրքրութիւնը թիւրքահայոց ճակատագրում սահմանափակուել է լոկ «տառապաններիս օգնելու» կրօնաորական դերով, եթէ թիւրքիայում կատարող դէպքերը ինքնին արդէն բաւարար չափով բացատրուում են տեղական պայմաններով առանց որևէ կապ ունենալու անձերի կամ հասարակութիւնների դերի հետ, եթէ «պատամութիւնը բարձրացնել», անկամ եթէ տրամաբանորէն հնարաւոր էլ լինէր, պիտի նշանակէր ժողովրդի բարտը վտանդի ենթարկել, եթէ մեր կառավարութեան քաղաքակրթութիւնը եղել է այնքան բարենպաստ, որ վերացնում է զգալունի ընկերութիւն» կողմելու ամէն մի իմաստ, արւած ձեւերով գործող մարդկանց խմբերին կարելի չէ զգալունի ընկերութեան» շարքին դասել, եթէ, վերջապէս, քննչութիւնը չի կարող գործի մէջ ցոյց տալ անվիճելի, անհրաժեշտորէն յատուկ նշանակութեան, — ապա ես իրաւունք ունեի 1895թ. նոյ. Թ-ի հարգաքննութեան ժամանակ մեթօնի պատճական օրէննադրի իմ դէմ ուղղած 320րդ յօդածը և այժմս էլ շարունակում եմ պնդել այդ մեթօնումի վրա:

Սակայն, ես լիովին արտայայտուած չէի լինի, եթէ մի քանի խօսք էլ չսաչի իմ անձնական վերաբերումի մասին դէպի թիւրքահայկական հարցը, մի վերաբե-

րում, որ, համարձակուած եմ կարծել, ընդհանուր է իմ ապրած բովանդակ միջավայրի համար:

Ես չեմ ծածկի ոչ իմ համակրանքը դէպի թիւրքահայերը, ոչ էլ տեսութիւնս դէպի թիւրքերը: Միայն չբխեմ, ինչի՞ եմ պարտական իմ այս վերջին գրաւորումի համար՝ արդեօք այն բանին, որ պատկանում եմ հայ ազգութեան, թէ՞ ոուս պատմութեան ու զբաղանութեան ազդեցութեան: Ռուսաստանի պատմութիւնը վերջին համարայ երեք դարի ընթացքում, առանց մէկ հատիկ օրինակ տալու Ռուսաստանի և թիւրքիայի դաշնակցութեան, մէկից աւելի պատերազմների պատմութիւններ է անում թիւրքիայի հետ, ամէն դար: Իսկ զբաղանութիւնը այս տեսակետից այնպիսի ընդարձակ ներթ է տրամադրում, որ թող թոյլատրուի այստեղ յիշել միայն չորս տող «Իսուսեղիտի 1854թ. դէպքերի առթիւ գրած բաւական մեծ ոտանաւորից: Երբ 1853 թ-ի դաշնութեան յաղթական պատերազմը, որ այնքան բարի հետեանքներ ունեցաւ բաղկանեան քրիստոնեաների համար, Անգլիայի նենդամտութեան նորհու յանգեց թիւրքիայի, Ֆրանսիայի և Աւստրիայի պատերազմին Ռուսաստանի դէմ և ապա 1854—55թ. Որիմի պատերազմին, հանձարեղ զբաղուն ու խկական ուս մարդը յիշեալ ոտանաւորի մէջ, ի միջի այլոց, բացազանցեց.

Քրիստոնեան՝ քիւրքիի հետ Քրիստոսի դէմ,
Քրիստոնեան՝ պաշտպանը Մահմետի՛,
Անօ՛ք ձեզ, դաւաճաններդ խաչի,
Անօ՛ք սաւաւածային լոյսը մարողներդ...

Ճիշտ է, ամօթը հասցեագրւած է Եւրոպային, բայց պարզ է, որ մեծ հեղինակի դարոյթը բխում է նրա բացասական վերաբերումից դէպի թիւրքերն ու մահմետականութիւնը: Այս՝ մէկ:

Երկրորդ՝ ես, ի հարկէ, առիթ եմ ունեցել մտածելու թիւրքահայերի ներկայ վիճակից զուրս զայու հնարաւորութեան մասին: Թալան, կողոպուտ, ամէն տեսակ բռնութիւններ, անձի իրաւազրկում բոլոր տեսակ տներից, ընտանեկան պատու անապօրուութիւն, ամէն կարգի հարստարութիւններ ու չարասնութիւն, տարապայմանօրէն վայրենի հարկային կարգեր, կրօնական անհանդուրժողութիւն և այլն, — ահա, ընդհանուր առմամբ, այն զարհուրելի պայմանները, որոնք երկիրը վեր են ամել իսկական դժոխքի, ուր խաղա անկէն որոնել և կարելի չէ իրենից ապարդիւն ջանք: Այս պայմաններն ընդհանուր պատճառների վերածելով՝ ես գտնում էի, որ նրանք բխում են այն հարեանութիւնից, որ ահազին տարածութեան վրա հայերն ունեն թափառաւորիկ ջերդրելի հետ, ապա՝ կրօնական հակաբարտեթիւնից և վարչութեան ու արդարադատութեան բացակայութիւնից: Ուստի, ինձ միշտ թւացել է, որ բաւական է երկրին տալ ուժեղ, տիրական, դէպի մշակոյթի շահերը անխնայօրէն նախանձանդիր մի վարչութիւն, կանոնադրել հարկային գրութիւնը և թէկուզ միայն Հասարակացնել քրիստոնեայի և մահմետականի իրաւունքները դատարանի առջև. — և երկար ժամանակով կարելի կը լինէր խաղապանել երկիրը, փրկել ամբողջ հայ քնակութիւնը իսկական հոգեվարքից: Աւելին անկարելի է փոփաքել. նախ՝ որովհետև այս քարեղաւունքների մէջ է ամփոփուած այն

էականը, որ հարկաւոր է թիւրքիայի հայ ազգաբնակիւթեան՝ համար, երկրորդ՝ որովհետեւ այս տարրական, անասմանօրէն անհրաժեշտ պայմաններն էլ ահա 17 տարեաց աւելի է չնն կարողանում ձեռք բերել ինքնինի դաշնագիր ստորագրող պետութիւնները: Վաշկատուն և նստակեաց կենցաղները, ինչպէս յայտնի է, ներկայանում են քաղաքակրթութեան երկու տարրեր ստտիւաններ և առաջինի բարելոջումը, փոխանցումը երկրորդի՝ ամբողջ դարեր է պահանջում պատմութեան մէջ: Այնքան անբնականն պայմանների դուպակցումը, կառավարական իշխանութեան բացասական յատկութիւնների հետ միասին, ի հարկէ, չի կարող ցուազնօրէն շանդրադառնալ անպայման աւելի բարձր քաղաքակրթական հակումներ ունեցող տարրի վրա: Վարչական, գաղտնաստանական ու հարկային բարեփոխումներ և այն էլ Ռուսաստանի և միւս պետութիւնների ճնշումով (ու հակակռի տակ), — ահա այն իղէայը, որ ընդհանուր է և հայ մտաւորականութեան համար:

Երկու խօսք էլ մեղադրանքի գաղափարի մասին: Հայկական հարցը, իրեն քաղաքական խնդիր, իր ծագումով ամբողջապէս պարտական է կայսր Աղեքսանդր երկրորդին, որը վաղուց (Ս. Ստեփանոյի դաշնագրի 16րդ յօդածո) նախատեսել է թիւրքահայր կեանքի բարեփոխումների անհրաժեշտութիւնը, — բարեփոխումներ, որոնցից հետո չեն էլ դնում հայերի բաղձանքներն ու իղէալները: Առանց շօշափելու յետադայ իրաւորածութիւնները հայկական հարցի, որ ապագային բաժինը դարձաւ մշտադաւ յերտպանի, այլ և շիտտելով Ռուսաստանի միտւ ի նպատակ հայերի խաղաղացած դերի մասին, ես, միայն անցեալ տարւայ փաստերն աչքի առաջ ունենալով, չեմ կարող չյայտնել իմ բողոքը նոյնիսկ ներկայ մեղադրանքի դադափարի դէմ: Ե՛ս նոյնիսկ պարտաւոր եմ զգում ինձ անել այդ, այս վարկեանքին, երբ գուցէ այս կամ այն հասնոյկատար, բայց միշտ ճշմարտութիւնից և արդարութիւնից հեռու ձայների շնորհիւ, կասկածի տակ է առնւած համարեա ամբողջ հայ մտաւորականութիւնը և երբ կալմայ սկսուած ևս վախեր սնուցանել ապագայի համար: Ի՛նչ բանի համար է կասկածուած նա, երբ մի ոռու զեւպան Պոլսում, պ. Նեխլովի կամ — աւելին կասեմ — նոյն իսկ մի ոռու ներկայացուցիչ Սասնոյ քննիչ յանձնաժողովում, պ. Պրժեւալսկին անկասկած թիւրքահայերի համար աւելի են արել, քան ամբողջ աշխարհի հայութիւնը, քան բովանդակ մեր մտաւորականութիւնը: Ինչի մէջ է և տեսնւած վերջինիս յանցանքը, երբ նա իր բաղձանքների մէջ նոյնիսկ չի հասել այնպիսի պահանջներին, որպիսին յայտնել են մայրաքաղաքի ոռու մասուլի որդւ օրգաններ — պահանջներ, որոնք չէին գտնուած և ո՛չ մի հաշտութիւն թիւրք պիտակական կեանքի փոսած ռեժիմի հետ և մատուցուած էին թիւրքիայի հայկական նահանգներին քաղաքական լրիւ ինքնավարութիւն շնորհելու անհրաժեշտութիւնը: Ինչի՞ համար են բոլոր այս ձերբակալութիւններն ու խտտութիւնները, երբ, ամենայն աւանդականութեանը, միայն մէկ հեռււոր Ամերիկայից մարդասէր եանկիները աւելի շատ դրամ են փոխադրել թիւրքիա ջարդերից վնասուածներին օգնելու համար, քան բոլոր ոռուահայերը միասին առած: Արդեօք նրա՞ համար, որ անդրովկասեան հա-

յերն, իսկապէս, իրենց կոչման բարձրութեան վրա չգտնուցին: Համանման դէպքերը որեւէ ժողովուրդների կեանքում, ինչպէս կարելի է տեսնել պատմութիւնից, առաջ են բերել թէ՛ աւելի մեծ ուշադրութիւն, թէ՛ աւելի մեծ համակարգ և թէ՛ աւելի մեծ յոհարութիւն: Եւ ո՛ւմ է հարկաւոր, որ թիւրքահայերը զրկւեն մեր կողմէնտոց օգնութիւնից, որ նրանց տառապանքները լինեն աւելի աստիկ, տանջանքներն՝ աւելի դառն, յուսահատութիւնը՝ աւելի կատարելալ: Ինչպէ՞ս, ինչի՞ համար, ո՛ւմ օգտին, ի՛նչ բարիքներից զրգւած մեր ուղղակի զէրոստոց օժանդակութիւնը թիւրքահայերին կարող է ձանաչել որեւէ տեսակէտից վնասակար, հակապետական երևոյթ: Ինչո՞ւ համար ես, օրինակի համար, քննիչների կողմից դրւել եմ այնպիսի դրութեան մէջ, որ՝ փախկանկատուութեան անմիջական զգացումից զրգւած՝ ստիպւած եմ լինել ոչանկեզ անփական կառավարութեան առջև՝ հրժարւելով այս կամ այն ծանօթութիւնից և շտաբով այս կամ այն բարի ծանօթիներն անուներ:

Անձնապէս ինք, զէպի մեղ ցոյց տրւած նման բժանդիր-կասկածամիտ վերաբերումը համարում եմ արդինք որեւէ խոչոր թիւրքմացութեան և շատ թանգ կը տայի, որ քննչութիւնը պարզէր մեր հասարակութեան ու մտաւորականութեան իսկակալն տրամադրութիւնը իր բովանդակ և անպայման մերկութեամբ:

Քրիստափորի այս դիմումնազիրն էլ դրական հետեանք չի տալիս և հիմնական փոփոխութիւն չի մշտցնում նրա վիճակի մէջ. նրան շարունակում են պահել խիտ առանձնացած: Անյսելի է մնում և սիկ. Միքայէլեանի խնդրագիրը՝ ազատելու ամուսնուհ գրամական երաշխաւորութեամբ: Այն ժամանակ Քրիստափորը փորձում է հրաւիրել թիֆլիսի գաղտնաստանական պալատի դատախազի միջնատուութիւնը: Այս վերջինիս ուղղած խնդրագրի մէջ նա պահանջուած է, որ «հէնց առաջին հարցաքննութիւնից սկսած, առանց որեւէ կասկածի տեղիք տալու, բոլորովին պարզ դարձաւ, որ քննչութիւնը ծայր աստիճանի կասկածամիտ վերաբերում է ցոյց տալիս զէպի զորք», որը, այդ պատճառով, անվերջ ձգձգւում է, մինչդեռ ստեղծւած դրութիւնը այլևս անտանլի է. «այս չորս ու կէս ամուսայ ընթացքում իմ ստացած տպաւորութիւններն այնքան ծանր են, որ բաւարար համբերութիւն չի մնացել այլևս անխօս հաշուելու այս կացութեան հետ. ոչ էլ կարողանում եմ հասկանալ, թէ քննչութիւնը ինչո՞ւ է շարունակում այս դրութիւնը»:

Ապա յիշեցնելով ժանդարմական վարչութեան պետին ներկայացրած դիմումնազիրը՝ բողոքում է դոքմի ընթացքի դէմ. «Քրիշչները, որ հարցերին նոյնիսկ իմ 16 տարի առաջւայ (1880թ.) ուշադրչները մասին, չէին կարող աչքաթող անել պահանջւած բոլոր տեղեկութիւնները: Եթէ այդ տեղեկութիւնները ստացւած են և ես գաղտնապարտւած եմ տակաւին երկար նստել առանձին բանտարկութեան մէջ, որպէսզի առել, թէ՛ անգլիաներկայանամ այսպիսի հարցերի առէլ, թէ՛ «ովքե՞ր են այն անձինք, որոնց անունը մինչև այժմ հրժարւում էք տալ. ձանաչո՞ւմ էք սրան կամ նրան. ե՞րբ էք ծանօթացել նրանց հետ» — նման գործավարութիւնը կարող է անցնել ամէն սահման, որովհետեւ, մի կողմից,

նոյն այդ հարցերը կարելի է կրկնել անթիւ անգամներ, իսկ միւս կողմից — ես 37 տարեկան եմ և եթէ կեանքում ձեռք բերած իմ ծանօթների թիւը բաժանենք ամսական 2-3-ի. ամենքի մասին տեղեկութիւն ստանալու համար հարկաւոր կը լինի 10 տարի: Էլ չեմ հասում այն մասին, որ ես երկար ժամանակ ուսուցիչ եմ եղել և այն էլ 250-300) աշակերտ ունեցող զբոսայգիներում»:

Եւ խնդրում է վուլթացիները և իր հետ ձեռք բերակալածները գործի քննութիւնը. դանդաղութիւնը չսկսում է նմանել մի բանի, որ հետապնդուում է մեր օրէնքներով և անպատիւ բան է թէ արդարադատութեան և թէ նրա ներկայացուցիչների համար, այսինքն՝ մի տեսակ տանջանք, որի նպատակն է կորզել կեղծ խոստովանութիւնները:

Թէ ժանդարմական ու դատատանական իշխանութիւնների վրա Գրիստափորի դիմումները ի՞նչ տպաւորութիւն են ածում, յայտնի չէ. թղթերի մէջ հետքեր գրեթէ չկան: Երևում է միայն, դատախազին տած գրութիւնից, որ շնորհմբ. 8-9-ից մինչև տոյն տարւայ յուն. 20 Բազելի ժանդարմական վարչութեան պետը (առանց որևէ նախազուշայցման և պատճառների բացատրութեան) արգելից ինձ բանտից գործի մասին

որևէ բան տալ»: Ասել է, Գրիստափորի դիմումները շղայնացնում էին ժանդարմական վարչութեան պարոն պետին...

Այս կացութիւնը տեղի մինչև մարտ ամիսը, երբ ժանդարմական վարչութիւնն ու դատախազութիւնը համաձայնեցին բաւարարութիւն տալ տիկ. Միքայէլիանի դիմումին՝ ազատ թողնել բանտարկեալին դրամական երաշխաւորութեամբ: Մարտ 23-ի համապատասխան արձանագրութեամբ Գրիստափորը արձակեց բանտից: Տիկ. Միքայէլեանը ներկայացրեց 2000 ռուբլու երաշխաւորութիւն:

Հետզհետէ բանտից արձակում են և միւս բանտարկեալները, մեծ մասամբ, նոյնպէս դրամական երաշխաւորութեամբ: Հայ հասարակութեան միտքը կոպկասում յուզած էր. ամենքը սպասում էին դատավարութեան, բայց կառավարութիւնը խոչնդում էր համարեց դիմելու վարչական պատժների: Ձերբակալածներից շատերը, վարչական եղանակով, աքսորեցին Ռուսաստանի զանազան կողմերը. Գրիստափորը թողնեց թիֆլիս՝ առանց քաղաքից հեռանալու իրաւունքի:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

Մտածումներ Հ. Յ. Դաւնակցութեան մասին

Տեսանք թէ ինչպէս «գաշնակցական» կուլելու համար ամէն ոք պէտք է գոհացում տայ Կանոնագրի հինգ պահանջներին միաժամանակ: Ինքնին հարց է ծագում թէ ի՞նչպէս կարող է մի նորեկ անդամ, ալըբան պահանջների մի անգամից գոհացում տալ: Եւ մի՞թէ բոլոր դաշնակցական համարածները գոհացում են տալիս այդ պահանջներին: Մի՞թէ ամենքը, որ «գաշնակցական» անուն են կրում՝ դաշափարական տիպարներ են անթերի: Եթէ ուշադիր քննենք Կանոնագրի հինգ պահանջները, կը տեսնենք, որ նրանցից մէկն է միայն, որ անմիջապէս պէտք է գոհացուի. մնացածները յանձնառութիւն են և վստահացում: Թեկնածուն պէտք է անդալման որևէ խմբի անդամ արձանագրուի: Այսքան: Այնուհետև նա պէտք է աշխատի իր յանձնառութիւնները կատարել և վստահացումն արդարացին՝ կեանքի բերումին դուրսհանալ: Թեկնածուները մուտքի ժամանակ յատուկ քննութեան բովից չեն անցնում. նրանք շունեն քաղաքական դասընթաց, որից պարտաւոր լինելին քննութիւն տալու՝ նախ քան ընդունելին կազմակերպութեան մէջ: Միշտ կարծել են, որ դա անհրաժեշտ է. բայց կեննքը բերած է ուրիշ երբակացութեան: «Դաշնակցութիւն» յնչնով, «Դաշնակցութիւն» սննով՝ թերակրթները դարձած են «գաշնակցական»,

ինչպէս լողանալով է, որ մարդ լողորդ է դառնում:

Այս տեսակէտից նայելով գործին՝ ընդհանուր կազմակերպութիւններից միայն մէկն է, որ լաւագոյն դուրսհանում է մեր կուսակցութեան. — եկեղեցին: Իբր կազմակերպութիւն՝ նրանք շատ նման են իրար: Երկուսն էլ «հասարակաց» ժողով են, թէև հաւատում են տարբեր բաների: Երկուսն էլ ունեն Մրազիբ, գործելակերպ ու Կանոնագրի, թէև տարբեր ընդթիւն քովադակութեան: Երկուսն էլ նոր անդամներ ընդունում են առանց խորին քննութեան և գոհանում են պարզ հարցումով և յանձնառութեամբ: Երեխային ուղղած հարցումին քատն է պատասխանում թէ՛ երեխան ուզում է. «հաւատ, յոյս, սէր և մկրտութիւն. սրբիլի մեղաց, ազատիլի դիւրաց և ծառայիլ Աստուծոյ»: Քաւորի դերը կուսակցութեան մէջ խումբն է կատարում, որ յանձնարարում է նոր անդամին և վստահացնում թէ նա ուզում է ընդունել Մրազիբն ու գործելակերպը, ենթարկել Կանոնագրին ու որոշումներին, ամէն ջանք թափել իրականացնելու «կանոնք», մտնել խմբի մէջ և կուսակցական տուրք վճարել: Ինչպէս ջաւորը բարոյական յանձնառուն է իր սանիկի ուղիղ ընթացքի, այնպէս էլ խումբը բարոյապէս յանձնառուն է իր առաջարկած անդամի համար: Եւ ինչպէս ջաւա-

նան քաւորի յանձնառութեան վրա տալիս է մկրտութիւն, այնպէս էլ մարմինը խումբի յանձնառութեան հիման վրա ընդունում է նոր անդամին: Քաւորը սովորաբար քնաւ չի հասկանում իր յանձնառութեան իմաստը, անաւել ևս երեխան, որ արդէն անկարող է հասկանալ: Սա մի ծէս է, որ կատարում է: Մինչև իսկ եթէ «երեխան» հասակաւոր է, նա ևս յաճախ չի հասկանում թէ ինչ ընչոյց է: Նոյնը պատահում է և կուսակցութեան մէջ, ուր յանձնարարողն ու յանձնարարւածը լաւ չեն հասկանում գործի էութիւնը: Արտասանելով երգման բանաձևը, թեկնածուն շատ անգամ լաւ չի ըմբռնում թէ ի՞նչ ծանր յանձնառութեանց տակ է մտնում՝ կուսակցութեան անդամ դառնալով:

Բայց ինչպէս հասակաւոր «երախան» կամ կաթնակեր մտնուելը մկրտութեամբ դառնում են մի զարաւոր հաստատութեան անդամ, այնպէս էլ թեկնածուն երգման բանաձևն արտասանելով՝ դառնում է մի պատկանելի կուսակցութեան անդամ: Եւ ինչպէս եկեղեցու անդամութեան տեսակէտով տարբերութիւն չունեն նորադարձն ու հին անդամը, այնպէս էլ կուսակցութեան տեսակէտով «դաշնակցական» են թէ՛ նա, որ երէկ մտաւ կազմակերպութեան մէջ և թէ՛ նա, որի մագն արդէն ճերմակած է: Երկուսն էլ լիազօր և նոյնիմաստ անդամ են հաւաքական ընկերային կազմութեան. մէկն՝ իր եկեղեցու, միւսն՝ իր կուսակցութեան: Նւստա զիւղացին և գերագահ կաթողիկոսը երկուսն էլ անդամ են նոյն եկեղեցու, թէկուզ մէկը զրուխն է եկեղեցական կազմակերպութեան, միւսը հազիւ ոտքի եղուղը, բայց երկուսի միութեամբ է, որ ստեղծւում է եկեղեցու միութիւնը: Այդպէս է նաև կուսակցութեան մէջ. թէկուզ և մէկը վարիչ է բովանդակ շարժման, իսկ միւսը պարզ մասնակիցը, բայց այդ երկուսի միացումով է կուսակցութիւնը ձև ու մարմին ստանում: Կարողութեան, երախտիցի, փորձառութեան ու գործարարութեան տեսակէտով նրանց մէջ կարող է սար ու ձոր լինել, բայց կոչման տեսակէտով՝ նրանց մէջ տարբերութիւն չկայ. երկուսն էլ կուսակցութեան անդամ են, երկուսն էլ «դաշնակցական» և «ընկեր»:

Եթէ Հիմա մտածուել լինենք բուն գործի էութեան, կը տեսնենք, որ եկեղեցու հասուն անդամները հպուել զիտակցութիւն ունեն իրենց կոչման և պարտականութեանց մասին: Այդ «կուսակցութեան» անդամները ընդունում են նրա «Ճրգաբերն ու գործելակերպը, ենթաբարձրում են նրա Կանոնադրին ու որոշումներին», բայց ընդհանրապէս «ճրգաբեր» մասին զաղափար չունեն, այսինքն չգիտեն իրենց նպատակն ու դաւանանքը, իրականի մէջ հետեւում են տարբեր գործելակերպի, քան հրահանգում է եկեղեցին, Կանոնադրին ենթարկւում են սահմանութեամբ և որոշումները կատարում են տասից մէջ անդամ: Բայց և այնպէս նրանք համարւում են եկեղեցու անդամ. նրանց համարումք միութիւնն է, որ դարձնում է եկեղեցին մի աղբակ. և յաճախ նրանք են, որ իրենց արիւնով շաղախում են եկեղեցու Հիմունքները և դարձնում անասան: Ոչ ոք կարող է պնդել, որ դրանք զաղափարական տիպարներ են եկեղեցու մէջ, բայց և ոչ ոք կարող է ասել, թէ նրանք անդամ չեն եկեղեցու: Նրանք «ընդունում» են եկեղեցու պահանջները և կատարում են իրենց ըմբռնումի

համեմատ: Յաճախ յօժարութիւնը չէ որ պակասում է, այլ ճիշտ ըմբռնումը: Իսկ եթէ զիտակցում են իրենց թերին զաղափարական տիպարի համեմատութեամբ՝ ունեն մեղքի զիտակցութիւնը և գղձումի պարունակ: Այսպէս է նաև կուսակցութեան մէջ: Կանոնադիրը գծում է դաշնակցականի զաղափարական տիպարը և թեկնածուն յանձնառու է լինում այդ տիպարին համապատասխան ընթացք ունենալ: Քանի դեռ ճանաչում է տիպարը պարտադիր, բայց իրան թերացած՝ նա կուսակցութեան անդամ է իրօք: Քանի դեռ ճշնում է միշտ ասելի մօտենալ «դաշնակցական» տիպարին, նա «դաշնակցական» է անաւարկելի: Որովհետև յանձնառութիւն է նրան «դաշնակցական» դարձնում և այդ յանձնառութեան կատարման ձգտել է «դաշնակցական» կատարել նրան: Այն օրը, որ զաղափարական տիպարը դադարեց հմայիչ լինել կամ այն օրը երբ նա դադարեց այդ տիպարին մօտենալու ճիգ անել — նա դադարում է «դաշնակցական» լինելուց, թէկուզ և մնայ կազմակերպութեան մէջ: Նա մեռած անդամ է կենդանի կուսակցութեան, մի մեռած ըջիջ կենդանի մարմնի:

Յանձնառութիւնն այն տոմսն է, որ կարուուք է տալիս Դաշնակցութեան շէնքը մտնելու, բայց յանձնառութեան կատարման չափով թեկնածուն տեղ է դրուում կուսակցութեան մէջ և դառնում նրա յենարան: Ամենքը կոչւած են ձգտելու «դաշնակցական» բարձր տիպարին և քանի դեռ գործով ձգտում են նրան՝ համարում են հաւատարիմ անդամ և ընկեր կուսակցութեան մէջ:

Կարևորն այն չէ, որ մտած վարկեանին դաշնակցական դաւանանքի բոլոր ծալքերն իմանաս, նրա ծրագրի բոլոր կէտերը խորապէս ըմբռնես և նրա Կանոնադիրը բոց զիտենաս: Լաւ է, որ այդպէս լինի, բայց այդ չէ կարևորը: Կարևորը այն է, որ շիտակօրէն յանձնառու լինես նրա Ծրագրին ըմբռնելու և գործադրելու, մասնումը նրա նպատակայեանքին յարարելու, նրա Կանոնադրին հաշտանդելու և նրա որոշումները կատարելու. մի խօսքով մտածելու և գործելու՝ կուսակցութեան մշակած հրահանգներին համաձայն: Մտնելով կուսակցութեան մէջ ընկեր մարզկանց յորդորով կամ ինչ որ ներքին մէթին մղումի անսալով՝ թեկնածուն ժամանակի ընթացքին, գործի և շփումների մէջ կարող է իր զիտակցութիւնը պայծառացնել և իր բարոյական այնպէս զերակազմել՝ հետեւելով փորձ ընկերների օրինակին կամ անձամբ հասու գաւանալով Կանոնադրի պահանջներին: Կարևորը շիտակ և անվերապա է յանձնառութիւնն է: Սա մի ուխտ է, որ անում է մարդ ընկերների առջև, ինչպէս ամուսնացող եկեղեցու: Փեսացուն չգիտէ թէ կեանքի մէջ ինչքը կարող են պատահւել իրան, բայց քանանայի հարցումին թէ՛ «Տէ՞ր ես» — պատասխանում է վառաւ. «Տէ՞ր եմ». և դրանով յանձն է աւելում յետագայ բոլոր փորձանքների ժամանակ տէր կանգնել իր կնոջը, որ տալիս են նրան վկաների ներկայութեամբ: Ու նաև կիրք խոստանալով «հնազանդիք», չգիտէ առաջուց թէ իր կեանքում ինչ կացութիւններ կարող են պատահւել, ուր նա պէտք է արժեցնէ իր հնազանդութեան խոստումը, բայց նա խոստանում է «հնազանդիք» վկաների ներկայութեամբ և իր պարտականութիւնն է իր ուսած խօսքը

պահել: Ճիշտ այսպէս է կուսակցութեան թեկնածուն: Արտասանելով հանդիսաւոր երբման բանաձևը, նա դրանով խոստանում է Կանոնադրի հինգ պահանջներին զուհարում տալ և պարտաւոր է յետադաշին կատարել իր տւած խոստումը: Եւ նա՛ է «դաշնակցականը», որ փորձութեան օրերին հաւատարիմ է մնում իր յանձնառութեան և կուսակցութեան մէջ մտած օրից անդադրում աշխատում է միշտ աւելի կատարեալ չափով դոհանցում տալ Կանոնադրի պահանջներին:

Մենք տեսնք «դաշնակցականի» զաղափարական տիպարը, որ դժուած է մեր Կանոնադիրն իր երկու յօդածներով: Կուսակցութեան Մրազիրը և կանոնաձիր կուսակցականը զաղափարական կառուցումներ են: Բայց մինչչեւ տիպար կուսակցական դառնալու համար բաւական է անձնական ճիշդ, տիպար Մրազիր իրագործելու համար անհրաժեշտ է հազարաւոր ճիգերի ներդաշնակ դուգորդութիւն և արտաքին նպատաւոր պայմաններ: Բայց ինչպէս կուսակցութիւնն այնքան ժամանակ կենդանի է և ազդու, որքան հետամուտ է իր Մրազիր իրացման, այնպէս և կուսակցականը այնքան ժամանակ աշխատակցական է, որքան հետմուտ է իր տիպարի լրացման, այսինքն Կանոնադրի հինգ պահանջի զուհարման:

Պէտք չէ կարծել ուրեմն, որ «դաշնակցական» լինել նշանակում է ամօական տուրք վճարել և երբեմն ժողով գնալ: «Դաշնակցական» կոչումը շատ աւելի դժուարին ու բարդ գործ է, քան կարծում են շատերը: Գիտենք, որ դժուար է նաև քրիստոնէս լինել, բայց ամենքս «քրիստոնէս» ենք, փառք Աստուծոյ: Բայց վա՛յ մեր քրիստոնէութեան: Պէտք չէ ա՛յնպէս կուսակցական լինել, որ աւա՛ի: «վա՛յ մեր դաշնակցութեան»... «Դաշնակցական» կոչումը մի յարազդու լսման է, որ առաջ է վարում մարդուն միշտ աւելի լաւ բնութեամբ իր Մրազիրը, միշտ աւելի ճիշտ գործադրելու իր Կանոնադիրն ու կուսակցութեան որոշումները, միշտ աւելի ուշադիր հետևելու հանրային կենսի ընթացքին և միշտ աւելի որոշ դիրք բռնելու հանրային խնդիրներին հանդէպ, ներխուժով աւելի ժամանակ ու եռանդ և ցուցադրելով աւելի մեծ գոհողութիւն:

Ես աշխատեցի պարզել «դաշնակցական» մարդու զաղափարական տիպարը: Ուշադրութեան արժանի է մի զաղափարական տիպարը: Ուշադրութեան արժանի է մի «դաշնակցական» մարդու մի տիպար միայն: Իր զաղափարական առումով Դաշնակցութիւնը համատեական թերթերի միութիւն է, որ նշանակում է, թէ բոլոր դաշնակցականները աւելի կամ պակաս նոյն կաղապարով ձուլւած մարդիկ են: Այս հանգամանքը շատերն են նկատած և ամէն օր կարելի է ստուգել, բանալով աշխարհի հեռաւոր վայրերում լոյս տեսնող կուսակցական թերթերը և տեսնելով միօրինակ վերաբերում միևնոյն խնդիրներին հանդէպ: Սա արտաքին յայտարարն է մտայնութեան նոյնութեան: Թերթերը չեն գրում ամենօրեայ հրահանգի համաձայն, խմբագիրներն են, որ մտածում են որոշ ուղղութեամբ: Որոշ կաղապարով ձուլւած մտայնութեան հետ է մեր գործը և ոչ թէ որոշ

կարգադրութեան հնազանդ մարդկանց: Եթէ քննութեան առնենք «դաշնակցական» գործերը, ուր և կատարեն, մենք կը նկատենք նոյն ընթացքը նաև գործի մէջ, որ յայտարար է «գործելակերպի» նոյնութեան: Այստեղ ևս կարգադրութիւն չէ, որ կատարում են մեր ընկերները, — քանի որ ամէն շրջան իր գործերն ունի և կուսակցութիւնն ապակենտրոն է — այլ նոյն կաղապարով ձուլւած կամքերի արդունք է այդ երևոյթը: Կուսակցական կաղապարն է նոյն, ուստի և ձուլւածքները նման են իրար: Սա նշանակում է թէ Դաշնակցութեան անդամները իմացական ու բարոյական կառույցի հիմնական գծերով մօտաւորապէս նման են իրար: Այս հիմնական հէնքի վրա ամէն մի «դաշնակցական» իր նկարն է դորձում՝ զորդի գործերի նման: Տարբեր են զոյները, տարբեր նկարն ու դասաւորութիւնը, տարբեր՝ մեծութիւնը, բայց նոյն է հէնքը և բոլորն էլ գորդ են:

Այս պատճառով Դաշնակցութիւնը թէ և ընկերային կազմակերպութիւն է, բայց նա նման չէ պետական կազմակերպութեան: Արտաքուստ նայիլով թւում է թէ նա շատ զուգահեռ ունի պետութեան հետ, բայց խորքը դիտելով՝ մենք տեսնում ենք, որ ամնման են իրար: Դաշնակցութեան մէջ չկայ մասնազիտացում և պէտք չէ, որ լինի: Այսօրւան խմբագիր վարող կարող է քարոզիչ դառնալ, միւս օրը խմբապետ, երրորդ օրը մտազերիստ: Այս ճկուն կերպարանափոխութիւնը արդիւնք է նրա «դաշնակցական» կոչման, սա ճառագայթութեան է նրա տիպարի: Կարող է մէկը մէջ շեշտւած լինել ուղիմիկ կարողութիւնը, միւսի մէջ տեսական մտքի ոյժը, երրորդի մէջ խօսքի շնորհքը, չորրորդի մէջ կազմակերպչելու տաղանդը, բայց երբ հարկը պահանջե՛ց՝ ամենքը պարտաւոր են գէնք առնելու և կուր դաշտ իջնելու, թողնելով մէկը իր յօդւածը, միւսն իր բեմը, երրորդն իր ժողովը: Կամ ընդհակառակն, երբ պէտք է Կանոնադիր մշակել և որոշումներ կայացնել, այստեղ ձայն ունեն է՛ տեսաբանը, և՛ բեմբասացը, և՛ կազմակերպիչը և մարտիկը: Չկայ մի ասպարէզ, որ վերապահւած լինի միմիայն որոշ ընկերների և զոգւած լինի միւսների հանդէպ: Կանոնադիրը պահանջում է քամէն ջանք թափել՝ իրականացնելու Մրազիրն ու որոշումները, եթէ դրա համար պէտք է, որ մէկը խօսէ և չկայ ընկեր, որ խօսքի շնորհքն ունենայ՝ բեմ է բարձրանում լեռների մարտիկը: Եթէ պէտք է ահաբեկում կատարւի և յարմարագոյն մարդը չկայ, գնում է գործի՝ կուսակցութեան հիմնադիրն ու տեսաբանը:

Դաշնակցութեան մէջ չկայ և էլ կարող լինել մասնազիտացում, որովհետև մեր կուսակցութիւնը ոչ թէ մասնազէտներին միութիւն է, այլ հանրային որոշ տղապարների ընկերութիւն: մարդիկ, որ սուր ակնաջ ունեն հայրութեան տառապանքի ճիշը լսելու, ուր և նա հնչէ և որ շարունակ իրենց Մրազիրն ունեն աչքի առնւ: Նրա իրացումը պահանջում է բացմաբան աշխատանք, ուստի կուսակցութեան մէջ չէ եղած և պէտք չէ, որ լինի որևէ գործից չբաժարում: Կարող է առաքելութիւն լինել այս ու այն անդամի յարմարութեան մասին, բայց խօսք չի կարող լինել կուսակցութեան պահանջը մերժելու մասին: Այս ոգին է, որ կուսակցական համեստ ընկերներին դարձնում է հերոս, պարագադրելով կատա-

րել գործեր, որ առաջին նապ թուս էն անհնարին նրանց ուժերի համար: Համարձակութիւն չի լինի եթէ: ասեմ, թէ «զաշնակցականի» համար անհնարին բան չկայ իր Մրազի իրացման ճամբին: Յիշեցէ՛ք կուսակցութեան անցքերը և պիտի հանդիպէ՛ք փակկառու մարդկանց, որ «զաշնակցական» կոչումն հաւատարիմ՝ դարձած են խտտաբարոյ և լեռնակեաց մարտիկին հաւատար ընկեր, մտանալով իրենց սովոր հանգիստը և դիրաւտար պայմանները: Անշուշտ, զեկավար մարմինների գործն է ընկերներին դասաւորել արնայէս, որ նրանք լաւապէս օգտակար լինեն, բայց «զաշնակցական» պարտական է գնալ ամէն գործի, որ պահանջում է կուսակցութիւնը, որովհետեւ նա մի հանդիսաւոր ժամի յանձնառու եղած է «ամէն ջանք թափել» իրացնելու կուսակցութեան Մրազիին ու որչափ մեծեր:

Կուսակցութեան հաւատարիմ անդամները գիտեն, թէ յաճախ որքան անողոք է եղած Դաշնակցութիւնը և կը յիշեն անշուշտ հարիւրաւոր ընկերներ, որ հնադանգ ու սիրով ենթարկւած են կուսակցութեան անողոք որոշումներին: Այս անողոք զպրոցին մէջ են մարդուս «զաշնակցական» մարդու կուսակցական բարձր առաքինութիւնները, որ ոչ միայն կուսակցական են, այլ և մարդկային: Իրենց դատան գեղեցկութեամբ նրանք իշխում են մտողու հոգուն և գերում են առմէջ՝ ստեղծելով նահատակներ ու հերոսներ: Այս ամբողջ տակ է, որ կուսուս են անձեւ հոգիները և այս բովի մէջ է, որ պողպատանում են երեւոյն կամքերը: Դաշնակցութիւնն այսպիսով, այլ ու հայ տիպարի արհեստան ազգու մարդարան: Եւ որքան աւելի «զաշնակցական» են դառնում մեր ընկերները, այնքան աւելի խորանում է նրանց բաժանող խրամատը հայութեան միւս տիպարից: Այս երկոյթը ոմանք տահնօվեւամբ են գիտում, մինչդեռ պէտք է գոհութեամբ լցնել ամենգիտ սիրտը, որովհետեւ ոչ ամէն խրամատ ու պարտակտում աւերել են: Կայ շինարարութիւն, որ միայն պարտակտումով հնարաւոր է և խրամատով զորացող: Ազգային նկարագրի սպանացումը այդ շինարար գործերից մէկն է: Ոչինչ անշուշտ կարող է լինել անողնայար սրկիակի և դադարաւարտունչ մարտիկի միջև: Ազգային ծագումն արգելք չէ, որ նրանք իրար հիմնապէս ժխտեն: Սրիկան միայն վախ և ատելութիւն կարող է անուցանել իր հոգում գաղափարական մարդու հանդէպ: Իսկ սա արգահատանք և արհամարհանք՝ նրա ճկուն կենցաղի դիմաց: Մէկն ստիպւած է կեղծ ու թաղան գործելու: միւսը շիտակ է և ինքնապատահ, որովհետեւ նա հետամուտ է իր անձնական բարիքին և խորշանք ունի բարոյական ճիշդի դէմ, իսկ սա այսք է դէպի գաղափար և իր թուրքի ընթացքին հաղիւ նկատում է կենալք բարիքը: Եւ ո՞րքան շահաւէտ ու փայլուն սուպարէզներ լքած է «զաշնակցական» իր գաղափարին ծառայելու համար: ասպարէզներ, որ շատերի երգին են կայմում: Եւ ո՞րքան անձուէր ու մաքուր սէրեր մըրժած է «զաշնակցականը», խորտակելով քեթոյշ հոգիներ, որոնք մասին գաղափար իսկ չունի սրիկան: Կենաքն այսպիսով նպատակ չէ «զաշնակցական» մարդու համար: նա միջոց է Մրազիի հետապնդելու և որոշումներ իրացնելու: Մի շատ համեստ իտաք.— «ամէն ջանք թափել»—

ազդակ է դառնում մարդկային տիպարի արհեստան և խթան՝ զերազոյն զոհարելութեան, որովհետեւ երբ ասում է «ամէն ջանք», այլ ևս տեղ չի թողնում, որ սպաստանես հմտութեան պարսպին և հրաժարես պարտքի» անհմտութեան պարտակով: Դա մի կոչ է, որ կարճակերպական Կանոնադիրն ուղղում է բոլոր «զաշնակցականներին»՝ պատրաստ լինել ամէն ժամ և ամէն տեղ կատարելու այն գործը, որ անհրաժեշտ է, անկախ ար բանից «մասնազէտ» եւ թէ ոչ: Դաշնակցութեան մէջ մասնազէտներ չկան: կան միմիայն «զաշնակցականներ»:

Այս չի նշանակում, որ Դաշնակցութիւնը դէմ է մասնապիտութեան կամ հակառակ է մասնազէտներ օգտագործելուն: Սա նշանակում է միայն, որ «զաշնակցական» լուրնումի մէջ «մասնազէտ» պաղատարու տեղ չէ գրաւում: «Դաշնակցական» կարող է մասնազէտ լինել, բայց իր մասնապիտութեամբ չէ, որ «զաշնակցական» է: Ինչպէս և մասնազէտը կարող է «զաշնակցական» գործի մեծապէս նպաստել, բայց դրանով «զաշնակցական» չի դառնում: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ մենք մասնապէս դողեր ունէինք, որ զորանոցներից դէնք ու փամփուշտ էին գողտտում մեզ համար, բայց նրանք «զաշնակցական» չէին, ինչպէս ուրիշ վայրերում «զաշնակցականներ» կային, որ նոյն գործն էին կազմակերպում ու կատարում, առանց, սակայն, մասնազէտ գողեր դառնալու: «Դաշնակցական» մաքսաննեզներ եղած են, որ մեծաքանակ գէնք ու փամփուշտ փոխադրած են սահմանից սահման, բայց և ոչ մի պարանք չեն փոխադրած անձնական շահի համար, ինչպէս եղած են մասնապէս մաքսաննեզներ, որ իրենց փոխադրած անձնական սպարներէ հետ փոխադրած են և մեր գինամթերքն ու գրականութիւնը: Սրանով «զաշնակցականը» մաքսաննեզ չի դարձած և մաքսաննեզը՝ «զաշնակցական»: Մէկն աշխատած է ամէն ջանք թափել իր Մրազիին ու կուսակցութեան որոշումներն իրապրծելու, միւսն իր անձնական շահին նոր շահ բարդելու: Եւ յաճախ է պատահած, որ «զաշնակցական» գործ կատարելով, մասնապէս գողն ու մաքսաննեզը մկրտւած են նոր աւազանում և դարձած են տիպար յեղափոխական, ամէն դասի մարդկանց հիացումը խելով: «Դաշնակցական ինչո՞ն», որ հայ ժողովրդի արհեստան զաւակներից մէկն կուս, մի պատահի գրպանահատ էր... Ոչ ամէն զինուորական, որ կուսած է Դաշնակցութեան դրօշի տակ իր կենալք վտանգելով՝ «զաշնակցականներ» ամէն ջանք թափելով՝ դաշնակցականներ, բայց շատ «զաշնակցականներ» ամէն ջանք թափելով հնազանդ՝ մտած են կուսի սուպարէզ ու դարձած զինուորական: «Դաշնակցական» կոչումը մասնապիտութիւն չէ. նա որոշ բարոյական կառուցածք է մասնանշում, որոշ Մրազիի ու Կանոնադիր, իսկ մասնապիտութիւնը որոշ կարողութիւն է, որ «զաշնակցութիւն» չի ենթադրում: Ուստի պէտք չէ գարմանալ, որ կան հաղարաւոր գիւղացիներ, բանւորներ և արհեստաւորներ, որ «զաշնակցական» են անկախ իրենց արհեստից, և կան շատ տիտղոսաւոր մասնազէտներ, որ «զաշնակցական» չեն և լինել չեն կարող, կրկին անկախ իրենց արհեստից: «Դաշնակցականը» մի տիպար է, որ երբ հարկը պահանջել կարող է և պարտաւոր է մասնա-

գիտանայ, բայց մասնաւոր չի կարող «դաշնակցական» դառնալ՝ ապաւինած միմիայն իր մասնազիտութեան: Դրա համար պէտք է «դաշնակցական» մտայնութիւն ունենալ և «դաշնակցական» բարոյական կառուցուածք:

Կանոնադիրը վստահութեամբ թոյլ է տալիս, որ յանձնառուները կրեն «դաշնակցական» սնունը և գործի մէջ արդարացիին իրենց կոչումը: Այս իմաստով «քաղաքացի ևն կույցեայք և սակաւք ընտրեալք»: Ամէն քաղաքացի կարող է դաշնակցական դառնալ և շատերն են դառնում իսկապէս, բայց ջշերն են հաւատարիմ մնում իրենց յանձնառութեան: Եւ սա մի շարիք չէ: Դաշնակցութեան ուժն իր անգամները քանակի մէջ չէ, այլ նրանց որակի մէջ է: Մի բուն դաշնակցականներ մէկն տեղ կարող են հրաշքներ գործել: Եւ գործած են իրօք, և թէ եղած են «դաշնակցական»՝ Կանոնագրի առումով:

Պատմական իրաւագրութեանց բերումով կուսակցութեան առջև դրւում են խնդիրներ, որ լուծուած են պահանջում: Այդ «լուծումները» կատարուած են Մրազբի համեմատ և կուսակցութեան համար նրանք մի-մի կայան են մեր Մրազբի իրացման ճամբին: «Ազգը», սակաւք, կարծում է, որ այդ խնդիրները բախտորոշ են և վերջնական. և ժողովուրդի կենդանի տարբեր խմբում են Դաշնակցութեան դրօշը շուրջը: Բազմաձայնութիւն է գործածուած և համակիրների մթնոլորտը, ծաւալում է գործն ու կազմակերպութիւնը: Լայն ալիքներով շրջան է անում կուսակցութեան անունն ու համբաւը: Ամէն ոք «դաշնակցական է արդէն»: Բազմաթիւ ինքնատիրութիւններ ծաղկում են փարթում՝ կուսակցութեան հմայքի լուսով և թւում է թէ կարմիրպուտիւնը հասած է իր գարգայցման գագաթը: Եւ ուժ է հանրային և կուսակցական կենսւթը, կատարում է պատմական գործը յաջող կամ անյաջող վահանանով: Հանրային գործակցութեան ալիքը յետ է քաշում: Շատերն այլ ևս գործ չեն գտնում անելու, քանի որ այդ միակ գործի համար յարած էին կուսակցութեան: Շատերը լքում են դիրքերը, եթէ «գործն» անյաջող վահան է ունենում կամ վարկարեկ անդրադարձում է ստանում հանրային գիտակցութեան մէջ: Բազմութիւնը խուսափում է հայածանքից կամ հանրային պարսաւից և թւում է, թէ կուսակցութիւնն իր քայլարկան օրերն է ապրում: Բայց երբեք կուսակցութիւնն այնքան զօրաւոր չէ, քան այն ժամանակ երբ եկամտաւոր տարբեր լքում են նրան. որովհետեւ ճիշտ այդ ժամանակն է, որ մնում են այն սակաւաթիւ «դաշնակցականները», որոնք Կանոնագրի հինգ պահանջներին դո՛ւսացում են տաւ: Ամեն ջանք թափելու՝ յանձնառութիւնը իշխում է տիրաբարձ հաստատարիմ անդամների հոգում և մղում է նրանց դէպի նոր գործեր: Նրանց համար նշանակութիւն չունի կատարուած գործի անյաջող լելը, քանի որ այդ «գործով» չի սպառում կուսակցութեան Մրազբը և Դաշնակցութեան դերը՝ հայութեան կենսուցում: «Դաշնակցականին» գործ չէ պակասում իր Մրազբի իրացման համար և ոչ պատմութեան արգանդն է սակայնում նոր պայմաններ ու խնդիրներ ստեղծելու: Յետ մղելով մի ճակատից՝

«դաշնակցականը» դորձ է տալիս միւս ճակատների վրա: Պարտութիւնը ոչ թէ յուսալքում, այլ բորբոքում է նրա ետանդը և հնարամտութիւնը: Պարտութիւնն ինքնին դառնում է մի դաս՝ շտիկելու համար կարգապահութեան թերիները և փոխելու պայքարի եղանակները: Կուսակցութիւնն իր ուժերն ամփոփում է, հարածի վարքը փոխում և ներքուստ զօրանում է: Դրսի պարտաւր անազգեցիկ է մնում համոզած դաշնակցականի համար, ինչպէս դրան նախորդող հուշակն ու հիացումը չէին մթապնած նրա գիտակցութիւնը: Եւ շարունակում է իր ճամբան, որ նախորդում է իր Մրազբը և գործակերպով: Սկսում է մի ներքին եռ ու զեռ, որ մնում է անկատ դրսի հիասթափ կամ յոգնած շրջապատին: Այսպէս է, որ Դաշնակցութիւնը մնում է կայուն և ոչ մի փոթորիկ նրան չի յաղթահարում մինչև իսկ այն ժամանակ, երբ նրա ամենից փորձում և ազգեցիկ անդամները տատաղում են քանտերի և քարտի մէջ կամ ընկնում են կուռի դաշտերում:

Պէտք չէ կարծել, ուրեմն, որ Դաշնակցութեան ոյժը հետեորդ գանգաձանները մեծութեան մէջ է: Չանգաձանները, որ կուսակցական չեն, այսօր կարող են յարել մեզ և վաղը լքել կուսակցութեան շարքերը, որովհետեւ նրանք «դաշնակցական» չեն կանոնադրական առումով, այլ համակիրներ են, գործակից կամ աջակից: Համընդհանուր ուժեր են նրանք, որ կուսակցութեան դեկամպարտիւնը պատմական գործ են կատարում, համարելով այդ գործն անհրաժեշտ և բախտորոշ: Կուսակցութիւնը, սակայն, իր Մրազբի հետապնդման ընթացքին նման գործեր շատ է ունեցած և դեռ շատ գործեր պէտք է ունենայ: գործեր, որ Մրազբի իրացման տեսակէտով կայաններ են միայն, իսկ գանգաձանների տեսակէտով՝ բախտորոշ և վերջնական: Երբ պատմական կենսւթ ընթացքը նոր խնդիրներ բերէ լուծելու, գանգաձանները նորից կը գան ու կը հաւաքեն կուսակցութեան դրօշի տակ, նրա դեկամպարտիւնը պայքարելու համար: Կուսակցութիւնը, սակայն, շատ լաւ գիտէ այդ գործերի արժէքը Մրազբի իրացման տեսակէտից, այս պատճառով նա հանդիս է ներքուստ և վճռական իր դեկամպարտիւնն մէջ: Նրա թափը զօրանում է գանգաձանների բազմութեանը զուգահեռ և հրաման թէ սաստ՝ հնչում են տիրաբար: Նա իշխում ու վարում է, պատուհասում և վարձատրում է պայքարի յաջողութեան անունով, բայց սակայն տեղ իր անվերապահ վստահութիւնը տալիս է սակայն կուսակցական ընկերների, որ իր մատեն գունդն են կազմում: Նրանց հաստատարութիւնն է միակ հիմունքը գործի յաջողութեան: Նրանց «դաշնակցական» բնոյթն է միայն, որ կարող է յաղթանակ ապահովել անհասարար պայքարների ընթացքին և անհնարին պայմանների մէջ: Մեծ են գանգաձանները, բայց լոյծ են իրր խմբակցութիւն: «Դաշնակցական» սակաւաթիւ խմբակն է, որ ողնայար է դառնում այդ լոյծ գանգաձանն և դարձնում նրան զօրաւոր մարմին: Դաշնակցութիւնը գանգաձաններ է կառավարում և բազմաթիւ ճակատների վրա պայքար է մղում իր սակաւաթիւ բայց հաստատար ընկերներին կրթնած, որոնք պատահաբար չէ, որ մտած են կուռի ստպարեղ և յատկապէս այդ մէկ գործի համար չէ, որ դէնք են աւած. նրանք եկած են իրենց Մրազբի

իրացման համար, որ այդ կարգի պայքարներ շատ է տեսած և դեռ շատ պէտք է տեսնի մինչև վերջնական մարմնացում :

Այսպիսով պէտք է շատ լաւ տարբերել կուսակցական ուժերը համակիր գանգաւորներին և հաւատարիմ զինուորները օժանդակ գնդերին: Կուսակցութեան ոյժն ու գորութիւնը «դաշնակցական» ընկերն է և ոչ թէ համակիր տարրը: Իր պատմական դերը խաղալու համար կուսակցութեանն անհրաժեշտ են համակիր գանգաւորները, բայց գանգաւոր կուսակցութիւնն չէ և համակրանքը՝ պարտադրանք. մէկն անցողական է, անկալուն, միւսը՝ յարասե է, մնալուն: Այս իմաստով Դաշնակցութիւնը հայոց թաղաքական կեանքի մնալուն սպալակոյտն է, որ երբ գէպեքը բերեն՝ կարող է համակիր գանգաւորներին զործուռնակ բանակ պատրաստել: Այս իսկ պատճառով կուսակցութեան պաշտօններին ծաւալումը, կուսակցական գործերի կարգաւոր ընթացքը, մեր շարքերի կարգապահ վարմունքը, մեր վրամած պայքարների կազմակերպւած բնոյթը՝ անկախ նրանց յաջող կամ անյաջող ելքից, մեր կատարած գործերի յիշեցումը, մեկնութիւնն ու պատճառարանութիւնը անհրաժեշտ սպալակներ են գանգաւորներ խմբելու համար մեր դրօշի շուրջ և ստեղծելու համար համակրանքի լայն մթնոլորտ: Այս բարոյական մթնոլորտն անհրաժեշտ է մեր գործի համար, ինչպէս նրութեան մթնոլորտը՝ բոյսերի աճման: Այն խուռներամ բազմութիւնները, որ ունկնդրում են Դաշնակցութեան խօսքը լինի բեմերից թէ մամուլի մէջ՝ թաղւած ուժեր ունեն, որ կարող են երեւալ մի օր. ուժեր, որ կարող են մի կողմից Դաշնակցութեան շարքերը լցնել հաւատարիմ կուսակիցներով, և միւս կողմից անսալով նրա կոչին՝ պայքարի մասնել նրա դրօշի տակ, երբ պարագաներն այնպէս բերեն, որ Դաշնակցութեան հերթական գրոհն իր Մրազիքի իրացման համար գանգաւորներն ըմբռնեն իբր կենսական և բախտորոշ մի գործ: Մեծ է գանգաւորն ոյժը և նրա բերած նպաստը մեր պայքարի օրերին, բայց գանգաւոր կուսակցութիւնն չէ և լինել չի կարող: Կրկնում եմ, կուսակցութեան ոյժը գանգաւորների մէջ չէ, այլ գանգաւորներ համախմբելու և պայքարի մղելու կարողութեան մէջ: Անհրաժեշտ է, որ հայ գանգաւորները ճանաչեն Դաշնակ-

ցութիւնը իբր կազմակերպիչ ու վարիչ մեծ պայքարների, իբր հաւատարիմ սպալակոյտը հայ ժողովուրդի, իբր դադափարի անձնէր և անշահանդիւր մարտիկներ, և համակրանքի թանձր չերտով պատեն մեր կազմակերպութիւնը: Այդ համակրանքն անհրաժեշտ է մեր խօսքն ազդու պահելու համար: Այդ համակրանքի ուժով է, որ նրանք խուռներամ արձագանք են տալիս մեր կոչին, երբ իրենց մթին և մեր պայծառ դիտակցութիւնը կուսութեան մասին զուգադիպում են իրար: Այդ համակրանքը, սակայն, արդիւնք է մեր անձնէր, անշահանդիւր և անշեղ գործունէութեան, որ կարիք չունի ճծնանքի և շողմուռութեան: Դաշնակցութիւնը կոչւած է գանգաւորները կրթելու և գիտակից ժողովուրդ դարձնելու, և ոչ թէ նրանց մթին ու ստորին հակումները շոյնու: Դաշնակցական գործում է ոչ այն պատճառով, որ գանգաւորները քաջ է ետեից, այլ այն պատճառով, որ այդպէս են պահանջում իր Մրազիքն ու Կանոնագիրը: Բայց քանի որ կուսակցութեան գործը բխում է իր Մրազից, իսկ Մրազիքը բանաձեւում է հայ ժողովուրդի կենսական պահանջների, ուստի գանգաւոր, որ ժողովուրդ է գալիս է մեծ պայքարի օրերին կուսու դաշնակցական մարտիկ կողքին և նրա դրօշի տակ: Գնահատելով ամէն կենսունակ ծիւլ, որ երևան է գալիս հանրային կեանքի ընդարձակ դաշտերում. չարհամարհելով ամենից համեստ ուժերը, որ կարող են մեր պայքարին նպաստել. մեր խօսքով՝ բայց մանաւանդ մեր գործով համակրանք ստեղծելով գանգաւորների մէջ, որ երբ առիթը գայ՝ յենկից նրան մեր Մրազիքը հետապնդելու համար՝ «դաշնակցականը» պէտք չէ մոռանայ երբեք, թէ իր բուն ոյժը իր գաղափարական աիպարի զորացման մէջ է. որ սակաւաթիւ դաշնակցական սպալակոյտը այն մակարդն է, որ կոչւած է մուկարդելու հանրային և ընկերական շարժումները մեր մէջ: Որ կազմակերպութեան յարատեւութիւնը, նրա ներքին մարութիւնը, նրա անդամների գաղափարական մաքրութիւնը, նրանց անշահանդիւր բարքն ու անձնէր գործն են բուն ուժերը, որ շարժում են գանգաւորները և նրանց նպաստով ու նրանց միջոցով պատմական դեր են կատարում հարութեան կեանքում:

Ն. ՀԱՆԳՈՑ

(Շարունակելի)

... Կոմունիստները և նրանց շահերում ապրող կոմսոմոնները կոիորդ են պատուում, թէ՛ Հայաստանում գերիզացիական տնտեսութիւնը բարձրանում է, հակայական քայլերով առաջ է գնում: Երեւի, այդ պարունները համեմատում են իրենց ոռճիկի հետ, որ, ճիշտ է, բարձրանում է հեղհեղհեղ, իսկ գերիզացիական տնտեսութեան մէջ ճիշտ հակառակն է տեղի ունենում. նա բոլորովին քայքայել է ու շարունակում է քայքայել: Նոր տնտեսական քաղաքականութիւնն էլ չօգնեց. ուսումնական կոմունիզմի առաջ թերած աւերը անընդհատ շարունակուում է: Փոխուում են միայն թայանի ձևերը, իսկ թայանը մտած է անփոփոխ: Այժմէս որ այսօր հայ գերիզացին մնացել է վերջը հուկ իր մերկ ու քաղցած հրեխաներով:

Փորձեցէ՛ք հարցնել գերիզացուն՝ «ո՞վ քանդեց զո չէն սուներ, ի՞նչ է կղան զո եղևերը», և նա սուսնց տատանելու կը պատահանէ ան քաշելով. «բոլշևիկները տարան... բոլշևիկները քանդեցին»... Այս է «գերիզացիական տնտեսութեան բարձրացումը»: Խօսենք օրինակներով:

Անա Գրախտը» (Դրախտը չկարծէ՛ք) — բամբակադործական ընկերութիւնը, որը գերիզացուն վարկ է տալիս բամբակ ցանելու համար: Այս դրամը տրուում է երկու նագով. մէկ ապրիլին՝ աշխատանքները սկսելիս, միւսը յունիսին՝ քաղհանի համար — ընդամենը 75 ռուբլի: Սակայն, գերիզացին այդ դրամը վերցնում է ոչ այնքան բամբակ ցանելու, որքան այդ 75 ռուբլով նոյն «Գրախտից» ալիւր կամ ցորեն գնելու համար. դրամի մի մասով միայն մշակում է բամբակ: «Գրախտը» ցորենը ծախում է ձեռնուող գնով — փութը 1 ու կէս ռուբլի — որպէսզի ռահադրուէ քաղցած գերիզացիներին, այլապէս սրանք ոչ մի գնով բամբակ չեն ցանի, քանի որ բամբակը ծախելու համար այնպիսի օրէնքներ են սահմանւած, որ գերիզացին միայն մնաս է տեսնում: Եւ գերիզացին ցանում է նագադոյն քանակութեամբ բամբակ, այնչափ, որ կարողանայ Գրախտից վարկ ու հաց ստանալ: Գերիզացին շատ լաւ դիտէ, որ բամբակ ցանել խորհրդային պայմաններում նշանակում է միշտ քաղցած մնալ, բայց ի՞նչ անէ, որ ցորեն ցանելու նմար չկայ, իսկ ապրել՝ պէտք է:

Ամբողջ ամառ մինչև աշուն, արևի կիրէլ ճառագայթների տակ Գրախտից ստացած ուր հացով գերիզացին իր ընտանիքով արիւն-ըտտինք է թափում, բամպակ մշակում: Գալիս է բամբակ հաւաքելու ժամանակը, հաւաքում են մի քանի անգամ: Հաւագոյն բերքը լինում է դեռեւտտինից 50 փութ: Կարավարական պաշտօնական զին նշանակւած է առաջին կարգի բամբակի փթիկն 5 ռուբլի, երկրորդ կարգի՝ 4ր. 30 կոպ., երրորդ կարգի՝ 3ր. 70կ.: Բամբակի խիստ մեծանորհ կայ. ո՛չ ոք գնելու իրաւունք ունի, բացի Գրախտից: Սէ ֆունտ անգամ կարելի չէ տալ ուրիշէ. գերիզացին պարտաւոր է իր ամբողջ բամբակը տալ Գրախտին, թէ չէ... Ձեկա:

Հիմա երեւակայինք, որ գերիզացու ցանած մի դեռեւտտինից ստացւել է 50 փութ առաջին կարգի բամ-

բակ, (թէ և կեսնքում այդպիսի բան չի պատահում. առաջին կարգի բամբակը կէսից աւելի չի լինում, մնացածը՝ երկրորդ և երրորդ կարգի): Ուրեմն, կը ստացել 250 ռուբլի: Այդ դոմարից պէտք է հանել 75ր. Գրախտի պարտքը, յետոյ 2է ռուբլի ջրի փող: Ձգարմանաք, որ մեզ մօտ ջուրը այդքան թանկ սպրանք է: Այս տարի միայն որոշ տեղեր է ժամանցրին. այսպէս, Վաղարշապատի այգիները ջրում են երկու գնով. Արագածից եկող ջրով ջրաձնիքի համար տունում է դեռեւտտինին 12ր., իսկ ջրաղղանի ջրով՝ 2էր.: Այս վերջինը թանգ է նրա համար, երեւի, որ առուն իրենք են վերանորոգել և անունն էլ կնքել են «Անիկեան ջրանցք»:

Ուրեմն, գերիզացուն մնաց 151ր.: Միւս ծախսերը դեռ չեն հաշուում, այդ էլ թող բոլշևիկներն իրենք հաշեն: Այդ 151 ռուբլով նա պէտք է հոգայ իր տան բոլոր ծախքերը: Խեղճը գնում է ցորեն գնելու — շուկայում ցորենի փութը 8-10 ռուբլի է, երկու անգամ աւելի թանգ, քան բամբակը: Երեւակայէք, որ գերիզացու ընտանիքը բաղկացած է 3 շնչից. առնենք ամենափոքր թիւը: Սոված չմեռնելու համար հարկաւոր է մարդագլուխ գտնէ 10 փութ, ուրեմն 30 փութ, որի համար անհրաժեշտ է 240-300 ռուբլի, իսկ գերիզացին ունի միայն 151 ռուբլի: Ի՞նչ անի խեղճը. գնում է 10-12 փութ ցորեն, իսկ մնացածով առնում է աւելի աժանոց մթերքներ՝ զետնանձոր, սոխ, կաղամբ և մի կերպ պահանք է իր գոյութիւնը: Իսկ հագուստի և ուրիշ տնտեսական ծախքերի մասին մտածելն իսկ անմտութիւն է...

Բայց, երևի, կը հարցնէք. «հապա այս գերիզացին անասուններ չունէ՞ր»: Այո՛, գերիզացիները շատ շատերը անասուն չունեն, բայց ենթադրենք, թէ մի քանի հատ էլ անասուն ունի: Օգուտ կա՞յ նրանցից: Ո՛չ, աւելի բոռ են գերիզացու համար: Եւ ահա թէ ինչու:

Ամենից առաջ անասունի կերը — ուտելիք չկայ: Կենդանիները կամ պէտք է գնան լեռը, կամ դռերում պտիս արածեն: Գռերում ուտելիք չկայ. ամբողջ օրը բառաչում են լեռի բլուրների վրա և իրիկուրը դատարկ կրծքով տուն գալիս: Լեռն էլ չեն կարող գնալ, որովհետև Հայաստանի լեռնային արօտատեղիների մեծ մասը վերապահւած է Արբրէշանից և Վրաստանից եկող ճուղերներին: Ամառանից գառ կայ և ձմեռանց կերը, որ սարսափելի թանգ է. 5 ֆունտնոց խոտի խորճը պիտէ 25-30 կոպէկ: Ցափազանց թանգ է և յարդը. մէկ փութը 1ր.—1ր. 20կ. եթէ 3 անասուն ունեն, երկուրը պէտք է ծախեն, որ մէկը կարողանաս պահել ձմեռը: Սրա վրա աւելցրում է պտեռանակ հարկը, տեղական սուրբերը, ապահովագրութեան դրամը, հօտադի վարձը ևն. ևն., այնպէս որ գերիզացին անճրկւած աշխատում է ազատել անասունից: Ամենքը վաճառում են, որով և անասունի գները շատ աժան են: Եթէ տուարի շուկայի մօտից անցնելու լինէք, կը զարմանաք՝ տեսնելով այնտեղի անասունների քանակը. որը մի եզ, որը մի կով, որը մի մատակ բերել է, որ ծախէ ազատուի, բայց գնող չկայ. մասագործներն են գլխաւոր գնողները՝ մորթիւում համար:

Գիւղացու այս սե զարդին աւելանում է և տուրքը: Բուրբի համար յայտնի է, որ ոնց էլ լինի այդ փողը աննկու են. քանի մնայ, այնքան շատ սողոս կը վերցնի: Լրացու տուրքի վճարման ժամկէտը, դրամ չկայ, զիւղացին ո՞րտեղից պիտի մուծի: Գնայ աշխատանք աւնի, բայց ո՞րտեղ. հազարաւորներ են գործադուրկները:

Տուրքի վճարման ժամկէտից 15 օր անցաւ, ահա Փինրաթին համադատասխան ծառայողը ցուցակը ձեռքին տնէ տուն է ընկնում, արձանագրում ու կնքում է զիւղացու տան իրերը: Եւ մի օր, նորին մարդը ցուցակը ձեռքին, վաղորօք փակցրած աճուրդի յայտարարութեան համաձայն, մի քանի բեռնակիր մշակների հետ ընկնում է դռնէ դուռ, հաւաքում է արձանագրած ու կնքած իրերն ու մթերքները — կապիտո, փալաս, թախտ, սեղան, պահարան, ցորեն, ալիւր, անասուն, սոխ — դեռնախնձոր և այլն — և աճուրդի է հանում:

Ինչ սիրտ մղկտացնող տեսարան ասես չի պատահում այդ աճուրդների ժամանակ, որքա՞ն աղիւր արցունք է թափում: Լալիս են մայրերը, լալիս են երեխաները. լալիս է խեղճ ու անձար զիւղացին: Ի՞նչ անի. ի՞նչ պիտի ուտի իր երեխան, ո՞ւր պիտի գնի...

Հիմա ենթադրենք, որ զիւղացին ոչ թէ բամբակ, այլ ցորեն է ցանում: Մի դեեսատինից 100-120 փութ ցորեն կը ստանայ, իսկ ծախքը բամբակի ծախքից աւելի չէ: Եթէ հաշուենք շուկայի գներով, այդքան ցորենը կարժենայ 1000-1200 լուրի, այսինքն, առնապէս, չորս անգամ աւելի, քան բամբակացուից: Այդքան դրամով կարելի է թէ՛ պետական տուրքը վճարել և թէ՛ ընտանիքը մարդավայել պահել: Յարողով էլ ապահովել անասունի կերը: Կարելի է 1 դեեսատինից աւելի էլ ցանել, քանի որ ցորենի մշակութիւնը աւելի հեշտ է, քան բամբակինը: Ինչո՞ւ, ուրեմն, չի զարգացնում ցորենի ցանքը: Ինչո՞ւ զիւղացին գերադասում է օրերով հերթի կանգնել պետական փոստի առջև լրուր, երկպտացորենի ու զարու խոտնուրդից թխած գոյնզգոյն անհամ հաց ստանալու համար և չի շատացնում ցորենի արտերը:

Հապա մի թող փորձէ. կարծում էք՝ հալալ կուտի՞ իր զբոյնքի պտուղը: — «Սպասի՛ր, քեզ ցոյց կը տանք, «կուլակ», «չահագործող», «վաշխառու»: ձայնագուրկ կաննեք, հողերը կը խլենք, անհատական տուրք կը դնենք, այնպէս կաննեք, որ ջանդ դուրս գայ, որ «վա՛յ, տէ՛ր» կանչելով մնաս» — ասում են զիւղում գտնուող կոմունիստներն ու կոմսոմոնները՝ զիւղի կարմիր իշխանաւորները: Եւ խեղճին այնպէս են հուպ տալիս, որ ցորենը կոկորդում է մնում: Յորենն էլ են խլում, յարդն էլ հեռն ու զիւղացուն էլ ձայնագուրկ անում: Նոյնը և այգեգործութեան մէջ:

«Ձայնագուրկ լինելը» հասարակ բան չկարծէք. նա խոշոր տնտեսական հետեանքներ ունի: Հարցը այն չէ, որ մարդ չի կարող մասնակցել ընտրութիւններին — այդ տեսակէտից արդէն ամենքն էլ ձայնագուրկ են,

հէնց նրանք, որոնք, իրր թէ, քէ են տալիս: «Ձայնագուրկը» զժբախտ արարած է. նրա կրիտային զգրուց չեն ընդունում, զիւղուրթեան չեն ստանում և փոխարէնը 50-500ր: զիւղուրթեան տուրք են վերցնում, որի համար ծախում են նրա տունն ու այգին. կօօպիւրատիւր անգամ չեն արձանագրում, որով զրկում են անհրաժեշտ պիտուրքից ու մթերքից, քանի որ մասնաւոր աւուտուր չկայ և ամէն բան կենտրոնացած է կառավարական կօօպիւրատի խառնութիւնում, դնում են անհասարական ծանր տուրքեր — մի խօջողով, «ձայնագուրկ» — ը կէս մարդ է: Այդ պատճառով զիւղացին դերագատում է սոված մնալ, անասունը մորթիլ, արտն ու այգին թողնել անմշակ, միայն թէ՛ «կուլակ» շայտարարի ու ձայնագուրկ շղաթնայ: Ո՞վ որ ուտելու կուլտ հաց ունի և գոմում մի քանի գոյգ լծկան, — արդէն կուլակ է:

Կոմունիստները ժողովրդի աչքն են կոխում շինարարութիւնը, որից «ապշած է բովանդակ աշխարհ»: Բայց չարքաչ, աշխատաւոր ժողովրդին, զիւղացուն ի՞նչ այդ շինարարութիւնից:

Ելեկորակայան են շինել, լոյսը իրենք են վայելում, իրենց փառաւոր սենեակներն են վայելում: Ո՞ր զիւղացին կարող է լուսաւորել իր իրճիթը, երբ ուտելու հաց չունի:

Կենտրոնական վայրերում չէնք են շինում — ո՞վ է օգտուում այդ չէնքերից. կոմունիստներն ու նեպոմանները, բայց ոչ երբեք զիւղացիները:

Հիւրանոց են պատրաստում դարձեալ իրենց համար — աշխատեցրեց ու մի կտոր հաց փնտնելու համար քաղաք գնացող զնացող զիւղացին օգուր է այդ հիւրանոցներից, կարող է մի գիշերուր համար 3 լուրի տալ, երբ իր կապերուն ու կաթսան աճուրդով են ծախում հարկերի փոխարէն:

Ջրանցքներ են անց կացնում, իսկ ջրը դոյլը արժէ կէս կուպէկ և մի դեեսատին հողը ջրում է 12-24 ը: Ենթակայացումները, երեկոյթները նոյնպէս իրենց համար են. քաղցած մարդը երբի ու թատրոնի մասին չի մտածի:

Դպրոցներում, մանկապարտէզներում, համալսարաններում ամենից առաջ կոմունիստներն են տեղ դրաւում, կոմունիստներէ ու չեկիստներէ երեխաները:

Ձեկայի չէնքեր ու բանտեր են շինում: Մի խօջողով, խորհրդային շինարարութիւնը ի նկատի ունի ոչ թէ ժողովրդի բարեքը, այլ կոմունիստների ու իշխանաւորների շահը: Բարձրեկան իշխանութիւնը թշնամի է զիւղացիութեան, աշխատաւոր ժողովրդի: Այդ է պատճառը, որ բանտերն ու Ձեկայի փոզանները լինն են ապստամբեան համար մարտնչող հապարուր երիտասարդներով, որոնք, Հայաստանի ամբողջ ժողովրդի հետ, հաւատում են, որ բռնապետութեան օրերը համբուած են և ապստամբիւնը հեռու չէ...

SULLIOTTI

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի
Թիւն արժէ 2 Ֆր. 50 անտ.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հանգնե՛
M¹⁰ S. AGOPIAN.
5, rue des Gobelins, 5. Paris (13^e)